



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Lün

85



L1-9-9-9



Հ. Այվազ


ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

~~Խ~~

ՍՐԲՈՅՆ ԱԼՈՉԻՈՍԻ

ԳՈՆՉԱԿԱՑ

ՊԱՇՏՈՆԻ ՄԱՆԿԱՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲՆ ԶԱԶԱՐ

1855

ՕՃ-28

1993.

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄՈՒՋՈՒՄ ՀՅՈՒՂՈ

ՑՈՎՈԶՅՈՒՔ

ՅԻՇԱՏԱԿ

ՅԱՎՈՅԱԴԱՐՅԱԼՅՈՅՅՈՅՅՈՅ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀՈԳԻՈՅ

ՊՈՒՐԻՍԵԱՆ

ԲԱՐԵՊԱՏՏՈՒՆ ՏՈՀՄԻՆ

ԹԱՇՎԱՐԻ

ԴԱՅԱՐ ՅԱԴԱՐԱՐ

ՀԱՅԻ

485-60

ՀՀ 90





Ս. ԱԼՈԶԻՆ



# ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՄՐԲՈՅՆ ԱԼՈՉԻՈՍԻ ԳԻՐՎԱ ԱՌԱՋԻՆ

ԱԽԵՐԻ ԱԼՈՉԻՈՍԻ ՎԱՐՔԸ  
ՄԻՆՉԵՒ ԻՐ ԿՐՈՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ



## Ա.

Տէր լիալառուաց զհայր 'ի լիրայ  
ծննդոց, և զիրաւուն մօր հաստա-  
տեաց 'ի լիրայ որդոյ :

ԱԽԵՐԻ

1. Տարւուն ծաղկանց ամսոյն  
մէջ՝ զեղեցիկ օր մը զեղեցիկ ժամ  
մը, որ կապուտ երկինք՝ կարմրիկ  
ու ճերմակ ամպերով ծիծաղին, եր-  
կիրս կակուղ ու խոնաւ առաւօտուն  
լոյսը ու ցողիկը ծծէ, և ծաղկըներն  
թմրած թերթերնին բանան արեւուն

զէմ, և անտառին ծայրէն ինչուան  
'ի մարզագետին կամաց կամաց եր-  
գով, մայլելով, արձագանգով խօ-  
սին, բլուրները սկսին իրենց ըս-  
տուերն տարածել. երբ զանազան  
արարածոց անուշիկ ճայնն, հոտն  
ու դոյնն, մէկ տեղ խառնած՝ բնու-  
թեան վրայ տարածէ զուարթու-  
թեան հոգին. ով կըրնայ առանց  
սիրտը թունդ ելլալու, առանց ըզ-  
մայլելու տեսնալ Աստուծոյ զրկած  
գարունն : Բայց այդ ճխացող ար-  
տերուն մէջ ալ ով այնպէս կըրնայ  
զուարճանանալ ինչպէս տղայ մը՝ ո-  
րուն հասակը, զբօսանքն, անմե-  
ղութիւնն կարծես թէ կ'ըսեն իրեն  
թէ ատ զեղեցիկ օրերն՝ քեզի հա-  
մար են :

2. Ալողիոսի սրբութեամբ ծաղ-  
կած տղայական հասակն ալ այն-  
պիսի զուարճալի տեսարան մը կ'ըն-  
ծայէ ամենուն, բայց աւելի իրեն  
հասակակցացն՝ որոնց մասնաւոր  
պաշտպան ճանչցուած է : Աստու-  
ծոյ ճեռքով շինած հայլի մ' է իր  
վարքը, ուր ամէն հասակի ամէն վի-

ճակի տէր մարդ ալ կը ընայ տեսնալ  
անոր պայծառութիւնը և իր բիծե-  
րը : Սակայն աւելի պիտի ուրախա-  
նայ տղայ մը յիշելով թէ իր հասա-  
կին մէջն ալ կը ընայ եղեր մէկը :  
այնպէս Աստուծոյ հաճոյ և մարդ-  
կանց օրինակ ըլլալ : Անոր համար  
առ սրբոյն վարքը ամէնուն համար  
ալ զրած ըլլալով, մասնաւոր քեզի  
կ'ընծայեմ, Գրիգորիկ, որ քու վի-  
ճակիդ պարտքերուն մէջ հիմքեւոց  
սկըսիս կատարելութեան ճամբան  
կոխել, քեզի ընկեր ունենալով  
սուրբ Ալոգիոսը :

Յ. Աս երջանիկ տղուն հայրն էր  
Մանղուայի մէջ Գասղիլիոն ը-  
ռուած տեղւոյն Մարգէզն, Գէր-  
րանդէս Գանղակա կամ Գոնծակայ  
անունով. մայրն ալ Բիշմոնդէի իշ-  
խանին աղջիկն էր, անունը Մար-  
թա Թանա . որոնց մեծ մխիթարու-  
թիւն պարզեց Աստուած զԱլո-  
գիոսն : Կը զանդախին շատ ծնողք  
իրենց զաւակացը անկրթութեան  
վրայ . կարծեմ առանց մտածելու  
թէ զանոնք առջի կրթողն ով պիտի

ըլլար . ամէն տղու սիրու կակուդ  
արտի մը կը նմանի , ինչ հունտ որ  
ընկնի վրան՝ շուտով մը կը բռւսցը-  
նէ , թէ աղէկ և թէ գէշ :

4. Աս բանս լաւ մտածելով Մար  
թա , զեռ մայր չեղած շատ աղօթ-  
քով և պահքով Աստուծոյ և սուրբ  
Աստուածածնայ կ' աղաչէր ու կ' ը-  
սէր . Թէ որ կ' ուղէք որ ես զաւկի  
տէր ըլլամ , արքայութեան արժանի  
որդւոյ մայր ըրէք զիս : Անկէ ետե  
ալ միշտ աղաչանքէն չիղաղրելով  
ծնաւ 1568են մարտի 9են , իր անդրա-  
նիկ զաւակը , շատ գժարութեամք  
աշխարհ.ք բերելով , անանկ որ ծնա-  
նելու ատեն՝ տղան հիմակ կը մեռնի  
ըսելով մէկէն մկրտեցին , անոնն  
դրին Ալոգիոյ կամ Լուիճի :

5. Բայց չմեռաւ այն օրէնեալ  
զաւակն , չմեռաւ Ալոգիոս , որ Աս-  
տուծոյ փառքը պիտի աւելցըներ  
երկրիս վրայ . ամէն ատեն բարի  
օրինակ ըլլալով և մարդկանց նա-  
խանձելի , քեզի ալ , ով Գրիգորիկ ,  
մասնաւոր պաշտպան պիտի ըլլար :  
Կարծեմ թէ առ մեռնելու վտան-

գովին՝ Աստուած միայն ուզեց ցըցը-  
նել՝ թէ ան սիրելի հոգին ծնած ա-  
տենէն ալ կը փափաքէր իրեն կան-  
չելու. կամ թէ ուզեց որ ատ պատ-  
ճառով տղան ծնած չիծնած սրբուի  
Ադամայ մեղքէն, և առջի շունչին  
հետ սրբարար շնորհքն ծըծէ. կե-  
նացը առջի վայրկենէն՝ի վեր ար-  
քայութեան ժառանգ ըլլայ :

## Բ

Որդեակ տուր ցիս զսիրտ քո :

ԱՌԱԿ

4. Պղտիկ ու տկար տղեկն ալ  
որ գեռ չիկըրնար ինքիրմով ասղիս  
անդին դառնալ, ունի հոգի մը Աս-  
տուծոյ ծառայութեանը համար ըս-  
տեղծուած. գեռ չիկըրնար ճանչնալ  
իր պարտքը, բայց ծնողքը որ իրեն  
մարմնաւոր կենացը պատճառ ե-  
ղան, պէտք է որ հողենոր կեանքն  
ալ պղտիկուցմէ հոգան : Ահա Ալո-  
գիոս գեռ ոտք չէր ելած՝ երբ իրեն

մայրը իրեն սորվեցուց ձեռուըներն  
խաչ բռնել, Յիսուսի, Աստուա-  
ծածնայ անունը տալ քիչ ատենէն  
աղօթքներ ալ ու ծունկ դնել. տղան  
ալ կարծես իր հոգիէն ճայն մը կը  
լսէր թէ ես միայն Աստուծոյ հա-  
մար ստեղծուած եմ, ու յօժարու-  
թեամբ կը կատարէր սովրածները .  
շատ հեղ նոր ոտք ելած ատենը ,  
անկիւն մը քաշուած աղօթքի ծունկ  
ինկած կը դտնէին, զինքը : Ան ա-  
տենէն երբ լսէր թէ աղքատ մը  
կ'անցնի , դուռը կը վազէր որ բան  
մը տայ :

2. Եօթն տարուան որ եղաւ ,  
փործ մարդու մը պէս լաւ ճանչցաւ  
որ զԱստուած սիրելէն դատ հար-  
կաւոր բան չիկայ աշխարհքիս վրայ ,  
ու միաքը հաստատեց բոլոր կեանքն  
Աստուծոյ տալու . ինքնիրէն ա-  
ղօթքներ ընտրեց՝ որ իր դրած կար-  
գովը և ժամանակովը ընէ : Աղօթ-  
քի ատենն ալ այնպէս անշփոթ ու  
պատկառանօք կը կենար որ տես-  
նողներն անթե հրեշտակ մը կը  
կարծէին զինքը :

3. Ան տարեցը իմացաւ երանելի  
տղան որ մարդս երկու տարբեր  
գոյութիւններէ է, հոգի և մարմին .  
և թէ մարմինն հոգւոյն թշնամի է,  
հոգւոյն ըսածը ետ կը թողուիր հեշ-  
տութիւնն կ'ուզէ : Ալոզիոս հոգւոյն  
միտք դնելով սկսաւ ամենայն մար-  
մնոյ դիւրութեանց դէմ կենալ . ին-  
չուան՝ թէ որ ծնկան վրայ գալու  
համար ծնկին բարձ դնէին , վրան  
ծունկ չէր դներ : Առվորութիւն ալ  
ըրաւ , քննելու ամէն օր իր ըրածը  
չըրածը : Որչափ յստակ ըլլայ ջուրն,  
այնչափ յայտնի կ'երեայ մէջի ե-  
ղածն . իսկ Ալոզիոս երկայն ատեն  
քննելով իր պայծառ սիրտն , հա-  
զիւ կրցաւ երկու բիծ գտնալ :

4. Ի՞նչ արդեօք . մէյ մ' որ հօրը  
հրամանովը զինուորութիւն սորվե-  
լու ատենը , օր մը առանց հարցը-  
նելու վառօդ առեր՝ և իր պղտի  
հրացանովն այնպէս պարպեր էր ,  
որ մազ մնաց իր վրայ պիտի դառ-  
նար կրակը : Մէյ մ' ալ որ զինուոր-  
ներէն անշնորհք խօսք մը լսեր ու  
քանի մը անզամ առանց հասկը-

նալու ըսեր էր . աս ալ զեռ հինգ  
տարուան չեղած ատենը :

5 . Ասոնք որ իրեն էն մեծ մեղ-  
քերն էին , անանկ խոց մը եղան  
սրտին՝ որ բոլոր կեանքը կարճ ե-  
րեցաւ զանոնք լալու . հազար ան-  
գամ խոստովանեցաւ , ու պատմեց  
որիշներուն ալ , որ զինքը մեղա-  
ւոր ճանչնան : Դու , Գրիգորիկ ,  
ինչ կը ճանչնաս զԱլոզիոս , որ բո-  
լոր կեանքը աս երկու կարծած  
մեղքերուն համար ապաշխարու-  
թեամբ անցուց . թէ որ ինքն իրաւ-  
ցընէ ամչնալու մեղք մը ըրած ըլ-  
լար , արդեօք ցաւէն կրնա՞ր զի-  
մանալ :

6 . Մէջ մ' որ զԱստուած սիրելը  
պարտք սեպեց Ալոզիոս՝ ճանչցաւ  
թէ զբոսանքը փուժ բան է , զուար-  
ճութենէ ետ կեցաւ . իր խաղալիքն  
էր՝ նոր նոր Աստուծոյ ծառայելու  
ճամբայներ զտնալ . աշխարհք չի-  
տեսած աշխարհքէ քաշուեցաւ . ե-  
տեսնալով որ աշխարհքէ զանո-  
ղը՝ կը փախչի աշխարհքէ , միտքը  
զրաւ որ ինքն ալ հեռանայ՝ կրօնա-

որ ըլլայ . մօրն ալ իմացուց մտա-  
ծածը :

7. Տասը տարուան եղած ատենը  
նորէն առաջադրեց , որ ամէն օր  
լաւ մը քննէ իր ըրածը չըրածը և  
իր բնութիւնը , որպէս զի ինչ կերպ  
պակսութիւն որ ալ զտնէ շտկէ .  
իրեն երեցաւ որ խօսելու ատեն եր-  
բեմն աղէկ կշռելով պատասխան  
չի տար . անկէ վերջը նայեցաւ պա-  
րասլ տեղ ամեննին չխօսելու , ծան-  
րութեամբ պատասխան տալ ու առ-  
նել : Ո՞վ որ ասանկ ինքզինքը քննե-  
լու սովորութիւն չունի , իր կեանքը  
կը նմանի վազուկ ջրի մը , որ միայն  
կ'անցնի , առանց խմանալու թէ ուր  
կ'երթայ ինչ կ'ըլլայ :

8. Ծնողացը անանկ հնազանդ  
էր ինչպէս որ Աստուած կ'ուզէ .  
նաև ծառայից հետ խօսելու ատեն՝  
հրամայելու կերպ չէր բանեցըներ .  
խնդրեմ , կ'ըսէր ծառայներուն , աս  
բանս կրնա՞ս ընել . թէ որ քեզի  
ծանրութիւն չէ աս բանս ընէիր .  
անանկ որ ծառայները կ'ամչնային  
իր խոնարհութենէն : Ո՞րչափ նման

չէր ան տղոյ , որ զեռ հասակնին  
չառած՝ հրամայել կը սկըսին . կամ  
անոնց որ կարծեն թէ ամենէն  
ծանր բանն հնազանդիլն է . և չեն  
զիտեր որ հնազանդելէն ապահով  
ճամբայ չի կայ :

9. Տասնումէկ տարուան էր եր-  
բոր առջի հեղ խոստովանանք ըլ-  
լալու գնաց . ան իրեն կարծած եր-  
կու մեծ մեղքերուն այնչափ սիրտը  
կոտրած էր , որ ամէն օր մեղքով  
ասլրած անդգամի մը պէս՝ երբոր  
մօտեցաւ քահանային քով , լեզուն  
կապուեցաւ , աչուըները մըթնցան ,  
մարեցաւ ինկաւ խոստովանահօրը  
ոտքը : Վերջը սիրտ առած խոստո-  
վանեցաւ ու փառք կու տար Աս-  
տուծոյ որ զինքը արժանացուց այն  
սուրբ խորհրդոյն :

## Փ

Եղի պահապան աշաց խեց

ՅՈՒ

1. Ջերրանդէս՝ ԿԱԼՈՂԻՈՍՆ ու  
անոր պղտի եղբայրն որուն անունն  
էր Ռոտոլփոս մէկ տեղ Գիորենցա  
տարաւ զպրատուն զրաւ, հոն Ա-  
լողիոսի մեծ ջանքն եղաւ, որ ատեն  
դողնայ հոգենոր ճամբռն մէջ աւելի  
առաջ երթալու։ Ակսաւ մէկ նոր ու  
աւելի տաք ջերմեռանդութիւն մ' ալ  
սուրբ Աստուածածնայ. որ երթա-  
լով անանկ աւելցուց, որ երբոր  
Աստուածածնայ վրայ խօսք կ'ըլ-  
լար՝ անկարելի էր որ սիրտը չել-  
լեր։ Գրիգորիկ, մօրմէդ անուշ՝ սի-  
րելի ու հարկաւոր մէկը ճանչցեր  
ես պղտիկութեանդ ատեն. ահա  
մարդն ալ իր տկարութեամբը միշտ  
տղայ է. միշտ կարօտ է ասանկ  
մօր մը, որ է սուրբ Աստուածինն։

2. Հաստատ ճանչցաւ ԿԱԼՈՂԻՈՍ,

1\*

որ Աստուծմէ վերջը սիրելի բան  
Աստուածածինն է, բոլոր կեանքը  
Աստուծոյ ընծայած՝ Աստուածած-  
նայ ընծայ բերաւ անոր սիրելի ող-  
ջախոհ մաքրութիւնը. չափահասի  
խելքով մտածեց կուսութեան ինչ  
ազնիւ փափուկ բան ըլլալն, ու ա-  
նոր դէմ եղած հազար ու մէկ վր-  
տանզներն . ելաւ զնաց Աստուա-  
ծածնայ աւետման եկեղեցին, հոն  
ուխտ ըրաւ Աստուածածնայ իրեն  
նման միշտ կուսութիւն պահելու :

3. Աս ուխտին պատճառովը սկը-  
սաւ նոր զգուշութիւններ, նոր խըս-  
տութիւններ ընել. անկէ վերջը չէր  
թողուր որ ծառայները զան զինքը  
հազուեցընեն, ինչպէս որ սովորու-  
թիւն էր . հանզստութիւնը իրեն  
նեղութիւն կը սեպէր, նեղութիւնը՝  
հանզստութիւն . կը թողուր ամէն  
զիւրութիւն, ոչ խաղի կ'երթար և  
ոչ թէատրոն :

4. Գիտէր որ շատ հեղ և զրեթէ  
ամէն զգայութենէ աւելի աչքն է  
որ զմարդ փորձութեան մէջ կը ձղէ.  
անոր համար ինքն ալ անանկ զգու-

շութիւն մը զրաւ աչքին՝ որ ինչուան  
մօրը հետ խօսելու ատենն ալ՝ վար  
կը նայէր։ Առորք Աստուածածին ալ  
ասոր փոխարէն զԱլողիոս ամէն  
այն առաքինութեան զէմ եղած  
փորձանկներէն պահեց, թէ ար-  
քունեաց մէջ, թէ հօրը տունը ե-  
ղած ատենը, և թէ վանքը ինչուան  
որ մարմինը մաքուր զզեստի մը պէս  
վրայէն թօթուելու հրեշտականման  
հողին վեր թռաւ։

## Դ

Փրկէ տէր ի վտանգաց զծառայս իւր

ՍՏԱՄՊՈՍ

1. Յիորենցայէն Յերրանդէս  
Դրկեց զԱլողիոս իրեն կնքահօրն  
քով, որ էր Մանդուայի դուքսը.  
Հոն աւելի շատցուց Ալողիոս իր  
աղօթքներն ու ճգնութիւններն :  
Վրան հիւանդութիւն մ' ալ եկաւ՝  
որ ատեն ատեն զինքը կը չարչըր-  
կէր. ասոր դեղ քիչ ուտելն է ըսե-

լով, սկսաւ անանկ ժումկալութիւն  
մը քիչ ուտելու՝ որ շատ հեղ օրուան  
կերածը հաւկըթէ մը աւելի չէր ըլ-  
լար։ Կերակուրն մարմինը պահե-  
լու համար, և ոչ զուարճացնելու  
համար ըլլալը շատ լաւ ճանչցեր էր։

2. Հայրը օդ փոխելու համար  
զինքը Գասդիլիոն բերել տուաւ .  
հոն ալ իր բռնած ճամբայն չիթո-  
ղոց. անոր համար անանկ վա-  
տուժաւուտկարացաւ ստամոքսն,  
որ անկէ վերջը թէ և ուզեր՝ քիչ  
մը ծանր կամ քիչ մը աւելի բան  
չէր կրնար ուտել։ Կը սիրէր քա-  
շուիլ իր սենեակը աղօթքի ու սըր-  
բոց վարք կարդալու հետ ըլլալով։  
անով քանի կ'երթար սիրտը կը վա-  
սուէր Աստուծոյ սիրով։ Երկրիս  
սէրը աչքին չէր երենար, ու ան ա-  
տենէն որ տասուերկու տարուան  
էր՝ մտածեց որ Գասդիլիոն երկրին  
ժառանգութիւնը՝ որ իրեն պիտի  
ինկնար՝ իր եղբօրը թողու։

3. Աս առանձնութեանը մէջ ի-  
րեն զուարճալի զրօսանք մը ըրաւ  
մտածական ընելն, որ մտաւոր ա-

զօթք մ' է ամէն աղօթքէ վեր . ամէն  
օր աչքին առջին կը բերէր Քրիս-  
տոսի չարչարանքն ու Աստուծոյ  
սէրն . խորոնկ մտածելով կը սկսէր  
լալ ու ողբալ . անանկ որ շատ հեղ  
ծառայներն կը վագէին զրանը ծա-  
կէն կը նայէին թէ ինչ կայ , կը  
տեսնէին որ իրենց սիրելի տիրուկն  
դետնի վրայ ծնկի եկած աչուր-  
ներն ու ձեռքերն երկինք վերոցած  
բոլորովին մտքով յափշտակուեր է .  
Դիմացը կու զային ձայն կու տային ,  
չէր իմանար :

4 . Աւելի կը վառէր Աստուծոյ  
սիրով քանի որ կը լսէր Հնդկաս-  
տանէ եկած քարողիչներուն նա-  
մակներն , ըրած քարողութիւննին ,  
կուապաշտներուն զարձը . կ'ուղէր  
որ ինքն ալ մէկէն թոշի երթայ ան  
բարբարոս մարդկանց աւետարան  
քարողէ . բայց որովհետեւ ձեռքէն  
չէր զար , սկսաւ տղոց ու աղքա-  
տաց ու տանը ծառայներուն քրիս-  
տոնէական վարդապետութիւն սոր-  
վեցընել . անոնք ալ սուրբի խօսքի  
պէս բսածները կը լսէին : Կրակ է

Աստուծոյ սէրը , երբոր մարդուս  
սրտին մէջ բորբոքի՝ ու բոցը դուրս  
կը տարածուի զուրիշներն ալ այրել  
կ'ուզէ :

Տ . Անզամ մը Ա . կարոլոս Պո-  
ռոմէոս Միլանի անուանի արքե-  
պիսկոպոսն եկաւ Գասղիլիոն , տե-  
սաւ աս տղան , ու ինչպէս սրբոց  
սովորութիւնն է , զմայլեցաւ Ալո-  
ղիոսի սրբութեանը , Ալողիոսն ալ  
Պոռոմէոսի վրայ կը զարմանար :  
Հարցուց իմացաւ որ տղայն զեռ  
սրբութիւն չէ առած . ուզեց որ շու-  
տով այն սուրբ սիրտը իր սիրելի  
Յիսուսին զիրկը տայ . յորդորեց  
զինքը , իրեն հետ պատրաստուե-  
ցաւ , ու իր ձեռքովն առջի հեղ հա-  
ղորդ տուաւ անոր : Ո՞չ , Ալողիոս  
կրնա՞ր ասկէ փախազելի բան ու-  
նենալ , կամ Յիսուս ասկէ՞ ազւոր  
սիրտ մը զտնել : Անկէ վերջը Ա-  
լողիոս ստէալ ստէալ սրբութիւն  
կ'առնուր , տեսնողներուն սիրտը  
կը շարժէր . ինչպէս խոստովանան-  
քի ատեն ալ խոստովանահայրը կը  
լացընէր . իսկ իր սրտին կրակը

իմանալու համար, ով Գրիգորիկ, պէտք էր իրեն նման սուրբ մը ըլլայիր, որ աղէկ մը զիտնայիր թէ ինչ ըսել է, Ճաշակեցէք և տեսէք ոի քաղցր է տէր:

6. Յերրանդէս տեսնալով որ տղայն միշտ կը կխկխայ հիւանդութեամբ, իր Մօնֆերրադոյ ըսուած երկիրը բերել տուաւ բոլոր ընտանիքով. կառքով Դիշինոյ գետը անցնելու ատեն՝ ջուրը եւելօք բարձր ըլլալով զարկաւ կոտրեց կառքը. կէսը՝ որուն մէջն էր մայրն ու Ռոտոլիոս՝ ցամաքը հանեցին ձիերը, մէկալ կէսը ուր էր Ալոգիոս ու իր դաստիարակը՝ Ջրերը տարին. ու երբոր խղղուելու մօտ էին, Աստուած օգնութեան հասաւ իր սիրելոյն, կառքին կտորը գետին մէջ մեծ ծառի մը սլլուեցաւ. հոն եկան ազատեցին զանոնք, որ մէկէն ժամ մը մտան Աստուծոյ շնորհակալ եղան:

7. Մէկ օր մ' ալ Ալոգիոս սաստիկ զլխու ցաւ ունենալով կանուխէկ անկողին մտեր էր. մէյ մ' ալ

միտքը ինկաւ որ աղօթքին մէկ կտորը չէ ըստ ճրագ բերել տուաւ անկողնին քով, աղօթքը լըմնցուցածին պէս քունն ալ վրայ հասաւ. մոմը հատաւ, անկողնին վարագոյրները բռնկեցան, տաքութիւնը զարկաւ Ալողիոսի առանց բոց ելլելու. ան ալ կէս քուն կէս արթուն կը կարծէր՝ թէ ջերմի տաքութիւն է խմացածը. բայց տեսնալով որ չափաղանց է՝ դուրս ցատքեց, տեսաւ կրակը, սկսաւ կանչել. մէկէն անկողինը մոխիր դարձաւ. անանկ որ մէկ երկու վայրկեան ալ ուշանար Ալողիոս, ծուխէն սլիտի խղղուեր:

Ե

Մի սիրեք զաշխարհ և մի որ ինչ  
յաշխարհի և

ՅՈՎ. ԱՒԵՏ.

1. Հայրը կը պատուիրէր Ալո-  
գիոսի որ առողջութեան համար՝  
առ ճգնութիւններէն ետ կենայ,  
ու կ'ուզէր որ զուարձութիւններու-  
ետեւ ըլլայ. բայց ինչ զուարձու-  
թիւն կրնար ունենալ այն՝ որոն  
զուարձութիւնն էր միայն հոգեոր  
կրթութիւններ ու զբօսանք, և ու-  
զած տեղին՝ կրօնաւորներուն վան-  
քը երթալ. քանի որ կը տեսնար  
անոնց աշխարհէ վախչիլը ու հան-  
դարտութիւնը՝ այս, Երբ ես ալ  
անոնց պէս սլիտի ըլլամ կ'ըսէր,  
ինչ օգուտ է սա ունեցած կարճ  
կեանքերնիս աշխարհիս ունայ-  
նութեանցը տալ. պէտք չէ որ ա-  
մէն վայրկեաննիս ալ Աստուծոյ  
նուիրուած ըլլայ. աշխարհականք

Հանդստութիւն կարծելով նեղութեանց խաղալիկ են . աս կրօնաւորները նեղութիւն փնտոելով զրտեր են իրենց ճշմարիտ հանգիստը . ինչու ես ալ չեմ թողուր իմունեցածս չունեցածս որ կարենամ միայն Աստուծոյ ծառայել :

2. Գիշեր ցորեկ կը մտածէր կ'աղաչէր Աստուծոյ որ իրեն ճամբայմը ցուցընէ, մէյ մ' ալ սրտին նորէն ազդումն եկաւ որ կրօնաւոր ըլլայ . աս բանս որոշեց մտքին մէջ . բայց թողուց որ մեծնալով աւելի հասուն խելքով ընտրէ իրեն յարմար կրօնքմը . բայց ան ատենէն իրը թէ կրօնք մտած ըլլար՝ նոր ճղնութիւններ աւելցուց . ինչպէս , ձմեռը ցրտէն ձեռուըները՝ ոտուըները ճաթուտելուն համար սենեակը կրակ կը դրնէին , անկէ վերջը ոչ կրակ կը դնէր և ոչ եղ կը քսէր :

3. Միլան մեծ հանդէս մը սլիտի ըլլար հեծեալներու , Ֆերրանդէս պէտք էր որ հոն զտնուի . զԱլոգիոս ալ հետը տարաւ անոր կամքին դէմ . անիկայ հանդէսին ատե-

նր գնաց զինուորներուն ետին կեցաւ՝ ջանալով որ զուարճանալու բան մը չի տեսնէ. ուրիշները հեռու քաղքըներէ թափեր էին զրօսանքի համար, Ալողիոս ճզնութեան համար եկեր էր. ուրիշները իրաւբան մը տեսան, բայց ի՞նչ եղաւ տեսածնին: Ալողիոս բան մը չի տեսաւ՝ բայց առաքինութիւն մը աւելցուց. անոնց վայելը ժամ մը չի քըշեց, բայց Ալողիոսինը դեռ կը քշէ:

## Զ

Բազում նեղուրեամբք պարու և մեզ  
մտանել յայն հանգիստ

ՊՕՂ. ԵՌԵՎ. Հ.

1. Ալողիոս Գասղիլիոն դառնալէն վերջը կարգ դրաւ որ շաբաթը իրեք օր ծոմ բռնէ. ուրբաթ օրը միայն հացով ու ջրով կ'անցընէր, թէպէտ կերածն ալ ութը տրամէն աւելի չէր. անանկ որ լսողը կը զարմանար թէ ինչպէս կրնայ ա-

սլրիլ անով . բայց աստուածասէր  
տղան ան ալ շատ կը սեպէր , որ-  
պէս զի խմանանք թէ կեանքերնիս  
պահելու համար քիչ մը ու պարզ  
կերակուր մ' ալ բաւական է . և թէ  
սլղտիկ կարծած որկրամոլութիւնն  
ալ զզուելի բան է : Չկայ մէկ գործք  
մը որ զմարդ աւելի կենդանինե-  
րուն նմանցընէ՝ ինչպէս որկրամո-  
լութիւնն :

2 . Ծոմը ու պաքը բաւական չի-  
սեպէց իր անմեղ մարմինը տան-  
ջելու , սկսաւ ինքը զինքը խարազա-  
նով ծեծել . նախ շարաթը իրեք ան-  
դամ , վերջը վերջը օրը իրեք ան-  
դամ , և անանկ ալ սաստիկ՝ որ ա-  
մէն հեղ մարմինը կը ծակծըկէր :  
Քանի՛ անդամ ան արիւնոտ շա-  
պիկներն տարին ծառայները մօրը  
ցըցուցին . Խշխշոքէն սիրտը փըր-  
թաւ , տեսնալով իր փափուկ զաւ-  
կին սուրբ արիւնը՝ որուն վրայ այն-  
շափի կը դողդըզար : Հայրն ալ տե-  
սաւ , ու սիրտը ելաւ . « Կարծեմ  
որ առ տղան ատանկով կեանքը  
սլիտի ուտէ » . ըստ :

3. Կուզեի Գրիգորիկ, որ զու  
ալ մոքովի տեսնաս ան արիւն-  
ուայ հազուսար ու հարցընես թէ  
ո՞ր անզզամինն է. — Ասիկայ է  
տաստիրեք տարուան ու անմեղ  
տղու մը զգեստ, որ ոսկիով զար-  
դարելու տեղ իր արիւնովը ներկեր  
է. տանը մէջ զտած չուանի՝ եր-  
կրթի կտորն իրեն ձաղկոց կ'ընէ.՝  
անկիւն մը քաշուած, խաչելութեան  
ոտքը կ'ինկնայ, ու Հոս, կ'ըսէ,  
որչափ ալ տանջուինք քիչ է, որ-  
չափ ալ անմեղ ըլլանք, աս խա-  
շուած Յիսուսէն անմեղ չենք: Եւ  
յոզնած մարմինն հանգչեցընելու  
համար՝ խորտուբորտ անկողնի մէջ  
Յիսուսի սիրով անուշ քուն կ'ըլլայ:

4. Ասանկ տղայ մը որ ծնած չի  
ծնած աշխարհքէ զաներ էր, ինչ  
կրնայ ընել աշխարհքիս մէջ. տ-  
ոսաւոտր ելլելուն պէս՝ իր վառած  
սիրտը Աստուծոյ կը վազէր, ժա-  
մերով աղօթք կ'ընէր՝ վերջը պա-  
տարազներ կը տեսնար, ետքը սե-  
նեակը կարդալով աղօթքով օրը  
կ'անցընէր. թէ որ հօրը հնազան-

գելու համար դուրս ելլեր ալ , սիր-  
տը իր սենեկին մէջ Աստուծոյ հետ  
էր . իրիկունը անկողին չի մտած եր-  
կան աղօթքէն զատ , զիշերն ալ  
կ'ելլեր շապկանց՝ չոր գետնի վրայ  
ծունկ դրած աղօթքի կը կենար .  
ցուրտ ձմեռներն ալ՝ երբոր ամէնքն  
տաք անկողնի մէջ կը հանգչէին  
սլալատը , ինքը անկողնէն դուրս ,  
պաղէն դողալով սառած մատուր-  
ները շարժելով կը ջանար որ աղօթ-  
քըն չի թողու . շատ հեղ նորէն ան-  
կողին մտնելու ատեն՝ հազարու չափ  
ալ ուժ չէր մնար վրան : Այսչափ  
շարչարանքով հիւանդութիւն՝ մ' ալ  
չի քաշեց . միայն զլխու ցաւ մը ու-  
նեցաւ , որ Փրիստոսի վուշ պսա-  
կինքով իրեն վարդէ սլսակ կը սե-  
պէր :

5. Թէ որ ճզնաւորներու քով  
մեծցած ըլլար Ալողիոս՝ այնչափ  
զարմանալի չէր իր դործքերը , բայց  
միշտ սլալատներու մէջ կեցաւ ,  
փառք ու խնտում ամէն օր աչքին  
առջին էին , կը տեսնար որ մեծ  
պղտիկ անոնց ետևէն ընկեր են ,

ինքը որչափ կ'ատէր զանոնք , այն-  
չափ ալ զանոնք սիրողներուն վրայ  
կը զարմանար : Ահա ասանկ սիրով  
հօրը հրամանովը եղբօրը հետ զնաց  
Սպանիայի թագաւորին քովը , որ  
իրենց պատիւ տուաւ :

6. Ինքը տեսնալով որ աս սպա-  
տիւը կրնայ իր ջերմեռանդութեա-  
նը արգելք ըլլալ , արքունեաց մէջ  
ալ ճղնութեան կեանք բռնեց , իր  
միսիթարութիւնն էր ստէպ հաղոր-  
դուիլ . խոստովանահայրը կը վկայէր  
թէ արձակում առնելու չափ ալ  
մեղք չունէր :

Թագաւորին քով զացած առե-  
նը , ինքն որ իր մօրը երեսը չէր  
համարձակեր նայելու , հոս ալ թա-  
գաւորին դէմքը չիտեսած՝ ելաւ Մա-  
տրիտէն : Մենք մեծ մարդու մը  
վրայ լսենք նէ , ախ ո՛ւր է թէ  
տեսնայինք կ'ըսենք . Ալողիոսին  
միշտ աչքը վար կը պտըտէր անոնց  
քով , և ոչ պալատին ճամբայները  
դիտէր :

7. Ալողիոս Քրիստոսի աղքա-  
տաց նման՝ հին զգեստով կը պը-

տրտէր , հայրը նոր հապուստ շինել  
ալ տար՝ երկու անգամ հաղնելէն  
ետև՝ իր հին զղեստիկը կ'առնուր .  
զարմացոց իր հայրն ալ , թագաւորն  
ալ , իշխաններն ալ . տղաք՝  
կտրիճներ , ծերեր երբոր կը լսէին  
թէ Ալողիոս կու զայ , խաղերնին  
խօսքերնին կը թողուին : Ահա աւ  
սանկ է սուրբին օրինակը . բերանն  
չիրացած դէմքն զղիմացինը կը  
խրատէ :

## Ե

**Մակը ընդ նեղ դրան**

ՄԱՏԹ .

1 . Որովհետեւ շատոնցմէ միտքը  
պրեր էր Ալողիոս որ կրօնաւոր ըլ-  
լայ , աշխարհքի մէջ ուշանալն ալ  
իրեն ծանր կու զար . և իրեն ճզնու-  
թիւններն բան չէին երևնար աչ-  
քին , քանի որ ազատ կամքն ալ  
չէր թողուցած : Զանք դրաւ որ օրը  
ժամ՝ մը միտաւոր աղօթք ընէ աւ

ուսնց միտքն ուրիշ բանի տալու .  
թէ որ յանկարծ քիչ մը շփոթէր՝  
նորէն կը սկսէր աղօթքը . ասան-  
կով եղաւ անզամ որ ինչուան վեց  
ժամ աղօթքի նստաւ , վերջապէս  
յաղթեց տկարութեանը , ու անկէ  
վերջը աղօթքի որ նստէր՝ կը նմա-  
նէր հրեշտակի մը որ երկրէս հե-  
ռու՝ միսյն զԱստուած կը մտածէր :

2. Աղէկ մը մտածելէն վերջը՝  
ընտրեց Յիսուսեանց ընկերութեան  
մէջ մանելու . մէկ մ' որ՝ ան կրօնը  
նոր հաստատուած ըլլալով կանոն-  
ները աղէկ կը պահէին . մէյ մ' ալ  
որ մասնաւոր ուխտ կ'ընէին եկե-  
ղեցական պատուէ փախչելու . եր-  
րորդ որ թէ իր հոգւոյն և թէ ընկե-  
րին օգտին համար աշխատելույար-  
մար առիթներ կրնար գտնալ հոն .  
չորրորդ որ անհաւատներու քարո-  
ղութեան զրկուելով կը յուսար  
Քրիստոսի համար արիւն թափե-  
լու . մէյ մ' ալ որ Յիսուսեանք Ա .  
Աստուածածնոյ մասնաւոր ջերմե-  
ռանդ էին :

3. Աս որոշելը բաւական չի սե-

պես . վերափոխման օրը սրբութեամբ պատրաստուելով՝ ամենասուրբ խորհուրդը առաւ , ու Ա . Աստուածածնայ աղաչելու ատենը՝ իր վառած սրտին դարձեալ աղումն եկաւ թէ ըրէ ինչ որ միտքդ զրեր ես խոստովանահօրդ խորհըրդովը : Մէկէն զնաց իր խոստովանահօրը . ան ալ խրատ տուաւ թէ մտածածդ աղէկ է , միայն պէտք է որ հօրմէդ հրաման առնուս :

4 . Ալողիոս զիտնալով որ հայրը դէմ պիտի կենայ՝ խոհեմութեամբ նախ զնաց մօրը խմացուց . ան ալ ուրախութեամբ՝ էրկանը յայտնեց տղուն կամքը . բայց աս մարդս զինուորական իշխան ըլլալով իր պատիւը մեծցընել կը նայէր , ու տեսնալով Ալողիոսին խելքը՝ մտքէն կ'ըսէր , թէ ինձմէ վերջը ինձմէ աղէկ յաջորդ մը պիտի ունենամ , անոր համար երբոր Ալողիոս խոնարհութեամբ յայտնեց իր միտքը , հայրն բարկութեամբ կրակ կտրեցաւ . թէ որ մէյ մ' ալ , ըսաւ , ատ բանիդ վրայ խօսիս , ծեծի տակ զքեղ ա-

մենուն առջին խաղք կ'ընեմ: —  
Ուր էր թէ ըստ տղան, Քրիստո-  
սի սիրուն համար ատանկ ամօթ մը  
քաշէի: — Ուսկից ալ զտար, ըստ  
հայրն, ատանկ մէկ կրօնք մը, ո-  
րուն մէջ պատիւ մ' ալ չես կրնար  
ունենալ որ մեր ցեղին պարծանք  
ըլլաս: — Ես ալ պատուէ փախչե-  
լուս համար զայն ընտրեցի, ըստ  
Ալոգիոս, թէ որ քու անդրանիկո  
պատիւ փնտոեր՝ իր հօրը մարգէղ  
իշխանութիւնը բաւական չեր իրեն:

5. Բայց այս բանս հօրը սրտին  
փուշ եղաւ անկէ վերջը. Հոն Սպա-  
նիա բարեկամ քահանայ մը ունէր  
աղաչեց որ երթայ տղուն միտքը ի-  
մանայ ու փոխէ. ան ալ երկու ժամ  
քննելէն վերջը, “Աս՝ Աստուծոյ  
բանն է, ըստ, ատոր գէմ կենալը  
իմ խղճմտանքիս ձեռք չի տար:  
Տրտմեցաւ հայրը ու յորդորելով  
հաւանութիւն առաւ Ալոգիոսէ, որ  
զոնէ իտալիայի մէջ կրօնաւոր ըլ-  
լայ, ու առաւ իր ընտանիքը դար-  
ձաւ իտալիա եկաւ:

6. Ալոգիոս տասնըվեց տարուան

Եր ան ատենը, կը յուսար որ հայրը խոստմունքը կը կատարէ . իսկ անիկա կը մտածէր թէ ինչ սկզբ տղուն միտքը դարձընէ : Պէտք է, ըստ, եղբայրդ առնես երթաս իտալիոյ ամէն արքունեաց մէջ վերջի բարեկ տաս : Միտքը աս էր՝ որ նոր տեղեր նոր փառքեր տեսնալով, Ալողիոս ուղածը մոռնայ, սիրտը աշխարհիս փակչի . բայց անոր հակառակը եղաւ, վասն զի ալ աւելի զանեցաւ աշխարհէ . ու երբոր պղտի եղբայրը՝ վերէնի վարուկիով զարդարուած կը ստրտէր, ինքը իր հին հագուստովը կը մտնէր սլալատներու մէջ :

7. Ճամբու ու պանդոկի մէջ եղած ատենն ալ իր սովորական ազօթքները, մտածութիւնները չի թողուց . պատկերք չի գտնար նէ՝ թղթի վրայ խաչ մը կը ճեւացընէր դիմացը ծունկ կը դնէր աղօթքի : Իրեն տրուած պատիւներէն կրցածին չափ կը փախչէր, անկարդ կամ աշխարհային խօսք մը լսեր՝ խաղ մը տեսներ՝ կը թողուր եղած

տեղը, անկիւն մը կը քաշուէր ազօթքի կը կենար :

8. Խտալիա պարտելէն ետքը դարձաւ Գասդիլիոն . Հայրը տեսնալով որ մտքին դրածը չի յաջողեցաւ, Մանգուայի դքսին աղաչեց որ ճար մը զտնայ ասոր . ան ալ զրկեց ճարտասան եպիսկոպոս մը, որ շատ յորդորելէն վերջը, Հօրդ հնագանդելու համար զոնէ, բսաւ, յանձն առ միայն եկեղեցական ըլլալ, ու Հօրդ քով մնալ, անով կը ռնաս սուրբ ըլլալ . չե՞ս տեսնար Միլանի կարգինալը Ս. Կարոլոս Պոռումէոսն : Ալոգիոս ասոր անանկ խելացի պատասխաններ տուաւ, որ պապանձեցաւ եպիսկոպոսը :

9. Անոր տեղը եկաւ յորդորելու իր հօրեղբայրը, որոն ժառանգութիւնն ալ Ալոգիոսի կ'ինկնար . անկէ վերջը ուրիշ մ' ալ ելաւ Յիսուսանց ընկերութիւնը վարզարկաւ . մէկ երեելի քարոզիչ մը կար, անպէ Ֆերրանդէսի խօսքէն չանցնելու համար՝ ամէն ջանք թափեց յորդորեց . բայց մէկն ալ չի կրցաւ

յաղթել անոր հաստատութեանը :  
Աս որ տեսաւ հայրը՝ կրակը մտաւ՝  
կորիր զնա , ըստ տղուն : Ան ալ  
մէկէն ելաւ տնէն վանք մը մտաւ՝  
ու սկսաւ աղաչել որ Աստուած հօ-  
րը սիրաը կակղցընէ :

10. Մարգէզը անանկ բարկացեր  
էր որ ծառայներն ալ չէին համար-  
ձակեր Ալողիոսի երթալը իմացը-  
նելու . երբոր լսեց կանչել տուաւ :  
Չես զիտեր , ըստ բարկութեամբ ,  
որ ատ ըրածդ զհայրդ նախատել է :  
— Թողութիւն ըրէ , ըստ տղան  
խոնարհութեամբ , կարծեցի թէ եր-  
թալու հրաման տուիր : Հայրը ա-  
մէն բարկութիւնը թափելով , կծու  
խօսքերով խեղճ տղուն սիրտը կոտ-  
րելէն վերջը , Ելիր սենեակդ քա-  
շուէ , գուրս չելլաս՝ ըստ : Տղան  
զնաց , գոցեց գուռն , առաւ մէկ  
ձեռքը խարազանը , մէկալ ձեռքը  
խաչելութիւնը , ընկաւ զետին ,  
արցունքը աղբիւրի պէս կ'իջնար ,  
չէր ուզեր զետնէն վեր ելլալ . համ-  
բերութիւն կը խնդրէր Աստուծմէ :

11. Ո՞հ , կարելի ըլլար թէ մէկ

մը Ալոգիոսի սենեակը մտնայինք ,  
հարցընէինք , թէ ով անմեղ տղայ ,  
ինչու այդպէս կը վշտանաս , ինչու  
այդչափ կ'աշխատիս՝ դուն որ ար-  
քունեաց մէջ հրեշտակ ըստեցար  
և արքունիքը չեն ուզեր զքեղ թո-  
ղուլ : — Կուզեմ , կ'ըսէր , Քրիստո-  
սի սիրուն համար՝ իր բացած նեղ  
դուռը մտնել , զիս բոլորովին իր  
խաչին վրայ ձգել . զիս կ'արդի-  
լեն , զիս ետ կը քաշեն , զիս լայն  
ճամբան կը հրաւիրեն . ես ալ կ'ա-  
ղաչեմ որ՝ աղատէ զիս անոնցմէ :

12. Ասանկ զօրաւոր հաւատքով  
յուսացողին ով կրնայ յաղթել .  
Հօրը սիրտը տակնուվրայ եղած ,  
բարեկամմը զրկեց որ երթայ տես-  
նէ՝ թէ տղան ինչ կ'ընէ . ան ալ լա-  
լով ետ դարձաւ , զնա՛ դուն քու աչ-  
քովդ տես , ըստ : Երկրորդ օրը ե-  
լաւ Մարգէզն զրանը ծակէն նայե-  
ցաւ , տեսաւ որ Ալոգիոս հանուեր ,  
ինքը դիմում կասկապուտ  
եղեր է . ձայն հանեց , մօրը հետ  
մէկ տեղ ներս մտան , տեսան որ  
չորս զին արիւնի ու արցունքի կա-

Թիլները անձրեկի պէս փոռւեր են :  
Խըշխըշաց հօրը կարծրացած սիրտն  
ալ, Առ քանի՞ մէկ խեղճ տղան չար-  
չարեմ պիտի, կանչեց, ալ հերիք  
է : Գրեց Հռովմ Յիսուսեանց մե-  
ծաւորին, ան ալ պատասխան զրեց,  
թէ աղէկ կ'ըլլայ որ Հռովմ խաւ-  
րես տղադ : Իսկ Ալողիոսի ուրա-  
խութիւնը ովկ կրնայ պատմել :

## Ը

Արքայուրիւն երկնից բռնարարի և  
բռունք յափշտակեն զնա

ՄՎՏՅ.

1. Երբոր Ալողիոս իր իշխանու-  
թենէն հրաժարելու համար կ'աշխա-  
տէր, հայրը Միլանի մէջ դատաս-  
տան մը ունեցաւ . ինքը ուորին ցա-  
տվը հիւանդ ըլլալուն համար՝ Ալո-  
ղիոսը զրկեց որ հոգայ բաները :  
Տղան թէպէտ կամքին դէմ էր՝  
հնազանդեցաւ, ինչուան ութը ի-  
նը ամիս հոն մնաց, և անանկ ա-

զէկ առաջ տարաւ գործքը՝ որ հայրը խիստ շատ ուրախացուց : Իրեն երկու փառաւոր կառք ալ տուեր էին, բայց ինքը միշտ ոտքով կ'երթար, հին զգեստը հագած . մէկու մը հետ ալ չէր տեսնուեր բաց 'ի հոգեսէր անձինքներէն :

2. Ան տարին Միլան բարեկենդանի մէջ հանդէս ըրին հեծեալներու, ամէն աղնուականք զարդարուած ձիով կ'երթային . Մարդէզն ալ զրկեց Ալողիոսի ջուխտ մը աղուոր ձի, զարդարանքներ ու ծառայներ, որով ամէն իշխաններէ փառաւորպիտի երևար . ինքը անոնք ամէնն ալ մէկ զի թողուց, ծերացած ջորիի մը վրայ նստած իր ամէն օրուան հագուստովը հանդիսի մէջ մտաւ . ոմանք կը զարմանային, ոմանք ալ ծաղը կ'ընէին, բայց իրեն համար ասիկայ աշխարհիս վերջի բարե տալն էր . ան աղքատ զգեստը իրեն անանկ ուրախութիւն կու տար, որուն ուրիշները իրենց ուկիովը չէին հաւասարեր :

3. Բայց Մարդէզը երբոր տե-

սաւ Ալողիոսի անանկ խոհեմութեամբ գործքը առաջ տանելը՝ ուրախութենէն միտքը փոխեց. Ասանկ խելացի տղան ձեռքէ հանելը՝ անխելքութիւն է կ'ըսէր. մեր տանը պատիւը շատ աղէկ պիտի մեծցընէ իմ Ալողիոսս. աս բանիս համար ելաւ Միլան գնաց, փորձեց տղան, տեսաւ որ ան իր կամքին վրայ հաստատ է. առաջ սկսաւ բարկանալ, վերջը անուշութեամբ ըսաւ:

Կ. Գիտես Ալողիոս, որ ես Աստուծոյ կամքին դէմ բան չեմ ուզեր ընել. բայց քու ուզածդ ալ Աստուծոյ կամքն է՝ չեմ կրնար ըսել, ինչու որ՝ ինքը քեզի տուեր է աս մարդէղ իշխանութիւնը: Ինչէն կը վախնաս, տղաս, կը կարծես թէ պալատի մէջ հոգին փրկել չըլլար. անանկ է նէ՝ պէտք էր որ ամէն իշխան անապատ քաշուեր. թող որ Աստուած քեզի անանկ շնորհը մը տուեր է՝ որ սուրբ ըլլալու արգելմը չունիս: Զես տեսնար որչափ հպատակներու աղէկութեան մէջ

մնալը քեզմէ կախուած է . ամենուն աչքը ու սիրտը քու վրադ է . պղտի եղբայրդ Ուստոլփոս կը տեսնամ որ չի կրնար աղէկ մը դարձընել իմ իշխանութիւնս : Չես խընայեր ինձի ալ , տղաս , որ ինչուան հիմայ տաք սրտով զքեզ սիրեր եմ . ու թէ որ ինձմէ բաժնուելու ըլլաս աս տկարութեանս մէջ , անանկցաւ մը պիտի տաս՝ որ առջինները պիտի մոռցընէ : Ես զքեզ , սիրելի տղաս , ուրախութեամբ իմ ծերութեանս օգնական ըրեր էի , թէ որ դուն զիս թողուս երթաս , ես աս ուրիս ցաւէն պաշտօններս չի կը նալով ընել՝ տրտմութեամբ պիտի զերեզման ինջնեմ :

Յ . Խօսքը չի լմնցուցած՝ ճայն ձղեց , սկսաւ լալ . աս անուշ խօսքերը՝ տղուն սրտին աւելի կը դըպչէին . քան թէ առջի բարկութիւնը . աս կակղցած հօրը սրտին աւելի դժուար էր յաղթելու , քան թէ քարացած սրտին . ինչ ըսէ Ալողիոս . Սիրելի հայր իմ , դու ալ զիտես՝ որ ինչուան հիմայ Աստուծմէ վերջը

տաք սրտով գրեղ սիրեր ու պատուեր եմ, ինչպէս որ պարագս էր. ըսած խօսքերուդ վրայ ես ալ շատ մտածելով՝ Աստուծոյ աղաջեր եմ, որ թէ որիր կամքին դէմ է ուղածս՝ վերցընէ սրտէս աս փափաքը, ինչու փուճ տեղը քու սիրտդ կոտրեմ: Այնչափ անզամ փորձեցիր տեսար, բանի մարդիկ որ զիս քննեցին՝ ըսին, թէ աս տղայութեան փափագ չէ, հապա Աստուծոյ կոչումն է. ասով ինձի ուրիշ բան չի մնար, բայց եթէ կամ հրամանքիդ կամքը ընտրել կամ Աստուծոյ, հիմայ հրամանքդ ալ ըսիր որ Աստուծոյ կամքին կ'ուզես հնազանդիլ. ուրեմն կը մնայ որ Աստուծոյ ճայնին լսենք: Ուրիշ բաներու մէջ ինչուան հիմայ հնազանդեր եմ, ասկէ վերջն ալ միշտ քեզի հնազանդ եմ, ու կը յուսամ որ Աստուծ հրամանքիդ միմիթարութիւնը պակաս չընէր:

6. Գերրանդէսի բերանը կապուեցաւ աս խելացի պատասխանէն. բայց նորէն ուրիշներու ինկաւ որ աղէկ մը փորձեն տղան, ու

իր առջև ժամ մը Յիսուսեան իմաս-  
տուն քահանայի մը քննել տուաւ .  
աս մարդս շատ զօրաւոր խօսեցաւ  
Ալոգիոսի դէմ, ամէն էն մեծ դր-  
ժուարութիւններն բերաւ , շատ նե-  
ղը ձղեց . բայց Ալոգիոս աստուա-  
ծաշնչի և սուրբ հարց խօսքերովը  
անանկ մը պապանձեցուց զքահա-  
նայն , որ հայրն ալ վկայեց թէ Աս-  
տուած է տղան կանչողը : Ահա ,  
ով Գրիգորիկ , այսչափ դժուարու-  
թիւն յանձն կ'առնեն սուրբերն ար-  
քայութեան ճամբուն համար . ո՛ր-  
չափ սկէտք է վախնայ այն՝ որ հո-  
գւոյն փրկութեանը համար չուզեր  
պղտի նեղութիւն մ' ալ քաշել , ու-  
րիշներուն արիւն քրտնքով վաստը-  
կածը կ'ուզէ որ խաղով ծիծաղով  
ձեռք բերէ :

Թ

**Մի բողանայք ՚ի ձևապարհ  
արդարութեան**

1. Թէ որ ինչպէս ներսէն՝ զրսէն  
ալ նոյնպէս դիւրին ըլլար Աստու-  
ծոյ ծառայութեան ճամբան, սուրբե-  
րուն վարձքն շատ պակաս պիտի  
ըլլար . Աստուած կամաւ դժուա-  
րութիւններ կը հանէ իր ծառայնե-  
րը կրթելու : Ալողիոս ամէն բան  
յաջողած կարծելով զրեց Յիսու-  
սեանց մեծաւորին, ան ալ պատաս-  
խանեց, հօրդ օրհնութիւնը առ ու  
եկու : Աս բանիս համար ելաւ զնաց  
Մանդուա, ան օրերը հոն մեծ հան-  
դէսներ կար, անոնք ամէնքը թո-  
ղուց, սկսաւ պատրաստութիւն  
տեսնել աշխարհքէ հրաժարելու .  
իրեք շաբաթ հոգեւոր կրթութեան  
մտաւ խելացի քահանայի մը ձեռ-  
քով, ընդհանրական խոստովա-  
նանք եղաւ . որով չեմ զիտեր մեղ-

քերը իմացուեցաւ թէ սրբութիւնը .  
միայն աս զիտեմ որ անկէ վերջը  
քահանան Ալոգիոսի համար՝ հրեշ-  
տակ է , կըսէր :

2. Գասդիլիոն դարձաւ ու Յի-  
սուսեանց կրօնին կանոնները կար-  
դալով սկսաւ զանոնք պահել . սե-  
նեկէն դուրս չէր ելլեր . ճամբան  
մարդու չէր նայեր . տանը մէջ  
միայն հարկաւոր ու հոգևոր բանի  
վրայ կը խօսէր , ապաշխարու-  
թեամբ և ճգնութեամբ ալ կը հալէր  
կը մաշէր , հազիւ քալելու ուժ մը-  
նացեր էր վրան . անոր համար մայ-  
րը կըսէր էրկանը թէ շուտով զր-  
կենք վանք , որ հնազանդութեան  
տակ մտնալով չափէ դուրս ճգնու-  
թիւն չընէ :

3. Ալոգիոս ալ կամաւ ուշացուց  
երթալու հօրմէն օրհնութիւն խըն-  
դրելու , որ մէկէն սիրտը չելլայ , ու  
վերջը երբոր հրաման ուղեց հօրմէն  
բաժնուելու , ինչ կը կարծես թէ ը-  
սէ հայրը . ինչուան որ քսանը հինգ  
տարուան չըլլաս , տունէս դուրս  
պիտի չելլես , չէնէ այս օրուընէ իմ

տղաս չես : Կայծակ ինչաւ խեղճ  
տղուն վրայ . ընկաւ հօրը ոտքը յի-  
շեցուց ըրած խոստմունքները . բայց  
որո՞ն կ'ըսես . — Գոնէ ատեն տուր,  
ըսաւ , որ մտածեմ ու Յիսուսեանց  
մեծաւորին գրեմ . — Բայց ան ալ  
փուժ :

4. ԱՌ չի դիմացաւ այն համբե-  
րող սիրտը . իրաւ , ըսաւ , մինչև  
հիմայ ասանկ ծանր տրտմութիւն  
մը չէի ունեցած՝ փախազէս զրկուե-  
լուս վրայ . սակայն յանձն կ'առ-  
նում երկու իրեք տարի ալ սպասե-  
լու , միայն թէ հրաման տուր , հայր,  
որ հիմակուընէ երթամ չոռվմ կե-  
նամ , ու խօսք տուր զիս Յիսու-  
սեանց մեծաւորին յանձնելու . և թէ  
որ անոնք ալ չընդունին զիս՝ կ'եր-  
թամ ես բոլոր աշխարհքս ժուռ  
կու զամ զտնալու աս սրտիս հան-  
դարտութիւնը , որ հոս չեմ , չեմ  
կրնար զտնել : Դժարեցաւ հայ-  
րը աս խօսքիս վրայ ալ , բայց ճար  
մը չի զտնալով յանձն առաւ խըն-  
դիրքը , ու կը մտածէր թէ որո՞ն  
քով դնէ տղան Հռովմայ մէջ :

5. Իսկ ինքն Ալոգիոս տակնուշայ սրտով նստէր կուլար, ասանկ հարուստ մարդու զաւակը ըլլալուն վրայ . թէ որ ծառայիս մէկուն տղան ըլլայի կ'ըսէր, ինչուան հիմայ շատոնց կոչմունքիս հետևերէի . ով ունայն աշխարհը, քանի մէկ կը ջանաս Աստուծոյ ծառայները արդիլելու, հազար ու մէկ փորձութիւն կը հանես որ քեզմէ չի հեռացնես : — Բայց դուք՝ որ Ալոգիոսի նման կ'ուզէք աշխարհը ոտքի տակ առնուլ դուք սիրո ըրէք . նայեցէք հիմայ Ալոգիոս ինչ կ'ընէ . այնչափ դժուարութեանց համբերելով, զիշեր ցորեկ ընկած Աստուծոյ՝ աղօթք ընելէն վերջը, օրմ'ալ հինգ ժամ աղօթք ընելէն ետև, սրտին անանկ մը կուզայ որ երթայ վերջին փորձը մ'ընէ հօրը սիրով շարժելու :

6. Ան ատենները հայրը ոտքին ցաւովը պառկեր էր . Ալոգիոս ծունկ դրաւ անկողնին առջին ու ըստ . Հայր, ես քեզի հնազանդելու պատրաստ եմ. բայց զիտցիր

որ Յիսուս զիս իր ընկերութեանը  
կը կանչէ . թէ որ հրամանքդ չու-  
ղես խաւրել՝ Աստուծոյ կամքը  
պիտի չի կատարուի հրամանքիդ  
պատճառաւը . աս ըստ ու ելաւ  
իր սենեակը քաշուեցաւ : Գնաց՝  
բայց հայրը երկու սուրի մէջ թո-  
ղուց . մէկ կողմէն խղճմտանքը զին-  
քը կը տանջէր Աստուծոյ կամքին  
դէմ ընելուն համար . մէկալ կող-  
մէն սիրտը կը ճաթէր , Ասանկ պա-  
տուական տղան ինչպէս ձեռքէս  
հանեմ , կ'ըսէր . անոր վերջի խօսքը  
կարծես թէ եղաւ իրեն Եսայի մար-  
գարէին վճիռը առ Եղեկիա տուած .  
երեսը զոցեց սկսաւ բարձր ձայնով  
լալ . ծառայ , բարեկամ , բոլոր պա-  
լատը եկան՝ չի կրցան զինքը մխի-  
թարել . վասն զի Աստուծոյ կամ-  
քին դէմ դնելու երկինք երկիր բա-  
ւական չեն :

7 . Հասեր էր Աստուծոյ կամքին  
փառաւորութեանու Ալողիոսի յաղ-  
թութեան ժամանակը : Գերրանդէս  
կանչեց տղան . Ահա իմ սիրուն Ա-  
լողիոսս , ըստ , իմ ազնիւ անդրա-

նիկս, ահա զիտցիր որ հիմայ կըր-  
նաս քու փափաքիդ հետեիլ . կը  
բաժնուիս ինձմէ, որդեակ, բայց  
հօրդցաւած սրտինանմխիթար վէրք  
մը թողլով . բայց որովհետեւ Աստու-  
ծոյ կամքը կատարելը մեր պարտքն  
է, որդեակ իմ, ասկէ վերջը աղատ  
ես դուն . . . ախ տղաս . . . Աստուած  
զքեզ օրհնէ . . . ինչպէս ես ալ հի-  
մայ քեզի իմ հայրական օրհնու-  
թիւնս կու տամ . . . : — Անանկ ե-  
լած սրտով մը օրհնեց իր օրհնեալ  
զաւակը, որ խօսքը, աչքին լոյսը  
ու շունչը պահ մը կտրեցան, մա-  
րեցաւ մնաց : Ալովիոս կարճ խօս-  
քով մը շնորհակալ ըլլալով մէկէն  
հեռցաւ անկէց, որ հօրը սիրով  
աւելի չի ճմլէ . ընկաւ Աստուծոյ  
շնորհակալ եղաւ : — Ահա այսչափ  
կ'աշխատի արքայութեան ճամքան  
րոնել ուզողը, և ասանկ կը յաղթէ :

## Ժ

**Ամենայն փառք մարդոյ իբրև  
զժաղիկ խոտոյ**

ԵՍԱՅԻ

1. Շատոնցվընէ գրուած էր Գեր-  
մանիոյ կայսեր՝ Ալողիոսի ժառան-  
գութենէն հրաժարելուն համար ,  
միայն քիչ մը ստակ կապեր էին ի-  
րեն որ տարուէ տարի տան . կայս-  
րէն ալ հրաման եկեր էր : Երբոր  
հօրը օրհնութիւնը խմացուեցաւըո-  
լոր պալատին մէջի եղողները ոկր-  
սան ձեռուընին զարնել ու լալ . եր-  
բոր ճամբան կ'անցնէր Ալողիոս ,  
ամէն տուն պատուհանները կը վա-  
զէին , սուրբը կը կորսնցընենք  
կըսէին . վազող վազողի կըլլար ,  
որը ձեռքը , որը ոտքը կը պազնէր ,  
որը կը գանգտէր զիրենք թողլուն  
վրայ : Ալողիոս ոմանց շնորհակալ  
կըլլար , ոմանց մխիթարութիւն  
կու տար , ոմանց ալ կը ցըցընէր

թէ հոգւոյն փրկութիւնը ամէն քա-  
նէն վեր դնել պէտք է :

2. Գասղիլիոնէն ելած օրը քաղ-  
քին սուզը անանկ եղաւ, որ կար-  
ծէս թէ ամէնքը մեռելնին կու լան,  
ճամբայները մարդով լեցուած էր.  
Երթալէն վերջն ալ օրերով Ալողիո-  
սին վրայ կը խօսուէր : Ինքը Ման-  
դուա զնաց, հոն՝ նախ ան քիչ մը  
ստակէն ալ որ իրեն կապեր էին՝  
հրաժարեցաւ. վերջը երբոր մեծերը  
ժողվրւեցան՝ իշխանութենէն հրա-  
ժարելու զիրն ալ կարդաց զիւանա-  
դպիրը. Յերրանդէս երբոր լսեցաս  
զիրը՝ իր սիրուն տղուն զատապար-  
տութեան վճիռ մը սեպեց . սկսաւ  
լալ ու զամէնքն ալ լացուց : Իսկ Ա-  
լողիոս փառք կու տար Աստուծոյ  
որ ան ծանր բեռէն ազատեցաւ :

3. Հանդէսը լըմնցած չի լըմըն-  
ցած երբոր իշխանները զեռ նըս-  
տած Մարդէզը կը մխիթարէին,  
յանկարծ ներս մտաւ Ալողիոս Յի-  
սուսեանց կրօնին սև զգեստը հա-  
զած . ասանկ ափշեցընելու տեսա-  
րան չէր եղած . հայրը մէկէն խելքը

թուոց, չէր զիտեր ինչպէս ցաւի, քովի եղողները սկսան լալ. բայց Ալողիոսի պարկեշտ զգեստը այնչափ չի զարմացուց զանոնք որչափ հոն տեղը ծանր ու զուարթ կերպով խօսած ճառը, որով աշխարհիս ունայնութիւնը ցըցուց ու ամենուն սիրտը նորէն շարժեց :

4. Արդ նոյեմբեր ամսուն մէջ 1585են Ելաւ գրսին պալատէն, ծնողացը վերջի օրհնութիւնը առաւ, ինքը հանդարտ էր սրտով, բայց ծնողը այնչափ տրտմեր էին՝ որ կը կարծէին թէ անկէ վերջը մխիթարութեան երեսը պիտի չի տեսնան. ճամբայ Ելաւ մէկ քանի աղնուականներու հետ, ամէն տեղբարի օրինակ թողլով։ Ովստի զընաց Լորետոյ Ս. Աստուածածնայ տունը, շատ պատարագներ տեսաւ, հաղորդուեցաւ. քանի որ կը մտածէր թէ ան պատերուն մէջ Յիսուս ու Ս. Աստուածածին կեցեր են, չէր ուզեր անկէ բաժնուիլ։ Այնպիսի տան մը մէջ կը փոյլէր որ տանկ սուրբ մը երկայն կենոց։

5. Ճամբորդութեան մէջ ալ իր  
ճղնութիւնները չի թողլով երբոր  
Հոռվմ հասաւաւելի շատցուց. հոն  
տեղը քաղաքավարութեամբ բաժ-  
նուեցաւ իրեն հետ եկողներէն,  
ծնողացը սիրով բարե ապսպրեց.  
Վերջը զնաց Յիսուսեանց մեծաւո-  
րին ոտքը ընկաւ, յանձնեց զինքը  
անոր իր ազատ կամբին Կորրնծայա-  
րանը ու իրեն բնակելու սենեակ մը  
տուաւ. Երբոր ներս մտաւ Ալողիոս՝  
Խորին ուրախութեամբ մը ըսաւ.  
“Այս է հանգիստ իմ յաւիտեանս  
յաւիտենից, ’ի սմա բնակեցայց զի  
հաճեցայ ընդ սա,,:

6. Թագաւորներու, իշխաննե-  
րու, փառքի, պատուի մէջ մեծցած,  
ուրախութեան երես չի կրցաւ տես-  
նալ Ալողիոս, հապա երբոր ան  
պղտի խուցը մտաւ. Ահա, հոս էր,  
ըսաւ, հոս էր իմ փափազած հան-  
գիստս. աս է որուն համար բոլոր  
կենացս մէջ աշխարհը ինձի փուշ  
եղեր էր. աս է այն հանգիստը որ  
միայն կրնայ զիս հանգչեցնել:

7. Ո՞վ երջանիկ Ալողիոս , որ  
տասնըօթը տարի աշխարհքիս  
խռոված ալիքներուն վերէն թեթև  
նաւակի մը պէս սահելով հասար  
հիմայ հանդարտ նաւակայք մը : Քեզ  
ալ երանի՛ Գրիգորիկ , թէ որ Ալո-  
ղիոսի նման ջանաս անմեղութեան  
սիրովը ասլրիլ՝ ուր որ ըլլաս :





## ԳԻՐՔ Բ

Ս. ԱԼՈՉԻՈՍԻ ՎԱՐՔԵ, ԿՐՈՆՔ  
ՄՏԵՎԱՆՔՆ, ԲԵԶՈՒԱՆ ԿՐՈՆՔԻՆ  
ՄԵՋ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՆ

### Ա.

Որ ոչ առևու զիսաչ իւր և զայ զկնի  
իմ չե ինձ արժանի

ՄԱՏԹ.

1. Տօնք որ խաչ քաշելու համար  
բարեպաշտք կրօնք կամ վանք կը  
մտնեն, Ալողիոս՝ որ բոլոր կեանքը  
աշխարհքիս մէջ ալ խաչով անցու-  
ցեր էր, ինչ պիտի ընէր կրօնքի  
մէջ: Աս էր մեծ ընելիքը՝ որ հոն  
աշխարհքի մէջ ինչ որ ըներ՝ իր ա-  
զատ կամքովը կ'ընէր, հոս կամքն  
ալ թողուց ուրիշի ձեռք: մարդու

իր կամքը թողլէն մեծ խաչ չի կը րնար ըլլալ : Վանք մտածին պէս մեծաւորները քիչցուցին անոր չափէ 'ի վեր ճգնութիւններն , ասանկ հրաման մը շատ բարեպաշտներու խիստ ծանր եկած է , բայց Ալոզիոս խոնարհութեամբ յանձն առաւ : Որչափ որ ճգնութիւն ընելը մեծ բան է , սուրբի մը՝ ան ճգնութիւններէն հնազանդութեամբ ետ կենալը՝ աւելի մեծ է :

2. Բայց Ալոզիոսի դժարը կուզար որ մեծաւորները իրեն վրայ շատ հոգ կը ցուցընեին , և իրեն փափուկ բնութեամբ ու ազնիւ ըլլալուն համար՝ մէկ քանի դիւրութիւններ ըրին . Ալոզիոս հազար անզամ շնորհակալ եղաւ անոնց և աղաչեց որ ամէն բանի մէջ ընկերներուն հաւասար բոնեն զինքը : Տեսաւ որ իրեն տրուած զործածելու բաները ալ աւելի ազնիւ են քան զուրիշներունը՝ զանոնք ալ հրամանով փոխեց : Կանոնները անանկ ճիշդ կը պահէր՝ որ շատ տարի վանքի մէջ եղողները իրմէ բարի օրի-

նակ կ'առնուին . և իբր թէ իրմէ կը  
սորվէին կանոն պահելն :

3. Աստուած իրեն սիրած զաւա-  
կը կը տանջէ , կ'ըսէ սուրբ Գիրքը ,  
վասն զի նեղութիւնը զմարդ՝ ու-  
կոյ պէս կրակի մէջ կը զտէ , հի-  
մայ ալ Ալոգիոսի խաչ մը մէկ փոր-  
ձութիւն մը խրկեց , որ ինչուան  
ան ատենը չէր հանդիպած իրեն :  
Վանք մտնալէն շատ չանցաւ , Ա-  
լոգիոսին վրայէն վերցուց այն քաղ-  
ցրութիւնը , այն եռանդը՝ որ աղօթքի  
մէջ կ'իմանար , և այն հոգեսոր շնորհ-  
քով ծաղկած սիրտը՝ խորշակով  
ցամքած պարտէզի պէս տրտմեցաւ :  
Բայց Ալոգիոսի սէրը պակսեցա՛ւ  
արդեօք . չէ . վասն զի այն եռանդն  
որ կը զզար ներքին կրակին բոցն  
էր , Աստուած իբրև թէ անոր սիրտը  
դոցելով միայն բոցը կը տրեց , կը-  
րակը միշտ ներսը կը վառէր , դուրս  
ելլալու տեղ չզտնալով ինքըզինքն  
կը տանջէր : Ալոգիոս չի վհատիր ,  
զզալի քաղցրութիւն իմանայ չի մա-  
նայ՝ կը վաղէ Աստուծոյ . Աստուած  
ալ որ իբրև կատակ մը կ'ընէր անոր

Հետ՝ թողոց որ արզիլուած բոցը  
առջինէն աւելի բարձրանայ ու պայ-  
ծառանայ :

Առ ԱՇԿ նոր խաչ մ' ալ սեպելու  
է հօրը մահը, որ Ալողիոս կրօնք  
մտնալէն երկու իրեք ամիս վերջը  
լսեց. ցաւեցաւ ինչպէս որ բնական  
է առաքինի տղու մը՝ որ հօրմէն  
նեղութիւն քաշած ըլլայ՝ կարծես  
թէ աւելի կը սիրէ զինքը. մխիթա-  
րեց զրով ընտանիքը, և ինքն ալ  
շատ մխիթարուեցաւ, երբոր լսեց  
թէ հայրը՝ իր երթալէն վերջը՝ դադ-  
րեցուցեր էր իր զէշ սովորութիւնը  
ստըկով խաղալու, որով շատ բան  
կորսնցուցեր էր. վերջի ատենները  
ոտքի ցաւոն պատճառաւ՝ անկող-  
նին մէջ նստած, հոգեոր պատրաս-  
տութիւններ ընելով կ'առնուր ձեռ-  
քը Ալողիոսի թողուցած խաչելու-  
թիւնը, և Ողորմեա ինձ Աստուած  
իմ, կ'ըսէր, ու արցունքովը կը թըր-  
ջէր ան խաչելութիւնը՝ զոր Ալո-  
ղիոս ամէն օր աչքին աղբիւրներո-  
վը կը լրւար, և կ'ըսէր հայրը. Այս  
արցունքներսիմ Ալողիոսիս աղօթ-

քին պտուղն են : Ո՞վ ո՞րչափ զօրաւոր բան է բարի օրինակը , ո՞րչափ ազդու է առաքինութեան յիշատակը :

## Բ

*Կրօնաշորոշիւն սուրբ . . . անարատ  
պահել զանձն յաշխարհէ*

ՅԱԿ . ԵՌԵԱՔ .

1. **Ալողիոս փառք տուաւ Աստուծոյ որ հօրը մեռնելէն առաջզինքը աշխարհքէ ազատեց . Հոռվմ մտած ատենը իրեն հետ եկող ճամբու ընկերներուն ապսալրեր էր որ ծնողացը երթան նէ՝ աս խօսքը ըսեն . Մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քո : Ինքն ալ ըսածին պէս ըրաւ ամեննին չի խօսեցաւ և չէր մտածեր տանը վրայօք . անանկ որ երբոր մէկը իրեն հարցուց թէ քանի եղբայր էիք , ամչնալով սկըսաւ մոքէն համրել :**

2. **Աշխարհքէ հրաժարիլը բա-**

ւական չէր, իր անձն ալ ուրացեր  
էր, ինչպէս Տէրն մեր կը պատուի-  
րէ . մարմնոյ հանգստութիւն բոլո-  
րովին մոռցեր էր . ծաղիկ մը ձեռ-  
քը չառաւ որ հոտուրայ . բայց  
փնդի հիւանդներու շատ հեղ սիրով  
կը ծառայէր . չի յիշեց ան հարկինք-  
ները որ տեսեր էր, իր ուտելիքն էր  
հաց ու ջուր կամ անժուր անհամ  
եփած բան մը . ինքը որ խտալիոյ  
անուանի թատրոններ ու երգիչներ  
տեսեր և լսեր էր՝ հիմայ չէ թէ  
միայն ականջին՝ անուշ ձայն չլսե-  
լու զգուշացաւ, հապա նաև զուար-  
ճալի խօսքերէ ալ կը փախչէր :

5 · Աչքին վրայ ըրած զգուշու-  
թիւնն՝ պէտք է նորէն ըսել : Մե-  
ծաւորներն երբեմն պտըտցնելու  
կը տանէին սովորական տեղ մը .  
անզամ մը պտըտելէն դառնալէն  
վերջը՝ հարցուցին Ալոգիոսի թէ այս  
օրուան զացած տեղերնիս ինչպէս  
էր . առջի բերանը զարմացաւ մնաց  
Ալոգիոս . մէկ մ՝ ալ ալ աղէկ մը  
մտածելէն վերջը, հաղիւ իմացաւ  
որ այն օրը նոր տեղ զացեր են ե-

զեր : Երեք ամիս էր որ վանք մտեր էր, և չէր զիտեր թէ ի՞նչ կարգով քահանայք սեղան կը նստէին :

Ա. Ամէն գործքի մէջ Քրիստոսի ըրածը կը յիշէր, մանաւանդ չարչարանքներն . Քրիստոս քղամիդ հաղաւ կ'ըսէր, ու մեծաւորաց աղաչելով կ'ընտրէր ամենէն հին կարկրտած դգեստը և անով կը պլտրտէր Հռովմայ մէջ . Քրիստոս նախատուեցաւ, ինքն ալ կը խնդրէր մեծաւորէն որ զինքը յանդիմանէ ամենուն առջին . մեծաւորը զինքը զրկեց որ երթայ սեղան դնելու ծառայէ, ան տեղի վրայ կեցողն ալ մեծաւորին հրամանովը կը բարկանար Ալոգիոսի, ամէն ըրածին մէջ պակսութիւն զտնալով, Ալոգիոս ալ թողութիւն կ'ուզէր ու կը խոստանար աւելի աղէկ ընելու : Ասով ընկերներուն ալ անանկ պատուելի եղաւ, որ սուրբի տեղ դնելով զինքը՝ ան ատենէն կ'ուզէին իրեն զործածած բաներէն մէկը քովերնին պահել :

Գ.

Ծառայեցէք Տեսոն երկիւղիւ .

Ծառայեցէք միմնանց

ՊՕՂ . ԵԹԵՔ .

1. Իրեք ամիս նորընծայարան  
կենալէն վերջը՝ զԱլողիոս զրկե-  
ցին վարժարանը՝ որ հոն տեղը ե-  
ղողներուն ու եկեղեցւոյ մէջ ծա-  
ռայէ . շատ ուրախացաւ այս բա-  
նիս . մէկ մ' որ ան ծեր քահանայ-  
ներէն նոր նոր բարի օրինակ առ-  
նելու յոյս ունէր , մէկ մ' ալ որ Աս-  
տուծոյ տանը մէջ ծառայութիւն  
պիտի ընէր : Օրը հինգ վեց պատա-  
րազի սպասաւորութիւն կ'ընէր ,  
ստէալ հաղորդութիւն կ'առնուր . և  
անանկ ջերմեռանդութեամբ մը՝ որ  
տեսնողը կը զմայլէր . անանկ որ  
շատ քահանայներ պատարագ չը-  
րած Ալողիոսի հետ կը խօսէին սըր-  
բութեան վրայօք , որ սրտերնին Աս-  
տուծոյ սիրովը վառուի . ասկէ զնա

իմացիր թէ ինչ կրակ էր իր սիրտը  
որուն կայծակը ուրիշներուն սիրտը  
կը բռնկցընէր :

2. ինչպէս որ զԱստուած կը պա-  
տուէր՝ անանկ ալ իր մեծաւորները  
Աստուծոյ տեղ գնելով . երբոր ժա-  
մուն լուսարարին կամ իր մէկ վե-  
րակեցու դրուած եղբօրը հետ խօ-  
սելու ըլլար՝ ոտք կ'ելլար , զլովսը  
բաց՝ վար նայելով կը կենար , ին-  
չուան որ դիմացինները ամչնալով  
իր խոնարհութենէն՝ խնդրեցին մե-  
ծաւորէն որ Ալոգիոս անոնց դիմա-  
ցը անանկ խոնարհութիւններ չընէ :

3. Որովհետեւ սեղանատունը եր-  
բեմն կը կարդար , երբեմն ալ լրսող  
կ'ըլլար , կարդալը լմննալէն վեր-  
ջը մէկէն ազօթքի հետ կ'ըլլար . իսկ  
վերակեցուն չուզելով որ միորը  
շատ յոզնեցընէ՝ ապսպրեց իրեն որ  
սեղան ուշ եկողներուն հետն ալ  
կենայ հոն . ան տեղի պաշտօնա-  
տէրն ալ աս բանը չի դիտնալով՝  
յանդիմանեց զԱլոգիոս ու պատ-  
ժեց , թէ դունորընծայ ըլլալով ինչ-  
պէս ատենէ դուրս հոս կը դանուիս .

**Ալողիոս լոռթեամբ ապաշխարանը քը քաշեց , ու երկրորդ անգամ նորէն ամենուն առջին յանդիմաննելով ձայն չի հանեց : Վ երջը պաշտօնատէրն իմանալով վերակացուին հրամանը՝ սկսաւ գանդտիլ Ալողիոսի թէ ինչո՞ւ չըսիր . ան ալ պատասխանեց . Ըրած յանդիմանութիւններդ ինձի անուշ խօսքեր էին , բայց զուրիշներն չի գայթակղեցընելու համար՝ մէկ մ' ալ պատահելու ըլլար՝ միտքս դրեր էի որ յայտնեմ հրամանը :**

**Կ . Իր կանոնապահութիւնը չէ թէ սովորութեան համար էր կամ պարզ յօժարութեամբ մը , հապարոր սրտանց անոնց ետևէն էր . անանկ որ կրօնք մտնալէն վեց ամիս վերջը երբոր անցուցած վարքը խիստ դատաւորի մը պէս քննեց՝ մէկ ներելի մեղք մ' ալ չի կրցաւ դտնալ . ասով չէ թէ իրեն հպարտութիւն եկաւ , հապա սկսաւ վախնալ թէ չըլլայ որ խստութեան կամ կուրութիւն մէջ ընկած ըլլամ : Իրեն հետ եղողներն ալ իր վրայ պակասութեան մը նշան ալ չի տեսան :**

## Դ

**Յամենայն ժամ սղօրս արարէք**

ՄԱՏԹ.

1. Կընայիր տարակուսիլ Գրիզորիկ, թէ ինչպէս մարդ ամեն ատեն աղօթք պիտի ընէ. ահա օրինակ քեզի Ալոգիոսն, որուն կեանքը զրեթէ մէկ ժում աղօթքի կենալ մ' էր. իրեն պէտք չէր ժամուսենեակ, վասն զի ինքն էր կենդանի տաճար Հոգւոյն սրբոյ: Շատ հեղ չէր կընար սրտին ելլալը բըռնել, արցունքը աղբիւրի պէս երեսէն վար կ'ինջնար. շատ հեղ մեծաւորներն խուցը կը մտնային կ'ելլային ինքը չէր իմանար. վասն զի ինքը, իր հոգին ալ Աստուծոյ քով մտած էր:

2. Որովհետեւ կանոն էր յայտնելու, ինքն ալ յայտնեց մեծաւորին, որ վեց ամսուան մէջ՝ աղօթքի տաեն մտքի ցնդիլը թէ որ մէկ բե-

բելու ըլլար՝ ողջոյն քեզ մը ըսելու  
ատենի չափ հազիւ կ'ըլլար . ուրիշ-  
ները որ աղօթքի նստելու ատեն  
կը ջանային մտքերնին ամիսովելու,  
ինքը դրսէն ջերմեռանդութեան  
նշան չի տալու համար կը ջանար  
դինքը զսպելու . վասն զի մէկ մ' որ  
միտքը Աստուծոյ վերանար՝ երեսը  
կրակ կը կտրեր , սիրտը կը նետէր  
չէր կրնար ծածկել այն եռանդը՝  
զոր Քրիստոսի չարչարանքը ու հա-  
ղորդութեան խորհուրդը մտածե-  
լով կ'իմանար :

Յ. Այսչափ մտաւոր աղօթքով ու  
Աստուծոյ սաստիկ սիրով իրաւ հո-  
գին օրէ օր կը զօրանար , բայց մար-  
մինն որ հոգւոյն ընկերն է և շատ  
նեղութեանց չի կրնար համբերել՝  
սկսաւ վշտանալ , զլխուն ցաւը ա-  
ւելի սաստկացաւ . անոր համար  
մեծաւորներն պատուիրեցին որ ան-  
կէ վերջը չափ դնէ , միտքը շատ  
չի յոզնեցընէ . ասոր համար ալ ի-  
րեն ուրիշ բաներ յանձնեցին որ  
անոնց զբաղելով քիչ մը աղօթքէ  
ետ կենայ . բայց աղօթքին բոցը՝ որ

է սէրն՝ ով կրնայ մարել, կրակէ  
նետ մ' է որ սրտէն կ'ելլայ ու մէկ  
կերպով մը չի դաղրիր ինչուան որ  
Աստուծոյ չի հասնի:

4. Ալոգիոս Հնազանդութեան  
սիրով կ'աշխատի միտքն ուրիշ բա-  
նի տալու, բայց ան ապստամբ սիր-  
ոը, ան սուրբ ապստամբը՝ միշտ  
Աստուծոյ կը վաղէր. աղօթարա-  
նին չէր մօտենար որ չըլլայ թէ միտ-  
քը յափշտակուելով Հնազանդու-  
թեան դէմ ընէ. ձեռքի դործքերը  
ստէպ կը փոխէր որ միտքը անոնց  
վրայ պտըտի. բայց աս ինքզինքը  
բռնադատելը՝ միտքը աւելի յոզնե-  
ցուց, և աս կուռէն զլիսին ցաւը ա-  
ւելի սաստկացաւ, պէտք եղաւ որ  
մեծաւորներն հրամաննին ետ առ-  
նեն: Ամէն բանի յաղթել կ'ըլլայ,  
Աստուծոյ սիրոյն յաղթել չըլլար:

5. Մեծաւորը տեսնալով որ Ա-  
լոգիոս հիւանդու է, զինքն մէկ  
քանի ուրիշ տկար կրօնաւորներու  
հետ Նաբոլի զրկեց օդ փոխելու,  
հետը կար հիւանդ մ'ալ որ շատ  
առաքինի մարդ ըլլալով Ալոգիոսի

մեծ ուրախութիւն եղաւ , և իր  
հիւանդութեանը չի նայելով ամէն  
ծառայութիւն կ'ընէր ան քահա-  
նային : Նաբոլի հասաւ , սրբութիւ-  
նը ամենուն յայտնի եղաւ , ամէնքը  
խնդացին , բայց ինքը ասոր վրայ  
կ'ուրախանար որ հոն ալ նոր նե-  
ղութիւն կրցաւ քաշել , թէ օդէն  
թէ կեցած տեղէն : Վրան ծանր  
ջերմ մ' եկաւ , պէտք եղաւ զինքը  
նորէն Հոռվիմ դարձընել :

## Ե

Խմաստորիւն զովեսցէ զանձն իւր

ՍԻՐԱՔ

1 . Ալողիոս պղտիկուցմէ 'ի վեր  
սիրտը Աստուծոյ տուեր էր . բայց  
իրեն պատշաճ ուսմունքները սոր-  
վելու անհոգութիւն չըրաւ . վասն  
զի ուսման լոյսն ալ մարդուս հո-  
գին լուսաւորելու զործիք մ' է , չի  
կարծէր թէ ուսմունքը Աստուծոյ  
ծառայութեան արդելք կ'ըլլայ , ուր

որ հարկաւոր է։ Միլան փիլիսո-  
փայութիւն սորված ատենը՝ ընկեր-  
ներուն ամէնքն ալ անցուց . ասանկ  
ալ վանքին մէջ իր ջերմեռանդու-  
թիւնը արգելք չեղաւ հնազանդու-  
թեանը, բայց ինքը որ ամէն բանի  
մէջ առաքինութիւն կը փնտռէր,  
կ'ուզէր որ ուսմունք սորվի, բայց  
շատզէտ չերևայ, անոր համար շատ  
հեղ մոռնալ կամ չպիտնալ կը ցը-  
ցընէր, ինչպէս ինքը յայտնեց մե-  
ծաւորին, որ վրան զարմանալով  
ապսսլրեց որ անկէ վերջը զիտցա-  
ծը շտկէ շիտակ ըսէ . ինքն ալ այն-  
պէս ըրաւ։

2. Փիչ ատենէն աստուածարա-  
նութիւն սկսաւ սորվիլ նոյն ջան-  
քով։

3. Երբոր իրեն բան մը հարցը-  
ւէր՝ համեստութեամբ առանց բան  
ծախելու պատասխան կու տար,  
ամենեին իր կարծիքը չէր ուզեր  
առաջ տանիլ . անանկ կը խօսէր՝  
որ ամէնքը կը զմայլէին աւելի իր  
կերպին քան թէ զիտցածին վրայ .  
շատերը միայն կու զային իր խօսի-

Ա լսելու ու կը շահուէին իր առաքինի կերպէն . ասով յայտնի ըրաւթէ հոգի վաստըկելու համար հրաշազործութիւն ալէտք չէ , առաքինութեամբ շարժիլ ու խօսելն ալ կ'օգտէ : Վանքին մէջ երկու հարիւր հոգի կային , ամէնքն ալ բարի օրինակ կ'առնուին Ալողիոսէ : Մեղուն միշտ մեղք կը շինէ , սուրբն ալ միշտ բարի գործք :

## Զ

Ուսարուք յինէն զի հեզ և և խոնարհ  
սրտիւ

ՄԱՏԹ .

1 . Թէ որ մեծատանը աղքատին վրայ պարծիլը իրաւունք սեպէինք , որչափ աւելի պէտք էր որ սուրբերը պարծէին , որովհետեւ ճշմարիտ զանձէ իրենց ունեցած զանձը . մանաւանդ Ալողիոս որ մեծ իշխանի մը զաւակ ալ էր , ու դեռ տղայութեան մէջ ըլլալով սուրբ , հրեշ-

տակ լսելու ականջը վարժած էր .  
բայց ինքը ինչպէս որ սուրբերուն  
սովորութիւնն է իր վրայ պարծելու  
բան մը չէր տեսներ , ունեցած շը-  
նորհը պարզապէս Աստուծոյ տը-  
ւած ընծայ մը կը սեպէր . որչափ  
որ շնորհալի էր՝ այնչափ ալ պայ-  
ծառ խոնարհութեամբ զարդարած :

2. Իր ազնուական տնէ ըլլալուն  
վրայօք ամեննեին խօսք չէր ըրած , և  
ուրիշներէն ալ բան մը որ լսեր՝ ա-  
մը չնալէն սիրտը կը կոտրէր . որ-  
չափ ջանք ըրեր էր որ մեծաւորնե-  
րը իրեն դիւրութիւն մը չընեն փա-  
փուկ ու հիւանդու ըլլալուն հա-  
մար . պաշտօններու մէջ էն ցածը  
կ'ընտրէր , քաղաքը պտըտելու ա-  
տեն՝ կ'ուզէր ամենէն վարի եղբայր-  
ներուն հետ քալել :

3. Իրեն սիրելի ծառայութիւն-  
ներն էին ամաններ լուանալ , աւ-  
լել , կանթեղներուն եղ լեցընել , և  
ուրիշ ցած պաշտօններ՝ որ կը ջա-  
նար ուրիշի չի թողով , անոր հա-  
մար ընկերները կ'ըսէին՝ թէ ասանկ  
բաններու մէջ Ալողիոս միշտ յաղ-

**Թող է :** Ի՞նչ աղւոր յաղթութիւն ,  
բայց շատերուն ի՞նչ դժար . ոմանք  
կ'ընեն այսպիսի բաներ , բայց ո՛  
զիտէ երբեմն սնափառութեամբ ի-  
րենց վարձը չեն կորսնցներ :

## Է

**Լաւ է ունկնդրիւն քան զզոհ լնտիր**

Ս . ԹԵԳ .

**4 . Խոնարհութեան պառողն է**  
**Հնազանդութիւնը , և այնչափ պա-**  
**տուական է՝ որչափ որ հնազանդո-**  
**ղը սուրբ է . վասն զի սուրբը ար-**  
**դէն զիտէ Աստուծոյ հասնելու ճամ-**  
**բայն , բայց իր զիտցածը թողլով**  
**ուրիշի ցըցուցածին կը հետեի . եթէ**  
**Ալոգիոսի հնազանդութեան կա-**  
**տարելութիւնը իմանալ կ'ուզես**  
**հարցուր իրեն . Չեմ յիշեր որ մէկ**  
**հեղմ' ալ առած հրամանիս զանցա-**  
**ռութիւն ըրած ըլլամ , կամ հակա-**  
**ռակը ուղած ըլլամ , ըստ ինքը**  
**բերնովը . և ասով ալ ինքը իր վրայ**  
**համարմունք չունէր :**

2. Բայց հեղ մը մեծաւորը կամաւ երեսին զարկաւ թէ ինչպէս հրամանի դէմ մտքով յափշտակուած աղօթքը ըրեր էր. Ալոգիոս ըստ թէ անիկայ իմ ձեռքս չէր, բայց աս սուրբ ռանցառութիւնն ալ յանցանք սեպելով ամօթէն մարեցաւ, վերջն ալ մեծաւորին ոտքը ինկած՝ լալով թողութիւն ուզեց :

3. Կարելի է, Գրիգորիկ, զարմացար թէ անանկ ջերմեռանդութեան մէջ ալ ոլէտք է հնազանդութիւն. Հարցուր նորէն Ալոգիոսի, ու կ'իմանաս որ ինքը իր մեծաւորաց խօսքը Աստուծոյ պատղամ սեպելով կը հնազանդի. մեծաւորը զիտուն է թէ չէ իրեն հոգը չէ, բերանք անոնցն է՝ ձայնը Աստուծոյ է, ինքն ալ բոլոր սիրտը Աստուծոյ տուած՝ Աստուծոյ փոխանորդացը կը հնազանդի: Ետ աղէկ ըստ սուրբ մը, Հնազանդ մը չէ դատապարտուած, անհնազանդ մը չէ փրկուած: Դու ալ աս երկուքին մէկը սկիտի ըլլաս. քննէ զքեղ, ու զիտցիր որ շատ վտանգաւոր բան

է ազատ կամքը մարդուս հոգւոյն  
փրկութեանը, թող որ շատ հեղ  
մարմնոյ ալ վնաս է:

## Ը

Երբ վաճառեա զինչս քո

ՄԱՏԹ.

1. Կրօնաւորը վանք մտած ատե-  
նը ունեցածէն հրաժարելով՝ աղ-  
քատ կ'ըսուի. Ալոզիոս վանք չի-  
մտած իր պալատին, իր իշխանու-  
թեանը մէջն ալ աղքատ ապրեցաւ.  
ու ան ատենէն արժանի եղաւ Քրիս-  
տոսի երանութեանը՝ որ հոգւով աղ-  
քատութիւն սիրողներուն կու տայ.  
թազաւորներ, իշխաններ, որոնց  
հետ կը տեսնուէր՝ չէին կրնար ի-  
րեն հարստութեան սէր ձգել տալ.  
որովհետև ինքը ամէն բանի մէջ  
առաջին օրինակը կ'ուզէր Քրիստո-  
սէ առնուլ, կը տեսնէր որ Յիսուս  
մարի մէջ ծներ է, չոր փայտի մը  
վրայ մեռեր է, ասկէ ազդու դաս  
կրնա՞ր ըլլալ իրեն:

2. Թէ որ պալատին մէջ ճշմարիտ աղքատ էր, հապա վանքը որ բուն աղքատութեան տեղ է, ու զաղքատութիւնն ուխտով յանձն առնելու է, ինչ եղած պիտի ըլլայ. ինձի կ'երևայ թէ ինչպէս ազահները ստակ վաստրկելու հաղար հընարք կը բանեցընեն, Ալոգիոս աղքատութեան համար անոնցմէ աւելի ըրաւ. ամեն էն պղտի բաներուն մէջն ալ անարգը կը փնտոէր, սենեակը դրած պատկերներն ալ թէ որ քիչ մը զարդարուն ըլլային՝ սիրտը չէր հանդչեր. հրաման կ'առնուր կը փոխէր, ասանկ ալ թէ որ ընծայ մը ընդունէր: Առանց հրաման առնելու ամենեին և ոչ կտոր մը թուղթ տուեր կամ առեր էր:

3. Յիսուսեանց արդէն կանոնն ալ էր՝ որ ամենէն ցած բաները իրենց յարմար սեպեն. Ալոգիոս անանկ կը պած էր աս կանոնին որ պաշտօնատէրն ամենէն անպիտան բանն ալ տար ու հարցընէր թէ ինչպէս է, շատ աղէկ է կ'ըսէր: Թաղաւորի պէս մարդու դաւակ՝ մուրո-

զի պէս ապրիլ կ'ուզէր, բայց մուրողի չափ ալ բան չունէր. վասն զի իրեն տուածներէն ալ սրտով հրաժարերէր, ասէ հոգւովադրասըլլալը: Մարդկանց մեծ մասը ունեցածնին շատցընել կը մտածեն, փոխանակ մտածելու թէ մեր բնութեան աղքատութիւնը աս անցաւոր բարիքներով չի հարստանար:

## Փ

Որ առևայ զանձն իւր յաշխարհիս  
յայսմիկ, ՚ի կեանսն յաշխուեականս  
պահեսցէ զնա

ՅՈՎՀԱՆՆԵՍ

1. Մէկն որ ազնուականի մը յոյսըլլայ, պալատներու մէջ մեծցած, թագաւորներու, դքսերու ձեռքէ ձեռք պտըտած, կարծես թէ բնական իրաւունք մը կը սեպէ իրեն և միտքը կը դնէ՝ թէ նեղութիւն քաշելը իմ վիճակիս համար չէ, կամ թէ պէտք է որ ես հանգստու-

թեամբ ապրիմ, ինչպէս որ իմ ծը-  
նողքս կ'ապրին և իմ պատույս կը  
վայլէ . Ալոգիոս շատ հեռու էր  
այսպիսի մտածմունքէ :

2. Իմաստունը կըսէ . Թէ որ  
հարստութիւնը զետի պէս քեզի  
զայ, դու հեռու կեցիր . Ալոգիոս  
ալ ճշմարիտ ասանկ ըրաւ, թէ հա-  
րստութեան և թէ հանգստութեան  
մէջ . Վանք չի մտած մարմնոյն ճրգ-  
նութիւնը աւելի էր, վանքը մտնա-  
լէն վերջը մտքինը աւելցաւ . միայն  
իրեն սուրբ յօժարութիւնը ու հնա-  
զանդութիւնը ինչ ճզնութիւն որ  
ըսես՝ կ'արժէր, ու անոնց վարձն  
ալ առաւ :

3. Քրիստոսի միամիտ աղաւնի  
էր, բայց տես թէ ինչ խորազէտ  
հնարք մ' ալ մտածեց . Երբ արտա-  
քին ճզնութիւններն դաղրեցաւ,  
ինքինքն խոնարհեցընելու սաս-  
տիկ ջանք մը ըրաւ, ու անոր հա-  
մար հրաման առաւ՝ որ սպանիու-  
րէն քարոզի պէս խրատներ խօսի  
շատնց առջեր, որ լեզուն աղէկ  
չի կրնալով խօսիլ՝ արհամարտի

**ամօթիյնայ . շատ հեղ կ'երթար մեծաւորաց ինքզինքը կ'ամբաստանէր ամէն զործքերուն մէջ պակսութիւն մը զտնալով որպէս զի յանդիմանութիւն լսէ :**

**4 . Եւս առաւել Աստուծոյ դիմացը կը խոստովանէր իր տկարութիւնը . բայց անանկ երեսը կախած տրտում չէր երեար , ինչպէս կ'ընեն երբեմն ջերմեռանդութիւն չի զիտցող ջերմեռանդներ . իբրև թէ իրենք իրենց վրայ բարկացած ըլլան , բայց անանկ բարկութեամբ մը որ շատ հեղ ծայրը պարծենկոտութեան կը տանի . հապա խոնարհութեամբ կ'ըսէր այն խելացի խօռքըն . իմ պարտէզիս բերքը աս է . ով տէր , թէ որ ինծի չօգնէիր ալ զէշ պիտի ըլլար , թէ որ նորէն օդնես առելի աղէկ կը բերէ :**

## Փ

**Լուծ իմ քաղցր է և քեռն իմ  
փոքրոցի**

ՄԱՏԹ.

1. Մարդիկ բռնաւորներէն ա-  
մելի իրենց կրիցը զերի եղած էին,  
Քրիստոս ողորմելով իրենց՝ իրեն  
անուշ լուծը տուաւ, առնողին վրայ  
իր թեթև բեռը զրաւ. իրմէ վերջը  
ինչուան աս օրս այն լուծը առնող-  
ներ պակաս չեն. կրօնաւոր եղողը  
աս լուծին ժառանգն է. ոչ մեծ  
թագաւոր մը՝ որ բիւրաւոր մարդ-  
կանց՝ Աստուծոյ պէս կը հրամմէ,  
ոչ մէկ հարուստ մը՝ որ արծաթը  
խաղալիկ կը սեպէ, ոչ հարսնիք  
ունող փեսայ մը այնչափ ուրախու-  
թիւն կրնայ ունենալ, որչափ մէկ  
նորահաս կրօնաւոր մը երբոր պայ-  
ծառ մտքով՝ ու յօժար սրտով Աս-  
տուծոյ և մարդկան առջև կ' ուխտէ  
Ազրատոթիւն, Ողջախոհութիւն և

**Հնազանդութիւն .** վասն զի բոլոր  
աշխարհք կը թողու . իրեն ինչ կը  
մնայ , — միայն Առտուած :

**2.** Ո՞վ կրնայ չափել Ալողիոսի  
խնտումը ուխտին օրը որ ըրաւ նոյ-  
եմբեր 15են 1587են . վանք մտաւ  
նէ ուրախացաւ երկայն ատեն ծո-  
վու մէջ պտըտած ամէն հովի ան-  
ցած նաւու մը պէս , բայց ուխտած  
օրը ձգեց այն խարիսխը որն որ  
տասնըհինգ տարի առաջ ձգելու  
փափաքեր էր :

**3.** Իր կեանքը մինչև այն ատեն  
Աստուծոյ նուիրեր էր , անկէ վեր-  
ջը հանդիսական ուխտով բոլորա-  
կան ողջակէղ մը ըրաւ : Արդեօք  
աշխարհիս մէջ ասոր նման քանի  
հատ ողջակէղ եղեր է : Այն տղան  
որ ծնած չի ծնած ու բոլոր կենացը  
մէջ աշխարհէ հրաժարելու հետ  
էր , հիմայ միայն երկնքի համար  
սկսաւ ասլրիլ , և իրաւցընէ ալ ան-  
կէ վերջը սրբութեան մէջ առաջ  
երթալը յայտնի ցըցուց :

**4.** Դու կը զարմանաս թէ ուրեմն  
Ալողիոս առաջինչ պակասութիւն

ունէր . չէ . բայց Աստուծոյ շնորհ-  
քը ու սէրը կրակ մ' է սրբոց սըր-  
տին մէջ , պէտք է որ երթալով  
տարածուի շատնայ . չէ նէ թէ որ  
սրբութեան չափ մը ըլլար , Աս-  
տուած ինչո՞ւ երկայն կեանք պիտի  
տար . Աստուած անչափ է , իր  
զանձն ալ անհատնում է : Ահա ա-  
սանկ եղաւ Ալողիոսի կրօնաւոր ու  
կղերիկոս ըլլալէն վերջը . (վասն զի  
քանի մը ամսէն ետքն ալ չորս  
փոքր աստիճանները առաւ ) : Ա-  
ռաքինութեան ճամբայներուն վար-  
ժելէն վերջը՝ մարդ կը կոխէ ան  
ճամբայն որուն ծայրը Աստուծոյ  
քով կը լմննայ :







## ԳԻՐՔ Գ

ՍՈՒՐԵ ԱԼԱԶԴԻՈՍԻ ՈՒԽՏԵԼԻՆ  
ԽՉՈՒԱՆ ԵՐՃԱՆԻԿ ՄԱՀԸ



### Ա.

Որ ողորմածոքիւն տանի հօրն, ոչ  
մոռացի առ Աստուած

ՍԻՐԱՅ

1. Վատութոց սիրոյն մեծ նշանը,  
ըստ սիրոյ աշակերտը, զրնկերն  
սիրելն է. Ալոգիոս որ աստուա-  
ծային սիրոյ կրակ մը դարձեր էր՝  
սլետք էր որ եղբայրսիրութեան  
բոցն ալ ծաւալէ. անանկ բոց մը  
փայլեց իր վարքէն, իր անուշ խը-  
րատներէն, որ շատ մարդ անով  
վառուեցան, ջերմեռանդութեան  
եկան. շատ եղբայրական սիրոյ

զործքեր ալ կ'ուզէր ընել Ալողիոս ,  
բայց հնաղանդութեան տակ ըլլա-  
լով միայն հրամանի դէմ չեղածը  
կ'ընէր . ինչուան հիւանդ եղած ա-  
տենն ալ ուրիշ հիւանդներու կը  
ծառայէր :

2. Աշխարհքէ հրաժարելով չէր  
հողար իր ընտանիքը , ինչպէս ա-  
ռաջ ըսինք . բայց այն արեան  
պարտքն՝ որ Աստուած դրած է աղ-  
զականաց մէջ չարհամարհելու օրի-  
նակ մը ցըցուց որ ասանկ աշխար-  
հատեաց սուրբի մը վրայ աւելի  
զարմանալի է : Իր եղբայրը Ռո-  
տոլփիոս մարգէզն՝ Մանդուայի դըք-  
սին հետ կոխւ մը ունեցաւ՝ որ եր-  
թալով մեծցաւ , դադրեցընելու ճար  
չեղաւ . ասոնց երկուքին մայրերն  
ալ Ալողիոսի գրեցին թէ աս թշնա-  
մութիւնը մեր ցեղին մեծ նախա-  
տինք է , մէկն ալ չի կրնար ճար  
մը ընել , բայց եթէ մեծաւորիդ հրա-  
մանովը դու դաս ու հաշտեցընես :

3. Ալողիոս այնպէս աշխարհքի  
բաներէ ետ կեցեր էր որ կրնար  
ըսել թէ ես ալ ճեռուըներս լուա-

ցեր եմ, ինչպէս և ինչ նորէն աղտու-  
տեմ. բայց ինքն որ զիտէր Աստու-  
ծոյ համար զԱստուած թողով, աս-  
բանիս համար շատ աղօթքէ վերջը  
խորհուրդ հարցուց խոստովանա-  
հօրը որ էր անուանի Պելլարմինոս  
կարդինալն . ան ալ ըստ թէ մե-  
ծաւորիդ տուած խրատին հնադան-  
ղէ՝ կը յուսամ որ հնագանդութիւնդ  
շահաւոր ըլլայ : Մեծաւորն մէկէն  
հրամմեց որ երթայ Մանդուա՝ բա-  
ները հոգայ : Շուտով ելաւ առա-  
քինի կրօնաւորն , ընկերներէն  
զատուեցաւ ամէնքը լացընելով. հե-  
տը եղբայր մը տուին , մէկ տեղ  
ճամբայ ընկան սեպտեմբեր ամսուն  
մէջ 1589ին :

4. Ալոգիոսի հայրենիքը դառ-  
նալը՝ հայրենիքէն ելլալէն ծանր էր,  
միայն հնագանդութիւն ու սէրն է  
որ ամէնդժուարութիւնն կը դիւրըն-  
ցընեն . ամէն տեղ ուսկից որ ան-  
ցաւ՝ բարի օրինակ տուաւ ու կամ-  
քին զէմ պատիւ զտաւ : Մանդուա  
հասնելուն պէս զրեց եղբօրը . Ու-  
տորիոս մէկէն կառք մը զրկեց ու

ինքն ալ ելաւ եկաւ եղբայրը զիմա-  
տորելու ու փաթթուելով ուրախու-  
թեամբ բերաւ Գասղիլիոն :

5. Փաղքին մէջ ճայն ելաւ թէ  
Ալոգիոս եկեր է . Ալոգիոս եկեր  
է , ըսին ամէնքն մէկ բերան . մէ-  
կէն հրացաններ պարպեցին , թա-  
գաւորի պէս ընդունեցան զինքն .  
պատուհաններէն պատուի անուն-  
ներ տալով իբրև իրենց իշխանը  
կը հրամցընէին , ճամբան պատա-  
հողները ծունկ կը դնէին սուրբի  
տեղ դնելով զինքը . մայրը որ տաս-  
ւերկու մղոն հեռու տեղ էր՝ լսա-  
ծին պէս՝ մէկէն կառքը մտած Գաս-  
ղիլիոն դարձաւ . սանդուխէն վեր  
վաղեց կայծակի պէս , տեսաւ իր  
առաքինազարդ սիրուն ու սքանչե-  
լի զաւակը . չի համարձակեցաւ պլլ-  
լրւելու անոր՝ որուն որ պղտիկուց-  
մէն 'ի վեր իմ հրեշտակս զրեր էր  
անունը , հիմայ այն սքանչելի դէմ-  
քը նոր շնորհքով մը լցուած տես-  
նալով ծունկ ինկաւ իր տղուն զի-  
մացը օրհնութիւնը ուզեց :

6. Բայց Ալոգիոս շատ կամըչ-

նար ասանկ ամենէն պատուիելուն . միայն մեծաւորին հրամանին համար՝ պալատը բնակեցաւ , բայց իր կամքովը բան մը չուզեց , ինչ որ հարցընէին , զիտցածնուղ պէս ըրէք , կ'ըսէր . թող չէր 'ի տար որ մէկը ծառայէ , եղբօրը տուած կառքըն ալ չառաւ , միշտ ոտքով կ'երթար , և այնչափ զինքը պատուղու բարենող կ'ըլլար , որ ինքն ալ բարե տալու համար կը ստիպուէր զրեթէ միշտ զլուխը բաց պտըսելու :

7. Երբոր ձմեռն հասաւ Ալոգիոս  
Պրէշիայի Յիսուսեանց վանքէն հին  
հազուստներ բերել տուաւ , որ տունէն բան մը չառնու . մօրը ճարն  
հասաւ , ջուխտ մը բաճկոն տուաւ  
որ զոնէ անոնց մէկը հաղնի , մէկալն ալ հետը եղողին տայ . Ալո-  
գիոս չառաւ մօրմէն . բայց երբոր  
այն եղբայրը մօրը խրատովը ըսաւ ,  
թէ ողորմութեան համար է տուածը , ու դու ալ թէ որ զքեզ աղքատ  
կը ճանչնաս պէտք է որ առնուս ,  
Ալոգիոս սիրով ընդունեցաւ ու հա-

զաւ . Փառք տուաւ Աստուծոյ ասանկ ողորմութեան մը համար՝ ինչպէս որ սուրբն Ալէքսիանոս հօրք ծառայներուն ձեռքէն առած ատենը :

8. Ալէկ անզամ մ' ալ որ հօրեղբօրը պալատը զացեր էր , ( վասն զի վէճը հոգալու համար անզաղարքաղաքէ քաղաք կը պտըտէր ) զիշեր ատեն ճամբան կորսնցուց , խիստ ուշ հասաւ . բայց հօրեղբայրը ջահերով , զինուորներով իշխաններով զիմացը ելաւ , բերաւ զինքը ամէն կերպով զարդարուած սենեակ մը . Ո՞հ ըստ Ալոգիոս իր կրօնաւոր եղբօրը , տես թէ մեղքերնուս համար ինչ տեղ ընկանք :

9. Քանի մը ամիս աշխատելէն վերջը երբոր աղէկ մը իմացաւ կը ուուին ամէն պատճառները , Աստուծմէ լոյս խնդրեց , զնաց Ամադուա զքսին . ասիկայ որ շատ իշխաններու աղաչանքին չէր լըսած ու խիստ աւրուեր էր մարգէզին հետ , Ալոգիոսի հետ ժամուկէս իւս խօսելուն պէս՝ յաղթուեցաւ

անոր սրբութենէն . կռուին առիթն  
էր մէկ երկիր մը որ մէկմէկէ կ'ու-  
ղէին առնուլ , մէկէն Շոտոլփոսին  
թողուց անիկայ , ու խոստացաւ ալ  
որ անոր անունը շտկէ . վերջը Ա-  
լողիոս բերաւ եղբայրը դքսին քով  
ու սիրով հաշտեցուց : Երկինք ու-  
րախացաւ , աշխարհ ալ զարմացաւ :

## Բ

Դաշը էր րոյս աշխարհի

ՄԱՏԹ.

1. Ինչու որ արևն իր լոյսը չի  
կրնար ծածկել , և ոչ մուշկն իր  
հոտէն դադրիլ , Ալողիոսի սուրբ  
վարքն ալ ինքիրէն ամէն տեղ կը  
յայտնուէր : Մանղուա եղած առե-  
նը Յիսուսեանց դպրատանը մէջ  
իրեն քարոզ մը տալ տուին , որ  
միայն մեծաւորներու ու զիսաւոր  
քահանայներու պատիւ էր . Ալո-  
ղիոս չի հնազանդիլ չէր կրնար ,  
անանկ սրբութեամբ մը խօսեցաւ

որ լոռղները վարպետ ու աշկերտ  
կը կարծէին թէ ան միջոցին Հոգին  
սուրբ փառքով Ալողիոսի սիրտը  
ինջած ըլլայ,

2. Երբոր Գասղիլիոն բանը լր-  
մընցընելէն վերջը Միլան երթալու  
եղաւ, Բիաչէնցա քաղաքը քահա-  
նայ մը եկաւ ասոր հետ տեսնուե-  
լու. սենեակը մոտաւ տեսաւ որ Ա-  
լողիոս ոտքի ամանները կը մաքրէ.  
աս քահանայն ատենօք տեսած էր  
զինքը իր պալատին փառքին մէջն  
ալ, զարմացաւ մնաց իր խոնար-  
հութեանը ու աղքատութեանը վր-  
րայ. Ալողիոս պալատն ալ տունն  
ալ իր վանքը կը դարձընէր, ճըլ-  
նութիւնները միշտ հետն էին, ինչ-  
պէս որ ճառագայթը լուսէն չի զա-  
տուիր :

3. Միլանի վանքը աստուածա-  
բանութիւն կը սորվէր հոն տեղի  
եղողներուն հետ, աւելցած ատենը  
հրաման առաւ ու խոհակերանոցը  
կ'աշխատէր, պնակները կը լրւար,  
ջուր կը քաշէր, և ասոնց նման ա-  
նարդ ճառայութիւններ կ'ընէր .

կը նայէր որ ընկերներուն մէջ ետքինը երևայ թէ պատուով թէ կարզով. որ մ' ալ իր կարկըտած հին զգեստը հաղաւ եկաւ սեղանատուն ամենուն զիմացը թողութիւն խընդրեց բանի մը վրայօք, որ ինքը յանցանքի տեղ դրեր էր :

Կ. Առվորութիւն կար Միլան որ կրօնաւորներն երբեմն հրապարակի մէջ քարոզ կու տային. Ալոզիոս շատ խնդրեց մեծաւորէն. որ ան քարոզ տուողին հետ երթայ սպասաւորի պէս. ճամբայները ով որ տեսնար՝ կը կանչէր որ զան անոր քարոզը մտիկ ընելու, ինքն՝ որ Գասղիլիոն մէկ քարոզով հարիւրաւոր մարդիկ զղջումի բերաւ։ Ուրիշ հեղալ երբոր մուրալու համար կը դրկուէին եղբայրները՝ շատ աղաչանքով հրաման կ'առնուր որ խոնարհութեան համար ինքն ալ մուրայ, և անանկ ուրախութեամբ կը սլուտէր կարկտած հաղուստովը ինչպէս թէ զանձ ժողվելու կ'երթար :

Ծ. Վանք եղած ատենն ալ, մանաւանդ երբոր իշխան մը կամ եւ

սլիսկոսլու մը զալու կ'ըլլար , ձող  
մը կ'առնուր , ծայրը աւել անցու-  
ցած սրահները կը պարտէր սար-  
դի ոստայները մաքրելով , որպէս  
զի անով եկողին երևայ թէ իր ձեռ-  
քէն ուրիշ բան չի զար բայց եթէ  
աս սլաշտօնը , ու անով արհամար-  
հուի . բայց բանը զիտցողները բա-  
րի օրինակ կ'առնուին :

## Գ

Պիտուական է առաջի տեսան մահ  
արբաց իւրոց

ՍԱՂՄԱՍ

1 . Թագաւոր մը որ իր ծառայնե-  
րուն վարձք խոստացած ըլլայ , թէ  
որ մեծ զորձք մը ընելու ըլլան , իր  
տղան ալ անոնց թիւը խառնելով .  
որպէս զի մեծ փառքի հասցընէ  
զինքը ամենուն առջին , կը թողու-  
զանիկայ որ երկայն ատեն երևելի  
զորձքերով անուանի ըլլայ . վերջը  
կը դառնայ . Աս քանի մէկ իմ սի-

ըելի զաւակս առանց վարձքի պիտի  
թողում, կ'ըսէ, իրմէ քիչ աշխա-  
տողները վարձքերնին առին ու կ'ու-  
րախանան թող զայ իմ սիրելի տը-  
ղաս ալ իմ փառքս հանդիստ վայե-  
լելու : Ասանկ ալ Աստուած տես-  
նալով իր սիրուն որդւոյն Ալոգիոսի  
աշխատանքը՝ փափաքեցաւ իրեն  
աստուածային փափազովը զինքը  
հանգչեցընել :

2. Մէկ առաւօտ մը որ անիկայ  
ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէք՝  
սրտին աղղում մը եկաւ . թէ քիչ  
տոենէն զքեղ պիտի ինծի կանչեմ,  
ձեռքէդ եկածին չափ առաջ զնա  
կատարելութեան մէջ : Նոր կրակ  
մը վառեցաւ Ալոգիոսի սուրբ սրբ-  
տինմէջ, նոր վարք մը սկսաւ դէպ  
'ի սրբութիւն երթալով . մէկ փա-  
փազ մը մէկ համակամութիւն մը  
ունեցաւ Աստուծոյ հետ՝ որ առջին-  
ները մոռցուց :

3. Կը յօժարէր Հռովմ դառնալ,  
բայց որովհետեւ իր բոլոր կամքը  
թողուցեր էր ձայն չի հանեց, ին-  
չուան որ Հռովմ եղողները աղաչե-

ցին մեծաւորին որ իրենց բարի օրինակ տուողն , իրենց մխիթարութիւնն ետ կանչէ Միլանէն . Երբոր հրաման եկաւ՝ Ալողիոս այնչափ ուրախացաւ որ սկսաւ խղճմտանքը ընել՝ չըլլայ թէ ասով իմ կամքս կատարած ըլլամ , աղաչեց քահանայի մը որ պատարագ մը զուրցէ , որպէս զի թէ որ Աստուծոյ կամքին դէմ է երթալը՝ արզիլէ :

Կ . Մայիսի մէջ 1590ին ելաւ ճամբայ մէկ երկու քահանայի հետ , որոնք զինքը կը հոգային , անոր համար ինքն ալ անոնց անուշ զանգատ կ'ընէր թէ զիս չափէ գուրս կը հոգաք կը պատուէք : Երբ Լոմպարտիա մտան՝ պատահեցան շատերու որ ան տարուան մէջ սովէն աղքըտցեր էին . քահանային մէկը՝ պէտք է փառք տանք Աստուծոյ , ըսաւ , որ զմեզ ասոնց պէս չէ ըրած : — Աւելի փառք տանք , ըսաւ Ալողիոս , որ անհաւատի զաւակ չենք եղած » : Աս կ'ըսէր , վասն զի Աստուծմէ 'ի զատ՝ իրեն ամէն բան հաւասար էր . աղքատութիւնն ալ

Հարստութիւնն ալ իր աչքին բան  
չէին . որովհետև իր սիրտը անփո-  
փոխ էր :

5. Աիենա քաղաքը Աստուածա-  
ծնայ մատու մը կար , որ առաջ  
սուրբ Կատարինէ Աենացիին սե-  
նեակն էր . Ալոգիոս այս սուրբ  
կուսին ջերմեռանդ ըլլալով , հոն  
տաք սրտով մը սրբութիւն առաւ .  
վերջը ուրիշներուն խնդրելովը ան  
տեղի գոլրատան տղոցը խրատ մը  
խօսեցաւ . անոնց սիրտը անանկ  
շարժեց իր սուրբ խօսքերովը որ  
տղոցմէ շատերը ընտանիքնին թո-  
ղուցին կրօնաւոր եղան : Երբոր  
Հռովմ հասաւ , մեծաւոր , քահա-  
նայ , եղբայր՝ ընկեր անանկ ուրա-  
խացան , ինչպէս թէ արքայութե-  
նէն սուրբ մը դար իրենց : Թէ որ  
շատ ատենէ վերջը տեսած բարե-  
կամին վրայ մարդ կ'ուրախանայ ,  
ո՞րչափ աւելի հոգին իրեն բարեկա-  
մին ու իրեն բարիք ընողին վրայ :

## Պ

**Եղերուք կատարեալը , որպես և Հայրն  
ձեր երկնաշոր կատարեալ է**

ՄԱՏԹ.

1. • **Քրիստոնէին կեանքը պէտք**  
**է որ կատարելութեան սանդուխ**  
**մը ըլլայ , ծայրը Աստուած կեցած :**  
**Ալոգիոսի վարքը ասանկ սանդուխ**  
**մը եղաւ . մի ըսեր թէ ան շատոնց**  
**կատարեալ էր . Տէրն մեր ըսաւ ,**  
**Եղերուք կատարեալք որպէս և**  
**Հայրն ձեր երկնաւոր կատարեալ**  
**է . սրբութեան չափը սերովբեները**  
**չեն՝ հապա Աստուած է՝ որուն հաս-**  
**նիլ չըլլար . անոր համար Ալոգիոս**  
**միշտ կրցաւ աւելի կատարեալ ըլ-**  
**լալ , աւելի Աստուծոյ մօտենալ :**

2. **Ինչպէս որ ճամբորդը՝ բլրէ**  
**մը զլուխը դարձուցած կը զիտէ քա-**  
**լած տեղերը , դու ալ որ մէկիկ մէ-**  
**կիկ տեսար Ալոգիոսի առաքինու-**  
**թիւնները , տես աս զեղեցիկ ճամ-**

բայն ալ որ քիչ ատենէն զինքը արքայութիւն սկիտի հանէ : Ինքն իր բերնովը երբոր Հռովմ հասաւ նէ ըստ . Ես իմ մեռելներս թաղեցի , ասկէ վերջը կը մնայ որ աւելի աղէկ անցընեմ իմ վարքս : Եւ ըստ ակէս ամէն գործոցը մէջ կատարելութիւն կը ցուցընէր :

3. Մէկ երկու հոգենոր խրատներ ու աստուածաբանութեան ճառեր գրեր էր , տարաւ դասատուին տրւաւ , որ քովը պահէ . Ես ամէն բանէս հրաժարեր եմ , ըստ , միայն ասոնք մնացեր են՝ որ իմն է ըսելով կրնան սիրտս իրենց քաշել . անոր համար խնդրեմ աս ծանրութենէն աս փորձութենէն զիս աղատէք :

4. Ալոգիոս ամենուն անանկ սիրելի եղած էր որ ամէնքը իր վրայ կը նայէին , ասոր համար ինքը ընդհակառակն միշտ կը ջանար հնարք մը զտնալ ուրիշներէն աւելի չի սիրուելու , հապա թէ որ կարելի է աւելի քիչ : Մեծաւորներն ալ չէին կրնար ասանկ գանձի վրայ չի դողդրդալ , բայց Ալոգիոսի աս բանիս

**ցաւելուն համար , կը ջանային դըր-  
սէն նշան չի տալ :**

**5 . Բայց ինչպէս որ սիրելին հե-  
ռացած ատենը աւելի փափազելի  
է , և ինչպէս որ արեւուն ճառագայթ-  
ները մտնալու ատեն աւելի աղուոր  
են , ասանկ Ալողիոս ալ փառքէ  
փախչելով սիրելի կ'ըլլար , մանա-  
ւանդ աս ետքի տարին որ անուշ-  
ընութեան վրայ մէկ նոր քաղցրու-  
թիւն մըն ալ աւելցուց . ով որ տես-  
նար զինքը՝ կ'ուզէր հետք խօսիլ ,  
որ միշտ Աստուծոյ վրայ կը խօսէր ,  
և անանկ ջերմեռանդութիւն կ'իմա-  
նային խօսողները՝ որ կարծես թէ  
նոր հաղորդուած ըլլան :**

**6 . Իսկ ինքն Ալողիոս երկնքի  
օրբոց պէս սկսեր էր զԱստուած  
անդադար վայելել . քանի որ Աս-  
տուծոյ վրայ խօսեր կամ կարդար  
կամ լսեր՝ ինքնիրմէ զուրս կ'ելլար .  
ինչպէս անդամ մը սեղանատունը  
Աստուծոյ սիրոյն վրայ բան մը կը  
կարդային , չի կրցաւ բան ուտել ,  
սիրար տակն ու վրայ եղաւ , ինք-  
զինքն կորսնցուց . եկան հարցու-**

ցին թէ ինչ ունիս , ինչ կ'ուզես .  
Ալողիոս տեսնալով որ այլայլու-  
թիւնը իմացեր են , խպնելով լոեց :

7. Ինչուան աս ատենս Ալողիոս  
ուրիշի հետ մէկ սենեակ կը բնա-  
կէր . աս ետքի տարին մեծաւորք  
հրամանեց որ զատ խուց մը ընտրէ  
իրեն . ինքն ալ զտաւ սանդուխին  
վրայ պղտի խուց մը , ուր որ մարդ  
չէր բնակած , հազիւ թէ անկողնէն  
զատ աթոռ մը ու ծնրանոց մը զնե-  
լու տեղ կար , ան սենեակը մանա-  
ւանդ թէ այն ծակը՝ իր թագաւորին  
պալատէն վեր դրաւ ու հոն նըս-  
տաւ : Մարդս սուրբ ընողը տեղը  
չէ , հասլա մարդն է որ զաեղն սուրբ  
կ'ընէ , խշտեակն ալ Աստուծոյ ա-  
թոռն կ'ընէ :

8. Առվորութիւն էր որ մէկ խուց  
կեցողներն մէկ մէկու վրայ տեսած  
սլակսութիւննին ըսեն . ան եղբայրն  
որ երկու տարի Ալողիոսի հետ կե-  
ցաւ , սլակսութեան շուքն ալ չէր  
տեսած վրան , և ինչպէս կընար  
տեսնալ՝ երբոր Ալողիոսի խոստո-  
վանահայրը անոր խոստովանու-

թիւնը լսելով նոր լոյս ու բարի օ-  
րինակ կ'առնուր . ինչպէս կրնար  
վրան յանցանք մը դտնալ , երբոր  
շատերը եղան որ զինքը մարդէ վեր  
դնելով չէին համարձակեր իրեն մօ-  
տենալու :

9 . Ալոգիոս ան ատենէն տեսաւ  
իր վիճակին աղէկութիւնը , ան ա-  
տենէն սկսաւ ըսել թէ կը փափա-  
զիմ աս վիճակիս մէջ մեռնիլ՝ քա-  
նի որ քահանայ չեմ եղած . վասն  
զի քահանայութեան ծանը պաշտօ-  
նը վրաս զայ նէ՝ կարելի է տակէն  
պակասաւոր զանուխմ : Թէ որ ա-  
մէն քրիստոնեայ հոգւոյն սրբոյ տա-  
ճար պիտի ըլլայ , մէկ քահանայ մը  
ինչպիսի՛ տաճար պիտի ըլլայ . թէ  
որ տապանակին մէկ արատաւոր  
բան ալ մօտեցընելլ հոն օրէնքին մէջ  
մեղք էր , քահանայն ինչ զզուշու-  
թիւն պիտի ընէ՝ իր սրտին տապա-  
նակին , ուր Քրիստոս ամէն օր կը  
հանգչի իր փառքովը . թէ որ Ալո-  
գիոսի վախ կուղար աս բանէն ,  
մենք պէտք է դողանք :

## Ե

**Հյանդ եի և տեսիք զիս**

ՄԱՏԹ.

1. Խոռվիա սովէն վերջը գէշ  
ցաւ մը ընկաւ, որ շատ մարդ զե-  
րեղման տարաւ. շատոնք զիտնա-  
լով որ Հոռվիմ աղէկ կը հոգան կա-  
րօտները՝ հոն թափեցան, ցաւն ալ  
հետերնին բերին, այն ցաւն՝ որ  
Ալողիոսի մահուան կարապետ ե-  
ղաւ : Յիսուսեանք շատ ողորմու-  
թեան գործքերէ՝ի զատ, մէկ հիւան-  
դանոց մ՝ ալ շինեցին ու ձեռուընուն  
եկած օդնութիւնը կը նէին նեղելոց:  
Ալողիոս ալ զտաւ իր փնտոած ա-  
ռիթն, եղբայրսիրութեամբ լրցած  
սիրութ թափելու կարօտներուն վր-  
րայ :

2. Տընէ առն տեղէ տեղ կը պար-  
տէր ողորմութիւն մուրալու . մէկ  
իշխան մ՝ ալ որ առաջ Ալողիոսի  
ճանչոր էր, այն օրերը Հոռվիմ ե-

**կեր էր . Ալողիոս հրաման տուաւ**  
**ու զնաց անկեց ալ մուրալու . իշ-**  
**խանը երբոր տեսաւ այն թագաւու-**  
**րի պէս տղան կարկըտած հին կա-**  
**պայ մը հազած , վզէն ողորմու-**  
**թեան քսակը կախած , ամչնալէն**  
**չէր զիտեր ինչ ընէ . ողորմութիւն**  
**տուաւ , բարի օրինակ զնեց :**

**3 . Բայց Ալողիոսի լայն սրտին**  
**աս զործքն ալ պղտիկ էր , մեծաւու-**  
**րաց այնչափ աղաչեց այնչափ խե-**  
**լացի խօսեցաւ՝ որ վերջապէս հրա-**  
**ման տուին հիւանդանոցին մէջ ծա-**  
**ռայելու : Ո՞վ կընար անոր ուրա-**  
**խութիւնն և սէրն չափել որով կը**  
**ծառայէր հիւանդաց . շատը իր օ-**  
**րինակէն վառուած իրեն հետեւ-**  
**ցան . ինչուան մէկն ալ սիրով կը**  
**մեռնիմ կ'ըսէր , հոս , որովհետեւ**  
**Ալողիոս ասանկ տաք սրտով կ'աշ-**  
**խատի . և ըսածին պէս սիրով ծա-**  
**ռայեց ու առջինը եղաւ մեռնողնեւ-**  
**րուն մէջ այն վանքէն . Ալողիոսի**  
**ալ նախանձը շարժեց :**

**4 . Ամենէն վտանդաւոր ամենէն**  
**աղտոտ հիւանդներուն քովը կ'եր-**

թար կը ծառայէր . մէկուն անկողինը կը շինէր , մէկալին կերակուր կը կերցընէր . մէկը կը լրար , մէկալը կը հազուեցընէր . մէկը կը մխիթարէր՝ մէկալին հետ աղօթք կ'ընէր . Աստուծոյ ու եղբարց սէրը զետի պէս կը բղխէին սրտէն ու բերնէն . Պօղոսառարելոյն ըսածին պէս ամենուն հետ ամէն բան եղաւ որ զանոնք շահի : Լացողին հետ կու լար , մխիթարուողին հետ կը մխիթարուէր որ զանոնք շահի :

5. Ալ ի՞նչ բան կը մնար : — Մեռնողին հետ մեռնիլ : Ա՛յս . աս ցաւալի բան է . բայց Ալողիոսի չէ , հապա իր ընկերներուն և զինքը ճանչցողներուն . ինքն որ ամէն մեռնողի երանի կու տար , օր մը ըսաւ Պելարմինոսի , թէ կարծեմ իմ օրերս ալ կարճըցեր են : — Ինչո՞ւ , ըսաւ խոստովանահայրը . — Վասն զի , պատասխանեց Ալողիոս , անանկ սաստիկ եռանդ մը կ'իմանամ Աստուծոյ ու ընկերներուս ծառայելով չարչարուելու , որ կարծեմ թէ Աստուած ինձի չէր տար՝ թէ որ մահս մօտեցած չըլլար :

## Զ

**Մինչև ՚ի մահ ձգնեցէք**

1. **Վերջապէս՝ Ալողիոսի փափաքին**, ընկերներուն ալ սղոյ դուռը բացուեցաւ . ինքն ալ սլը լրշտրկեցաւ ան հիւանդութենէն , ու ուրիշ տեղ մը գրուեցաւ ուր թեթև հիւանդները կը հոգային , հոն անկողին ընկաւ մարտի իրեքին 1591են . որոնք որ լսեր էին Ալողիոսի եղած յայտնութիւնը մահուանը վրայօք Միլանի մէջ՝ խմացան թէ քիչ առենէն պիտի կորսընցընեն իրենց զանձը ու սրտերնին կոտրեցաւ : Իսկ Ալողիոս անանկ անպատում ուրախութիւն կ'իմանարերոր մահը կը յիշէր՝ որ վախնալով թէ չափէ գուրս կ'ըլլայ խոստովանահօրը յայտնեց ու միսիթարուեցաւ , երբոր լսեց թէ Աստուծոյ համար մահուան փափաքիլը՝ աղէկը բան է , միայն թէ Աստուծոյ յանձնելու է :

2. Անկէ վերջը՝ ալ իր մահուանը  
վրայ կը խօսէր, ինչպէս թէ յայտ-  
նի զիտցած ըլլար իր մահուան օրը  
ու արքայութիւն երթալը։ Քանի որ  
կը մտածէր թէ ան հիւանդութիւնն  
Աստուծոյ ու ընկերին սիրոյն հա-  
մար եկաւ վրան, չէր կը շտանար  
ուրախութենէն, մանաւանդ երբոր  
շաբաթէ մը վերջը ծանրացաւ խըն-  
դրեց՝ սրբութիւն առաւ իբրև վերջին  
թոշակ. վերջին օծումն ալ առաւ ու  
քահանային աղօթքին ինքը պա-  
տասխան կու տար։ Ան ատենը Աս-  
տուծմէ շարժեալ վկայեց ամենուն  
առջին՝ թէ ոչ երբէք եղեր է որ  
բանի մը մէջ իմ կամքիս հետեւած  
ըլլամ, միշտ մեծաւորին ձեռքով  
Աստուծոյ կամացը հնագանդ եղայ։  
Աս լսելով ամէնքը սկսան փառ  
տալ Աստուծոյ, ուրախ ու կոտրած  
սրտով մը։

3. Բայց դուն տես թէ զԱս-  
տուծ սիրելը ու իր անձը ատելը  
ուր կը հասնի. այն ատենը՝ որ ա-  
մէնքն Ալողիոսէ զրկուելուն հա-  
մար տրտմեր էին՝ անիկայ մեծաւո-

ըր տեսաւ . Խնդրեմ , ըստ , աս շնորհքս ալ ըրէ , հրաման տուր որ վերջին անգամ մ' ալ ծեծուիմ : — Որդեակ , ըստ հայրը ղարմանալով , քու տկարութիւնդ թող չի տար որ ատիկայ ընես . — Գոնէ ուրիշ մը զիս խարազանէ : — Քանի որ ատ վիճակիւր մէջ ես , ըստ մեծաւորն սիրտը ելած , ուժդ չի տանիր : — Ա՛յ , գոնէ , ըստ Ալողիոս , Յիսուսի խաշին սիրուն համար զիս զետնի վրայ դրէք , որ հոն մեռնիմ , : Ամէնքը ապշած սկսան բարձրը ճայնով լալ :

4. Այն օրը որ հիւանդութեան եօթներորդ օրն էր՝ իր 23 տարին լմնցուց ու կեանքն ալ լմնցընելու վրայ էր , ինչպէս որ կը կարծէին տեսնողներն , ու անոր համար ալ զրեցին ընտանեացը , որ Գասղիլիոնի մէջ հոգւոյն համար պատարազներ զուրցել տուին : Բայց ինչպէս սիրելի ճամբորդ մը՝ որ լեռներու մէջէն կ'երթայ , զու վերէն կը նայիս մինչեւ որ աչքէդ կը կորսուի և ալ կը յուսահատիս

տեսնալէն , մէկ մ' ալ յանկարծ  
բլրի մը ետևէն վերջի անզամ մ' ալ  
կ'երևնայ քանի որ բոլորովին չէ հե-  
ռացած . կամ ինչպէս թէ արևը որ  
մտնալու մօտ ամալի տակէն մէկ մ'  
ալ կ'երևայ քանի որ մտած չէ , այս-  
պէս եղաւ Ալողիոսի :

5. Աստուած իրեն աւելի փառք  
պատրաստելու կամ մարդկանց ա-  
ւելի բարի օրինակ թողլու , կամ  
ընկերաց սիրտը անոր մահուան հա-  
մար մխիթարելու համար , որ վեր-  
ջը շատ չի տրտմին , մէկ քանի ա-  
միս ալ երկնցուց անոր կեանքը ,  
թեթև չերմ մը միայն թողլով 'ի  
նշան մահուն ու արքայութեան :  
Ալողիոս զրեց մօրը թէ Աստուած  
զեռ չէր ուզած որ մեռնիմ . բայց  
ժամանակը մօտ է , առողջութիւնս  
Քրիստոսի ձեռքով երկինքը զրտ-  
նամ :

6. Հիւանդութիւն քաշելն ալ ա-  
ռաքինութիւն է , բայց հիւանդու-  
թեան մէջ մահացուցումն ընելը եր-  
կու առաքինութիւն է . Ալողիոս  
քիչ մը վրայ գալով , տեսաւ որ ան-

կողնին վրայ ծածկոց մը դրեր են, խնդրեց որ վերցընեն. անոնք ըսին թէ ան քեզի համար չենք շինած ուրիշի ալ կը զործածենք, անատենք լուեց. մէկ լեզի ու զրզուելի գեղ մը տուին, որ ուրիշ հիւանդ մը՝ մէկէն խմեց որ համը չառնէ. Ալոզիոս կամաւ պուտ պուտ կը խմէր անուշ ջրի պէս, Քրիստոսի լեզի խմելէն վերջը ինքն ամեննեին անուշ բան մը չէր ուզեր:

7. Լսեց որ Հոռվմ ժանտամահի կասկած կայ, սիրտը եփ ելաւ թէ արդեօք ատոնց ալ սիտի կարենամ օդնել. Երբոր մեծաւորը հիւանդանոցը եկաւ՝ Ալոզիոս աղաչեց ու ուխտ ալ ըրաւ որ եթէ առողջանայ՝ ինքն ալ հիւանդաց ծառայէ: Ինքը՝ վիրաւորած ուրիշ վիրաւորներ փնտոելու ելեր էր: Հոռվմ երկու կարդինալ կային Ալոզիոսի աղղական՝ ասոնք շատ հեղ զինքը տեսնալու կու զային, ու քանի որ հետը խօսինք՝ սրտերնէս հողեոր մը խիթարութիւն կ'իմանանք, կը սէին:

8. Գորավինելի անունով ծերպատուական քահանայ մը Ալողիոսի շատ սիրելի, հիւանդ ըլլալով աղազեց հիւանդապահին որ մէյմը բերէ զինքը. երբոր բերին Ալողիոսը՝ քահանայն՝ ուրախութենէն ցաւը մոռցած, սիրելի որդեակ, ըստ, խընդիրք մը ունիմ կ'աղաչեմ չէ չըսես, եկու օրհնէ զիս, կանկ առաւ Ալողիոս, ինծի կ'իյնայ որ քեզմէ օրհնուիմ, ըստ, հայր պատուական: Բայց գտաւ վարպետ հնաղանդութիւն մը, որ խոնարհութեան տակ չի մնայ՝ իր երեսը խաչ հանեց ու ըստ. Աստուած օրհնէ երկոքնիս ալ, ու օրհնած ջուրը ցանեց քահանային վրայ:

9. Այս պատուական ծերը մեռնելու իրիկունը երկու անդամքունի մէջ երեցաւ Ալողիոսի ու աղօթք խնդրեց, Ալողիոս երազ կարծելով քնացաւ. երրորդ անդամ երեցաւ, վտանգի մէջ եմ ինձի օղնէ, ըստ: Ան ատենը հաւկրցաւ որ երազ չէ, ելաւ իր պարտքը ըրաւ, և իրաւ ան միջոցին քա-

Հանայն հոգեվարք էր . մեռնելէն  
վերջը Պելարմինոս հարցուց Ալո-  
զիոսի՝ թէ քահանայն ուր կը կար-  
ծես . Քաւարանէն անցած է , ըստ  
Ալոզիոս . յայտնի է որ աս ալ տե-  
սիլքով զիտցեր էր : Իսկ ինքն եր-  
բոր ուրիշները կ'ըսէին թէ ազօթք  
ըրէ որ Աստուած զքեղ մեզի թո-  
զու , աս կ'ըսէր . Յանկամ ելանել  
'ի մարմնոյ աստի և մտանել առ Աս-  
տուած : Իրաւ որ անանկ սրտի մը  
մը որուն երկինք կը փափաղէին ,  
ամէն մէկ երկրի վրայ անցուցած  
վայրկեանը՝ մէյմէկ զերութիւն էր :

Ե

Բուռն է իրուհի զմահ սեր

ԵՐԳ

1. Երբոր իմացաւ Ալոգիոս՝ թէ իր  
սիրով հալած մաշած սիրտը արքայ-  
ութեան հասնելու մօտեցեր է, մխի-  
թարեց իր ընկերները ինչպէս Քրիս-  
տոս իր աշկերտները. անկէ վերջը  
ուզեց ծնողը պատուելու վերջի  
պարտքն ալ կատարել. մեռնելէն  
տասը օր առաջ՝ մօրը զիր մը զրեց.  
տեսնանք թէ մէկ սուրբ մը երկու  
աշխարհքի մէջ կեցած ատենը ինչ  
որտով կը կատարէ իր որդիական  
պարտքը. ինչ կը մտածէ ան երկ-  
րին վրայ ուր 23 տարի կենալէն  
վերջը՝ ելլալու վրայ է. ինչ կը մը-  
տածէ ան երկնքին վրայ ուր որ 23  
տարի փափաքելէն վերջը հասնելու  
վրայ է:

2. Ազնիւ և պատռելի տիկին մայր  
իմ, խաղաղութիւն քրիստոսի .

Հոգւոյն սրբոյ շնորհը ու միսի-  
թարութիւնը միշտ հետդ ըլլայ, աղ-  
նուական տիկին մայր . հրամանոցդ  
նամակը առի աս անցաւոր երկրիս  
մէջ ուսկից որ ելլալու մօտ եմ, որ-  
պէս զի երթամ'զ Աստուած օրհնելու  
յաւիտեան . թէպէտ ես կը կարծէի  
որ շատոնց աս ճամբայն ըրած ըլ-  
լամ, բայց ինչպէս որ առաջ զրեցի  
ջերմս քիչ մը դաղրեր էր, ու կա-  
մաց կամաց հասուց զիս համբարձ-  
ման սուրբ օրուան ալ . Ետքը սկսաւ  
նորէն սաստկանալ հարբուխով ու  
հազով մը՝ որ քչիկ քչիկ զիս կը  
տանի կը մօտեցընէ իմ երկնաւոր  
հօրս զիրկը հասցընելու, ուր որ  
հաստատ կը յուսամ' յաւիտենա-  
կան հանգիստս գտնելու, ասով  
կրնաք իրաւ սեպել այն լուրերն  
որ իմ մահուանս համար հոն լսեր  
էք . ինչպէս իմ մարդէզ եղբօրս ալ  
զրեցի :

Թէ որ սէրը կը պահանջէ Պօ-  
ղոս առաքելոյն ըսածին ալէս լա-  
ցողներուն հետ լալ, խնդացողնե-  
րուն հետ խնդալ, մեծ ուրախու-  
թիւն պիտի ունենաս, Տիկին մայր,  
Աստուծոյ փառք տալով իր ինձի  
ըրած շնորհքին վրայ, որ զիս ճըշ-  
մարիտ ուրախութեան կը կանչէ:  
Հաւատա զաւկիդ ազնիւ Տիկին,  
ինքզինքս կը կորսնցընեմ՝ քանի  
որ Աստուծոյ բարերար զթութիւնը  
կը մտածեմ, որ անեզր ծով մ' է. և  
զիս աս պզտի աշխատանացս հա-  
մար յաւիտենուկան հանգստու-  
թեան կը կանչէ. երկնքէն ձայն  
ձղեր զիս կը հրաւիրէ այն զերա-  
զանց բարին վայելելու, որուն որ  
այսչափ անհոգութեամբ ետեէ ե-  
ղեր եմ. պտուղ կը խոստանայ իմ  
արցունքներուս որ ասանկ խնայե-  
լով ցանեցի: Կը խնդրեմ, Տիկին  
մայր, չըլայ թէ այսչափ բարերա-  
րութեան հակառակ ընէք լալով ու  
ողբալով անանկ մէկը՝ որ Աստու-  
ծոյ վայելքին մէջ աւելի օպտակար  
կրնայ ըլլալ ձեզի, քան թէ երկ-

բիս վրայ ըրած աղօթքովլը : Շատ  
չի քշեր աս մեր հեռաւորոթիւնը ,  
քիչ ատենէն հոն կը տեսնանք մէ-  
կըզմէկ և առանց մէկ մ' ալ մէկ-  
մէկէ զատուելու , Յիսուսի հետ միա-  
նալով իրեն փառք կուտանք բոլոր  
սրտով ու իր ողորմութիւնը կ'օրհ-  
նենք յաւիտեան :

Անտարակոյս թէ որ աղէկ մը  
նայինք մերանցաւորվիճակին վրայ՝  
յօժարութեամբ կը բանանք առա-  
քինութեան դուռը , և մեզի սկէտք  
եղած խոնարհ հնազանդութեամբ՝  
կու տանք Աստուծոյ՝ ինչ որ Աս-  
տուծոյ է , և այնչափ աւելի սիրով  
կու տանք՝ որչափ որ տուածնիս սի-  
րելի ըլլայ՝ հաստատ զիտնալով որ  
Աստուծոյ ուզածէն աղէկը չի կայ ,  
և թէ մեզի տուածը՝ ուրիշ բանի  
համար ետ չառնուր , բայց եթէ ա-  
ւելի ապահով տեղ զնելու համար .  
և ան իր կանչածին անանկ բան մը  
կու տայ որուն ամենքնիս կը փա-  
փաղինք :

Ասոնք կ'ըսեմ , Տիկին մայր ,  
փափազս լեցընելու համար , փա-

փազս ալ աս է որ մեր ընտանիքը  
իմ բաժնուիլս Աստուծոյ ընծայ մը  
կամ շնորհք մը սեպեն, և հրաման-  
քը ալ մայրական օրհնութեամբդ  
օղնես ինձի աս ծովածոցէն անցնե-  
լու՝ յայն նաւահանգիստը, ուր բո-  
լոր յոյսս դրեր եմ: Աս է իմ փա-  
փաքս որ յօժարութեամբ հրաման-  
քիդ կը յայտնեմ, վասն զի չունիմ  
ուրիշ բան մը որով ցուցընեմ իմ  
որդիական պարտքս ու սէրս: Զու-  
նիմ ուրիշ բան ըսելու բայց եթէ  
նորէն կը խնդրեմ օրհնութիւնդ  
Հոռվմ 10 յունիս 1591.

**Աղնուական Տիկին մայր իմ**  
**Որդի քո հնազանդ ՚ի ՚բրիստու**  
**ԱԼՈՉԻՈՍ ԳՈՆՉԱԿԱՆ**

3. Տեսեր ես հեռու ծովէ դար-  
ձած նաւ մը. ինչպէս նաւահան-  
գըստին բերանը առաղաստները  
բացած ժուռ կու զայ ինչուան որ  
հովը յարմարցընէ ու ուժով մը ներս  
մտնէ. ասանկ ալ Ալողիոս առա-  
քինութեան վաճառքով բեռցած

այն երջանիկ յաւիտենական նաւահանգստին դուռը կը պտտէր . սիրոյն սուրբ խարիսխը յուսոյն ամուր չուանովը կապած պատրաստէր ձգելու , կը սպասէր որ Քրիստոսի ճայնը անուշ հովի մը պէս իրեն հասնի : Ալ ան օրուան մէջ անցուցած վարքը՝ մէկ կեանք մ' էր որ երկրաւոր կեանքէն վեր է , երկնաւոր կեանքէն քիչ պակաս :

Կ . Հիւանդութեանը մէջ ցաւ մը տհաճութիւն մը չի ցըցուց . քանի որ վրան քիչ մը ուժ կար՝ կը հազուէր կ'ելլար խաչելութեան ոտքը կ'ինկնար կը զրկէր կը պազնէր , Քրիստոսի հետ խօսելով կը մխիթարուեր : Օր մը հարցուց խոստվանահօրը , թէ կարելի՞ է որ հոգի մը առանց քաւարանէն անցնելու շիտակ արքայութիւն երթայ : Պելլարմինոս . Քիչ մարդ կ'ըլլայ , ըստ , որ աս շնորհը ունենայ . դուալ կարծեմ ան քիչերէն մէկն ես , վասն զի Աստուծոյ շնորհը մահացու մեղքէն ազատ մնացիր բոլոր կենացդ մէջ :

5. Ալողիոս անանկ ուրախացաւ  
անանկ ցնծաց աս բանս լսելով, որ  
մէկէնյափշտակուած մաքով արքայ-  
ոթեան փառքը տեսաւ, և իմացաւ  
որ մարմնոյ և արեան տօնին ութե-  
րորդ օրը պիտի ելլեր աշխարհքէս.  
Խնտումէն՝ քովը եղող եղբօրը հետ  
Զրեց Աստուած գոհարանեմք շնոր-  
հակալութեան երզը ըստ Աստու-  
ծոյ, որ ութը օրէն զինքը պիտի  
կանչեր. մէկ երկու երախտաւոր  
քահանայից նամակ զրել տուաւ,  
իր ձեռքովը ստորագրեց խաչին  
նշանով, ու կ'ըսէր թէ ես Աստու-  
ծոյ տունը երթալու վրայ եմ: Յի-  
րափ, ասանկ մահուան երթալը՝  
մահ չէ, Աստուծոյ սիրոյ տունը  
մոնալ է ցնծալով:

6. Ամէն օր մէկ մտերիմ քահա-  
նայի մը՝ ապաշխարութեան սաղ-  
մուները ըսել կու տար, ինքը խա-  
չելութեան նայելով կու լար ու կը  
լացընէր տեսնողներն: Ուրախ սըր-  
տով ստէալ ստէալ կ'ըսէր աս խօս-  
քերը. Ուրախ եղէ ես ընդ այնու-  
սիկ ոյք ասէին ցիս 'ի տուն տեառն

**ԵՐԹԻԳՈՒՔ ՄԵՔ · ՈՐԱԿԵՍ ՓԱՓԻԱՔԵ**  
**ԵՂՋԵՐՈւ յաղբերս ջուրց՝ այնպէս**  
**ՓԱՓԻԱՔԵ անձն իմ առ քեզ ԱՄ-**  
**ՄՊՈՒԱԾ :**

7 · ԸՆԿԵՐՆԵՐԸ ԵՐԲՈՐ ՄԵՍԱՆ ԹԷ  
**ԱԼՈՎԻՌՍ ՀԱՍՏԱՏ ԿՇՍԵՔ ԹԷ ՄԵԿ**  
**ԵՐԿՈՒ ՕՐԵՆ ԱՓԻՄԻ ՄԵՌՆԻՄ, ՍԿՍԱՆ**  
**ԻՐԵՆ Պանազան ԽՆԴԻՐՔՆԵՐ յանձ-**  
**ՆԵԼ որ արքայութիւն ԵՐԹԱՅ ՆԵ՝ ի-**  
**ՐԵՆց ընէ · ԻՆչպէս ԹԷ բարեկամ**  
**մը բարեկամի կը զրկէին կամ ճան-**  
**չուոր իշխան մը թագաւորին · ինքն**  
**ալ ուրախութեամբ կը խոստանար**  
**ըսածնին ընելու · Բայց մեկ կողմէն**  
**ալ անոնք կը սկսէին տրտմիլ, թէ**  
**հիմայ մեզմէ պիտի բաժնուի սուր-**  
**բը · Սակայն թէ որ մարդիկ բարի**  
**բանը կը սիրեն, ո՞րչափ աւելի ԱՄ-**  
**ՄՊՈՒԱԾ որ է աղբիւր բարութեան**  
**կը սիրէ և կը փափազի բարւոյն :**

## Ը

Այրելին իմ ինձ և իս նմա

ԵՐԳ

1. Հասաւ տօնին ութերորդ օրը՝  
որուն ետեի առաւօտը արքայութեան մէջ պիտի ծագէր Ալողիոսի.  
իր ընկերները՝ զանձին զլուխը ժողվուած դողացող ազահի մը պէս  
Ալողիոսի չորս դին առած կեցեր  
էին. տեսնալով որ անոր վրայ մեռնելու նշան չէր երենար, սկսան  
ուրախանալ ու ըսել. Տեսնա՞ս ահա  
եկաւ աս օրս և զու աւելի առողջ  
ես. Ալողիոս անուշիկ մը ժպտեցաւ  
ու ըսաւ. Այս օրս եկաւ բայց զեռ  
չանցաւ. Կ'անցնի աս զիշերս ալ,  
բայց ես չեմ անցըներ աս զիշերս:

2. Արքազան պապը Գրիգոր ԺԴ  
լսելով Ալողիոսի ծանրացած ըլլա-  
լը՝ իր ձեռքովը վերջի օրհնութիւն  
և լիակատարներողութիւն խաւրեց:  
Ալողիոս շատ ուրախացաւ. մէկ

մ'ալ միտքը եկաւ թէ ինչպէս սրբազն պապը զինքը յիշած պիտի ըլլայ թէ որ ուրիշը իրեն ըսած չըլլար, ամչցաւ երեսը զոցեց . ներողութիւն բերողը զինքը չի խանեցնելու համար ըստ, թէ պապը դիպուածով լսեր իմացեր է, ու քեզի ատ շնորհքը ըրաւ : Ալողիոս որ կը հաւատար քիչ ատենէն արքայութիւն երթալուն, կենացը մնացած մէկ երկու ժամն ալ կ'ուղէր խոնարհութեամբ անցընել, որ իմացընէ թէ ինքը Աստուծոյ շնորհացը վստահ՝ արքայութիւն կ'երթայ, չէ թէ իր լաւութեանը համար :

3 . Կէսօրուընէ վերջը խնդրերէր որ սրբութիւն բերեն . անոնք ինչուանիրիկունուշացընելովերըոր իրիկուան մօտ նորէն ուղեց ու բերին, իր վառած սրտովը առաւ այն յափիտենական ճամբուն թոշակը : Հոն պէտք էր գտուիլ տեսնելու եղածը . իրեն եռանդը, տեսնողներուն մէկ ճայնով լալը, ընկերներուն ցաւը, իր անպատմելի խընտումը . մանաւանդ թէ պէտք էր

տեսնալ այն սուրբ սիրտը ուր Յի-  
սուս վերջի անդամ այցելութեան  
ու հրաւիրելու կու զար . լսել ան-  
ձայնը որ Ալողիոս ու Յիսուս մէկ-  
մէկու կ'ըսէին . Աիրելին իմ ինձ և  
ես նմա :

4. Աղօթքէն վերջը մեծաւորէն  
խնդրելով հրաման առաւ , ու ինչ-  
պէս սովորութիւն կար հեռու աշ-  
խարհք զացողներուն՝ ընկերներուն  
հետ պազտուեցաւ . Ետքը ամենէն  
թողութիւն ուղեց , ամենուն սիրտը  
ճմլեց անուշ խօսքերովը , ամենուն  
խոստացաւ անկէ վերջը աւելի սի-  
րելու զանոնք ու աւելի օգնելու ա-  
նոնց : Վերջը մեծաւորը հարցուց ,  
թէ՝ Ալողիոս , ի՞նչպէս ես : — Հայր  
երթամ սիմու , ըստ : — Ո՞ւր : — Թէ  
որ մեղքերս չարդիլեն՝ շիտակարքայ-  
ութիւն , : Ա՛յս , ան արզելք եղող  
մեղքերը քեզի համար չեն , Ալո-  
ղիոս , հապա քուկին առաքինու-  
թիւններդ են որ զքեզ կ'արդիլեն  
չուշանալու երկրիս վրայ :

5. Գիշերուան մօտ Ալողիոս զլու-  
խը թեին կըոթընցուցած խաչե-

լութեան կը նայէր , կարծեմ նախանձելով թէ ի՞նչպէս ինքն ալ խաչի վրայ չի մեռաւ . մէկ մ' ալ մէկալ ձեռքովը զլխէն զտակը վարառաւ . քահանային մէկը ( ան՝ որ ետքը իր վարքը դրեց ) կարծելով որ դիպուածով ինկաւ , նորէն զլուխը դրաւ . Ալողիոս դարձեալ վարառաւ . քահանայն ըսաւ թէ աս զիշերուան օղը կարծեմ աղէկ չէ բաց զլխի . Ալողիոս կամացուկ մը պատասխան տուաւ , թէ Գրիստոս ալ բաց զլխով մեռաւ :

6. Վրան ժամ մ' ալ անցնելէն վերջը՝ վերակացուն եղբայրներուն հրամմեց որ ալ երթան պառկին , ապահովցընելով որ ան զիշեր չի մեռնիր : Բայց անոնց սիրու կը վկայէր թէ մէկ մ' ալ պիտի չի տեսնեն այն մարմնաւոր հրեշտակն , սկսան լալ : Ալողիոս ալ աղաչեց որ իրեն համար աղօթք ընեն , ու վերջը արտմութեամբ դարձան անոնք : Պելարմինիոս ապսսլքեց Ալողիոսի որ երբոր հողեվարութեան նշան իմանայ՝ իմացընէ իրեն որ զայ

աղօթքը ըսէ . վրան քիչ մը անցաւ  
չանցաւ Ալողիոս՝ Հայր , ատենը  
հասաւ , ըսաւ . խոստովանահայրն  
ալ աւանդման աղօթքը զրուցեց ,  
բայց վրան դեռ հողեվարի նշան չի  
տեսաւ , անոր համար քաշուեցաւ իր  
սենեակը , երկու քահանայ մնացին  
Ալողիոսի քով :

7 · Արդ հասաւ զիշերուան այն  
փառաւոր ժամը , որ պայծառ ա-  
րեու պէս Ալողիոս երկրէ երկինք  
պիտի ծաղեր . ուրախութիւն երկ-  
նից , տրտմութիւն երկրիս . Ալո-  
ղիոս՝ Աստուած իմ , հոգիս քեզ կ'ա-  
ւանդեմ ըսելով , հասաւ ան վայր-  
կեաններուն որոնցմէ ամէն Աղա-  
մայ զաւակ եղողը պիտի անցնի .  
մաքուր ճակտին վրայ բարակ ցողի  
պէս քրտինք մը երևցաւ . ուղեց  
մէկ մը մէկալ դին դառնալ , քովի  
եղողները իմացան որ կենաց վերջի  
շարժմունքներն են . Յիսուսի խա-  
ը յիշեցին իրեն . . . Ա՛խ սուրբ  
խաչ , քու զօրութիւնդ մահուան ան-  
կողնին քով ի՞նչպէս կը փառա-  
սորուի : Երբոր խաչը լսեց Ալո-

զիոս՝ մէկէն աչքը դարձուց խաչելութեան, ու հանգարտելով իմացուց՝ թէ Քրիստոսի համար էն ետքի վայրկեանն, ալ կուզեմ վիշտքաշել :

8. Քահանայներն տեսնալով որ ալ ձայնը ու շարժելը դադրեցուց՝ իմացան որ ամէն բան լմննալու վրայ է . մէկ օրէնած մոմ մը վառեցին ձեռքը տուին . Ալոզիոս բըռնեց անիկայ իբրև նշան իր վառած սրտին որ երկրէս երկինք կը բարձրանար . . . . Ո՞հ ի՞նչ ըսեմ . Աստուած չուզեց որ իր սիրելին անկէ վերջը ուշանայ աս վշտալից հովտիս մէջ . կարծեմ անատենը լսուեցաւ արթայութեան մէջ ձայն մը որ կ'ըսէր . Եկայք առ իս աշխատեալք և բեռնաւորք և ես հանգուցից ըզձեղ . եկու սիրելի դաւակ աստաւածային սիրոյս, եկու որ ինձի համար այսչափ նեղութիւն քաշեցիր եկու որ ալ զքեղ հանգչեցընեմ : Ալոզիոս սրտին մէջ լսելով աս ձայնը, Յիսուս, կ'ըսէր Յիսուս . Յիսոս ալ թերը բացած ընդունեցաւ

զԱլողիոս... Գիշերուան ժամը իրեքին՝ Ալողիոս իր 23 տարուան 5 ամսուան և 11 օրուան անմեղ կեանքը լմնցուցած էր երկրիս վրայ:

9. Մեռաւ Ալողիոս — ինչպէս կրնանք մեռաւ ըսել անոր: Արդարն չի մեռնիր, կ'ըսէ սուրբ զիրքը. արդարն չի մեռնիր, վասն զի Աստուծոյ ձեռքն է. և իրաւցընէ Աստուած իր Ալողիոսը աս աշխարհքէս անդիի աշխարհք տանելով՝ ուրիշ բան չըրաւ, բայց եթէ ձախ դիէն աջ դին դրած ըլլար: Ալողիոսի յոզնած մարմինը ճամբորդի պէս հանգչեցաւ. արծաթափայլ զլուխը անուշքունի մէջ կ'երևար. մաքուրաչուըները արեւոն դէմ դարցած պատուհաններու պէս զոցուեցան. անբիծ հոգին կրակէ նետի պէս թուաւ իր երջանիկ նպատակին. Ովկիանոսի նաւոն պէս մտաւ յաւիտենական հանդիսաը. լուսաւոր աղաւնոյ պէս իջաւ Աստուծոյ զիրկը:

Երանիքեղ Ալողիոս, հաղար երանի. անցանքու 20 տարուանքած նեղութիւններդ, թափած ար-

ցունքներդ . անոնց պտուղը հիմայ  
կը վայելես նոր կեանքի մը մէջ որ  
փախճան չունի . օրհնեալ ըլլայ այն  
օրն՝ որ արքայութեան մէջ զրեզ  
պսակեց . դու ալ օրհնէ զանոնք որ  
զարմանալով զրեզ կ'օրհնեն :

## Փ

*Զիառատրիչս իւմ փառատրեցից*

1. *Զօրավար մը որ շատ տարի  
թշնամեաց հետ կուելով վերջա-  
պէս յաղթութեամբ իր թագաւորին  
կը դառնայ , մեծ վարձքի արժանի  
չէ . հապա Աստուծոյ զինուոր մը որ  
բոլոր կեանքը սպատերազմելով աշ-  
խարհիս , սատանայի ու իր մար-  
մնոյն հետ , մէկ հեղ մ' ալ չի յաղ-  
թուելով հապա միշտ յաղթելով կը  
դառնայ Աստուծոյ , Աստուած ա-  
սանկ կտրճի մը ինչ վարձ պէտք է  
որ տայ : — Անանկ վարձ մը , որ չէ  
թէ միայն մարդկանց խելքէն վեր  
ըլլայ , հապա կարծեմ թէ Ալողիո-*

սի վարձը երկինքն ալ նշանաւոր  
ըլլայ:

2. Աստուած այս բանս ուղելով  
յայտնել, սուրբ կուսի մը ցըցուց  
արքայութեան սուրբերն. աս կոյսը  
որ Ալոգիոսի վառքը տեսաւ՝ խել-  
քը թուց. ի՞նչպէս իմացընէ տե-  
սածը. Ո՞հ, կըսէր, ո՞վ կու տար  
ինձի որ բոլոր աշխարհը երթայի  
պատմէի Ալոգիոսի վարձքը: Կա-  
րելի է վարքը կարդալով աղէկ մը  
չարթընցար, ուշ զիր աս խօսրին.  
Ո՞վ կու տար ինձի՝ որ բոլոր աշ-  
խարհը երթամ պատմեմ Ալոգիոսի  
վարձքը:

3. Պատմէ ուրեմն, ի՞նչ էր տե-  
սածդ. թէ որ սուրբի մը վառք էր  
նէ, զիտենք որ Ալոգիոս երկրիս  
վրայ ալ սուրբ էր և երկնքի սըր-  
բոց մէջ խառնուեցաւ. թէ որ հրեշ-  
տակի վառք էր, զիտենք որ Ալո-  
գիոս երկրիս վրայ ալ հրեշտակ ը-  
սուեցաւ. քու տեսածդ ի՞նչպէս  
վառք էր: Զի կրնար պատմել  
կոյսն ալ. վասն զի ինքն ալ ինքիր-  
մէ յավշտակուած ատենը տեսաւ,

չենէ ան փառքին իր սիրտն ալ չեր  
դիմանար: Առաքելոյն ըսածին պէս  
աստղ քան զաստղ՝ աւելի լուսաւոր  
է: Ալոգիոս ալ շատ սրբոց աստղե-  
րէ լուսաւոր պիտի ըլլայ: ովկ կու-  
տար մեղի ալ՝ որ այս լուսոյ մէկ  
ճաճանչը ընդունէինք երկրիս վրայ:

4. Ըստ Քրիստոս: Ի տան հօր  
իմոյ օթևանք բազում են: ով որ  
երկրիս վրայ զԱստուած բարձրա-  
ցուց, Աստուած ալ զինքը երկնքի  
մէջ կը բարձրացընէ, և իր՝ Զվարա-  
ւորիչս իմ փառաւորեցից, ըսած  
խօսքը՝ մարդկանց յայտնելու հա-  
մար, շատ հեղ հրաշքներով ալ զին-  
քը կը պատուէ: թէպէտ Ալոգիոսի  
սրբութիւնը իմանալու համար՝ իր  
վարքը աշխարհիս մէջ եղած հրաշք-  
ներուն մէջ մեծերէն մէկն է: Հր-  
աշքներուն շատը Ալոգիոս ցըցուց  
իր շատ սիրական առաքինութեան  
վրայօք՝ որ է ողջախոհութիւն: ա-  
նոր համար Շուշան մաքրութեան  
ըսուեցաւ: մէկ քանին յիշենք:

5. Պոլոնիացի առաքինի մարդ  
մը շատ տարի առաքինութեամբ

ապրելէն վերջը , ողջախութեան  
դէմ անանկ սաստիկ փորձութիւն  
ունեցաւ , որ ոչ աղօթքով ոչ ճրգ-  
նութիւններով կրցաւ յաղթել . ան-  
կէ զատ՝ սատանան զԱստուած հայ-  
հոյելու նոր փորձութիւն մ' ալ բե-  
րաւ վրան . մարդը սրտին նեղութե-  
նէն բոլորովին յուսահատելու վրայ  
էր , երբոր իրեն ճանչուորները  
Ս . Ալողիոսի մասունք մը տուին ,  
որ վրդէն կախէ . աս որ բրաւ մէ-  
կէն ամէն փորձութիւն դադրեցաւ :

6 . Սուրբ Ալողիոսի ջերմեռանգ  
կնիկ մը ուխտի զացեր ետ կը դառ-  
նար . զիշերանց անտառի մէջէն  
անղղամ մարդիկ վրան հասան , ա-  
նիկայ հազիւ կրցաւ՝ Ս . Ալո-  
ղիոս օգնէ ըսել , մէկալնոնք մէկ  
ձեռքով քսակնին իրեն կու տային  
որ զլիսէ հանեն զանիկայ՝ մէկալ ձեռ-  
քով ալ սուրերնին քաշեցին վախ-  
ցընելու . երբոր անիկայ առաքինու-  
թեամբ դէմ կեցաւ՝ մէկը սուրը քա-  
շեց կուրծքին , կնիկը զզեստին տա-  
կը Ս . Ալողիոսի պատկերը ունէր ,  
թուրը պատկերին դաշելուն պէս

ներս չի գնաց . մէկալը բարկութենէ հրացանը պարպեց . մէկէն հրացանն ալ իր ձեռքն ալ ջարդութուրդ եղան . աս որ տեսան՝ ամէնքն ալ թողուցին վախան :

7 · Աէկն ալ որ հինգ տարի շատ խրատներ լսելէն վերջը չէր կրնար իր մեղքէն զաղրիլ՝ խոստովանահայրը հրամայեց որ Ա · Ալոգիոսն իրեն պաշտպան բռնէ . առջի անդամ աղօթք ընելուն պէս անանկ զղումի եկաւ՝ որ մէկ մ' ալ իր մեղսակցին երեսը չի նայելէն զատ՝ իր կամքով հինգ ամիս անտանելի ճրդնութիւններ ըրաւ . վերջը խոստովանահօրը յանձնեց պատարագ մը զրուցելու Ա · Ալոգիոսի . թէ որ ըստ մեղքերուս ներեր է՝ զիս աս աշխարհքէս հանէ . քանի մը օրէն մեռաւ բարի մահուամբ , սուրբը իրեն ներեր էր . երբոր ժամը տարին՝ ասոր չար ընկերը մարմնոյն մօտեցաւ , մեռելը սև արիւն մը թքաւ անոր քթին բերնին՝ որ լեղապատառ ետ դարձաւ :

8 · Այսչափ հերիք ըլլայ ցուցը-

նելու, թէ ինչպէս Ա. Ալոգիոս  
երկրիս վրայ սիրեց զմաքրութիւն,  
երկինքն ալ իր ջերմեռանդներուն  
աս բանիս համար պաշտպանու-  
թիւն կ'ընէ. այնչափ անզին բան է  
ողջախոհութիւնն, որչափ անմեղու-  
թիւն. զղջումով կրնայ մարդ Աս-  
տուծոյ շնորհացը հասնիլ, փառաց  
արժանի ըլլալ, բայց այն՝ միշտ ան-  
բիծ մնալու պարձանքը ետ չի դառ-  
նար: Ահա Ալոգիոսի մեծ փառքին  
պատճառն ալ աս պիտի ըլլայ, որ  
միշտ մաքուր, միշտ անմեղ մնաց  
երկրիս վրայ. փուշերու մէջ մեծ-  
ցած վարդի մը պէս, մեռած ջրե-  
րու քով բացուած պայծառ շուշանի  
մը պէս:

## Փ

ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք  
քո Աստուած

ՍԵՎԱՐՈՅ

1. Այն սուրբը որ երկինքը խելքէ  
վեր փառք ունէր, ու երկրիս վրայ  
հրաշքներով ինքը դինքը փառաւո-  
րեց, ալէտք էր որ մարդկանցմէ ալ  
փոխարէն մը ընդունի: Մեռնելէն  
վերջը շատ չանցաւ, սրբոց կարզը  
անցուցին զանիկայ. ու իր պատ-  
ւոյն համար եղած առջի պատարա-  
գէն վերջը, անոր սուրբ մասունքը  
պազնողներէն մէկն ալ եղաւ՝ Մար-  
թա Ալողիոսի մայրը: Ո՞վ նախան-  
ձելի մայր երջանիկ զաւկի, ձեռ-  
քովդ ժողվեցիր ձեռքովդ տնկած  
ծառին պտուղը, այն ծառին՝ որ սո-  
վորաբար խիստ ուշ կ'աճի: Արժա-  
նի՛ վարձք բարեպաշտ մօր, որ տր-  
դուն սուրբ հոգին աւանդի մը պէս  
առաւ Աստուծմէ, ու աւելի փառա-  
ւորած դարձուց Աստուծոյ:

2. Արդեօք ո՞ր բարեպաշտ մայր  
ո՞ր հայր այս բանս զիտնալով ա-  
սանկ զաւկի մը չի փափաքին . մա-  
նաւանդ գու սպաւոր մայր , որ ա-  
չուըներդ լեցուած մեռած զաւակդ  
կը յիշես , ինչ կը մտածես անոր  
վրայ , ըրի՞ր գու քու պարտքդ ու  
միսիթարուած ես անոր վրայ : —  
Քանի՞ ծնողքէ Աստուած դատաս-  
տանին օրը պիտի ուզէ անոնց յանձ-  
նած Ալողիոսներն . թէ որ անոնք  
լուսաւոր հրեշտակ դառնալու տեղ՝  
սեւցած ըլլան , ինչ պատասխան  
պիտի տան Աստուծոյ . չէին կըր-  
նար ան մատաղ տունկերը աղէկի  
շտկել :

3. Հապա ինչ պիտի ըսեն անոնք  
որ իրենց ծնողաց և վարդապետաց  
բարի խրատները բանի տեղ չեն  
դներ : Ալողիոսի սրբութեան սկիզ-  
բը եղաւ հնագանդութիւնը , որով  
ծնողացը սորվեցուցած ջերմեռան-  
դութիւնները ընելով այնչափ ա-  
ռաջ զնաց : Ահա այն Ալողիոսը  
ձեզի բարեխօս է , ոիրելի տղաք ,  
դժեղ իրեն եղբայր կ'ընէ , թէ որ

Հիմակուրնէ տաք սրտերնիդ՝ իր սիրտը ձեղի տուող Յիսուսին. ո՞հ, ինքն ալ զճեղ սիրով կը զրկէ, մէկ- մէկ հրեշտակ, մէկմէկ Ալոգիոս կ'ընէ՝ երկնքի սուրբերը ձեր վրայ կը զուրգուրան :

Կ. Իսկ զու որ կեանքդ ինչուան հի- մայ՝ եկածին պէս անցուցեր ես, ու հիմայ զուցէ դիպուածով այս վար- քը առեր կը կարդաս՝ հարցուր մէկ մը քեզի, ինչու համար պիտի ըլ- լայ որ Ալոգիոս իշխանի որդի ըլ- լալով կ'երթայ կամաւ կ'աղքըտնայ. աշխարհքի վայելքը ամէն դիաց ի- րեն կուզայ, ինքը ամենէն կը փախ- չի, մեղք չունի ու ապաշխարելէն չի դադրիր. Փափուկ տղայութեան մարմինը դահճի պէս կը տանջէ. իսկ ես որ իրեն չափ առիթ չունիմ աշխարհք վայելելու, ինչու ասանկ աշխարհքի ետենէ եմ. ինչ պիտի ըլլայ աս իմ բռնած տարբեր ճամ- բաս: Ուրիշ բան չէ. անիկայ աշ- խարհքի ունայնութիւնը ճանչնա- լով զԱստուած կը փնտոէ, ես զԱս- տուած թողլով իմ ունայնութիւնս կը փնտոեմ:

5. Ուրեմն Ալողիոսի ըրածները  
աւելորդ բան չեն, հապա հարկա-  
որ բան են. միայն իր բռնած ճամ-  
բայն է որ Երկինք կը հանէ . . . ան-  
ճամբայն թողուլը անմտութիւն է . . .  
առանց զժարութեան ան ճամբէն  
անցնիլ շրջար . . . թէ որ ինքը ան-  
մեղ ըլլալով ան փուշերուն մէջէն  
անցաւ, ի՞նչ պէտք է ընէ մեղաւոր  
մը. անմեղին 20 տարուան աշխա-  
տանքին վարձքը՝ մեղաւոր մը Երք  
կրնայ վասուկիլ . . . ի՞նչ նը-  
մանութիւն կայ Աստուծոյ սիրով  
ջրի պէս հալած սրտի մը, ու աշ-  
խարհքիս սիրով Աստուծմէ պա-  
ղած քարացած սրտի մը մէջ . . . :

6. Ի՞նչ ըսենք հապա ինձի նը-  
ման աշխարհք թողող վանք քաշ-  
ող կրօնաւորի մը. արդեօք Ալողիո-  
սի պէս զատեր ենք սրտերնիս աս-  
աշխարհքէս. արդեօք կը մտածե՞նք՝  
որ Ալողիոս աշխարհքի մէջ սուրբ  
ըլլալը բաւական չի սեպեց, կրօնք  
մտաւ կատարեալ ըլլալու համար.  
“ Ամէն ասեմ ձեղ եթէ ոչ առաւե-  
լուցու արդարութիւն ձեր առաւել


բան զդպրացն և փարիսեցոց ոչ  
մտանիցէք յարքայութիւն երկնից » .  
« Դուք էք լոյս աշխարհի » . որո՞նց  
համար զրուցեց Քրիստոս այս խօս-  
քերը . թէ որ Ալոգիոսի ամէն ճըգ-  
նութիւնները ընելու հրաման չու-  
նինք , իրեն պէս ոխտապահ հոգե-  
սէք ըլլալու ովկ կրնայ արդիլել ըդ-  
մեզ՝ մէզմէ զատ :

7 . Վերջապէս , դու , ով որ ես ,  
որ բարեմտութեամբ աս զբրոյիս  
կարդացիր , զիտնաս որ աս սուր-  
բիս հետեիլը՝ մանաւանդ նմանիլը  
մեծ բան է , բայց նոր բան մը ընել  
չէ , ինչու որ կատարեալ ըլլալ՝ ա-  
մէն քրիստոնէի պարտք է : Ինչ-  
պէս որ Աստուած կատարեալ է ,  
զքեղ ալ կատարեալ կ'ուզէ տեսնալ .  
շատ հեղ մէյմէկ կերպով քեզի աղ-  
դարարութիւն կ'ընէ , հիմայ կրնայ  
ըլլալ որ մէկ աղդարարութիւն մ' ալ  
աս զիրքը կարդալ տան էր . ի՞նչպէս  
անհոգ կ'ըլլաս ան աղդարարու-  
թեանը՝ որուն համար վերջը պա-  
տասխան պիտի տաս : Անխելք է  
կ'ըսես ան մարդուն՝ որ հրաման


ունենալով թագաւորին զանձարա-  
նը սլարտիլ ու հաւնած բանը առ-  
նուլ, ինքը միայն զարմացած նայի  
ու դուրս ելլայ. դու ալ Ալողիոսի  
վարքին զանձատունէն թէ որ ա-  
մէն հաւնածդ չես կրնար առ-  
նուլ, զոնէ առ քեղի մէկ մը, այս-  
ինքն մէկ առարինութիւն մը, ու  
անոր ետևէ եղիր:

8. Իսկ դու ովնախանձելի սոր-  
բըդ Ալողիոս, փառք երկնից ու  
պարծանք երկրիս, ընտրեալ զա-  
ւակ Աստուծոյ. դու որ չես կրնար  
լաւ փափաք մը արհամարհել՝ շար-  
ժէ կու վարքդ կարդացողներուն  
սիրտը՝ քեղի նմանելու. ու անոնց  
փափաքը հաստատէ: Տուր տղոց,  
զորոնք սիրով կը սլաշտանես,  
քու հոգեծաղիկ սիրտդ. բուրէ պա-  
տանիներուն սրտին մէջ՝ քու մաք-  
րութեան շուշանիդ հոտը. քու ճրգ-  
նութիւններովդ չի յուսահատի մե-  
զաւորը, չի տրամի փորձութեան  
մէջ ընկնողը, քու պատրաստ օղ-  
նութեանդ ապաւինելով: Տուր ճնո-  
ղաց և զաւակաց մէկմէկու յաւի-

տենական միսիթարութեան պատ-  
ճառ ըլլալ , ինչպէս զու քու ծնո-  
ղացդ . ծերոց ուժ տուր՝ առաքինու-  
թեան անհատնում գանձերուն քե-  
զի պէս ետենէ ինկնալու ինչուան 'ի  
մահ . քահանայից տուր ան սիրոյ  
կրակ կտրած սիրտդ՝ որ Փրիստոսի  
զրօսանաց տեղն էր . տուր կրօնա-  
ւորներու՝ քեզի նման կատարելու-  
թեան ճամբայն բռնել . նաև անհա-  
ւատներու և մոլորեալներու՝ որոնց  
գարձին այնչափ կը փափաքէիր ,  
տուր քու լուսաւոր մտրիդ շնորհ-  
քը . և ամէն զքեզ պաշտպան բրո-  
նողներու ալ պարզնէ . քու մաքրո-  
թեանդ սէրը :



**S u n b l o o d**



Գաբրիել յառաջարան չի զըտ-  
նալով թերես հետաքնին ընթերցող  
մը ուզէ իմանալ՝ թէ ով և ինչու  
զրած է. և այսպիսի ժամանակ մը՝  
յորում կրօնական խնդրոց մէջ  
օտարազգի եկեղեցեաց վրայ ալ  
խօսք կ'ըլլայ, արդեօք ինչ պիտի  
ըլլայ ըսէ, այս օտար և շատոնց  
անծանօթ մանուկ սրբոյ մը վար-  
քըն ընծայել մեր եկեղեցւոյն ման-  
կանց: Ուրիշ մ' ալ թերես արժա-  
նապէս զարմանալով և սիրելով  
զայն՝ որուն վարքն կարդաց, փա-  
փազի կամ ախորժի՝ անոր վրայ ա-  
մելի և նոր տեղեկութիւններ առ-  
նուլ:

Երկուքին միտքն ալ հանգչեցը-  
նելու համար է այս Յաւելուածս,  
և այսպէս կոչուած՝ վասն զի բուն

վարքն շատ տարի առաջ զրուած  
 էր : Այս սուրբս Ալոգիոս կամ Ա-  
 լոյիսոս՝ լատին եկեղեցւոյ ամենէն  
 աւելի հոչակած և սիրելի սրբոց  
 մէկն է , և բոլոր մարդկային աղզիս  
 մէջ գերմարդկային անձանց մէկն .  
 որ և տղայական հասակի մէջ սրբ-  
 բազան վարքով կատարուելով՝ մաս-  
 նաւոր պաշտպան սեպուած է ման-  
 կութեան և մաքրութեան վարուց :  
 Գրեթէ ամէն ուղղափառ եկեղեցիք  
 արևմտից մեծահանդէս կը տօնեն  
 և կը յարգեն այս սուրբս , բաղմօ-  
 րեայ նախապատրաստութեամբ և  
 նախատօնակօք . և բուն տօնին օրն՝  
 որ է յունիսի 21 , ամէն մէկ ժողո-  
 վրդապետական եկեղեցեաց ման-  
 կունք թափօրապէս կ'երթան յե-  
 կեղեցի ի պատիւ իրենց հասակա-  
 կից սրբոյն , կը հաղորդուին աս-  
 տուածային խորհրդոց , և եկեղե-  
 ցական պաշտամանց կատարելէն  
 ետեւ , իրենց դպրոցներուն մէջ ալ  
 կը պատուեն իրենց պաշտամանը՝  
 ներբողներով և երգերով :

Յիրաւի մեզի կատարելութեան

կենաց նախօրինակ և զաղափար  
 են՝ Քրիստոսի Փրկչին մերոյ և ի-  
 րեն ընտրեալ առաքելոց և անոնց  
 հետեւող հայրապետաց և վկայից և  
 ճղնաւորաց վարքն, բայց տղայ հա-  
 սակի դիմաց՝ անոնք բարձր կամ  
 հեռու բաներ կ'երևան. իրենց հա-  
 մար՝ դիւրաւ հասկանալի, եթէ չը-  
 սեմ ալ դիւրաւ հասանելի, օրինակ  
 մը՝ աւելի երենց հասակէն տալն  
 յարմար և օգտակար է. անոր հա-  
 մար արևմտեայք՝ որոնց եկեղեցին  
 այսպիսի դեռահասակ սրբութիւն-  
 ներով ալ զարդարուած է, զայս  
 սուրբս՝ իրրև ամենածաղիկ օրինակ  
 մը կ'ընծայեն իրենց մանկանց. ո-  
 րոնք այն հասակին վտանգաւոր  
 շարժմանց մէջ՝ այսպիսի հեզ և  
 քաղցր կառավար մը կամ խրա-  
 տող մը ունենալով, յօժարութեամբ  
 և սիրով կը լսեն խղճի ազդմանց,  
 և հասակին հետ՝ սրբոյն սէրն ալ  
 աճեցընելով բոլոր կենաց ալ բա-  
 րեխօս և պաշտպան կը բռնեն ըզ-  
 նոյն, և ջերմեռանդն հանդիսիւ կը  
 կատարեն անոր յիշատակն: Որուն

շատ հեղ ականատես ալ եղած է զրողս, և տեսած ծեր հասակներ ալ և սրբազան կարգի անձինք ալ՝ որ մանկական պարզութեամբ, այլ իմաստուն մտօք՝ այս մանկահասակ սրբոյս պաշտօնատար էին, և մեծ փափազով անոր մէկ նշխարիկն կամ պատկերիկն քովերնին կը պահէին:

Ո՞վ կը նայ տարակուսիլ՝ թէ այս պիսի ջերմեռանդութիւն մը իրեն դիտած նպատակին շատ յաջողութեամբ կը հասնի, քան ուրիշ հընարքներով. այսինքն է, տնկելու ի սիրտ մանկութեան սէր և ջանք մաքուր վարուց՝ Աստուծոյ վախոն և սիրոյն, և զզուշանալու ի փորձութեանց՝ որով լի է կեանքս և աշխարհքս, սկսեալ ամէն մէկուիր անձէն։ Անոր համար ալ աւելի պիտի չտարակուսի՝ որ այսպիսի վարք մը հոչակելն՝ քաղաքականօրէն ալ եկեղեցականօրէն ալ՝ մարդկութեան պարձանք և օգուտ պէտք է սեպուի. նախանձելի ըլլայ այն ազգն կամ եկեղեցին որ զսա կ'ըն-

ծայեցընէ երկրի և երկնից, նա-  
խանձաւոր ըլլայ այն ալ՝ որ իր մէջ  
ոնեցած չէ կամ յիշուած չէ այս-  
պիսւոյ մը վարքը, և յօժարաբար  
ընդունի՝ թէ չէ ուրիշ կերպով, զո-  
նէ իր տղայոց դաստիարակ և օրի-  
նակ կարգելով զանոր վարքն :

Մեր Հայոց ազգն ալ՝ զոր իրա-  
ւամբ կրնամբ ըսել թէ արևելեայց  
մէջ առաջին ծաղկած ազգն է եկե-  
ղեցական և բարեպաշտական հան-  
դիսիւք, և թերես առաւել քան  
զայլս՝ խոհական ընտրութեամբ ըն-  
դունած է ընդհանուր եկեղեցւոյ  
կարգեր, և աւելի ծանօթ է արե-  
մտեայ եկեղեցւոյ, ուր ալ որ աւելի  
մերձաւոր գտուեր է անոր՝ այս  
սուրբիս ծանօթութիւնն և պատիւն  
ալ ընդունած է. և արդէն ի պա-  
տիւնորա հայերէն աղօթքներ, զո-  
վեստներ և պատկերներ տպւած  
են: Այսպիս տղայական հասակի  
յարմար ծանօթութիւն մը զեռ տր-  
ըւած չէր, կը կարծեմբ, սրբոյս  
վրայօք. ասոր համար փափագեցի  
և զրեցի այս Գրքոյկո՞ աղղային

տղայոց կրթութեան վերակեցու  
դրուած տտենս , և անուանեցի Ար-  
մանութիւն Ս . Ալողիոսի , նուիրե-  
լով մանկանց Հայոց , զորոնք Գրի-  
գորիկ անուամբ կ'իմանայի . և հի-  
մայ զնոյն ի լոյս տալով տպագրու-  
թեամբ , կը յուսամ՝ որ գոնէ ա-  
սոր ընթերցմամբ այնչափ օգուտ  
ելլէ՝ որ այն դժուարին պաշտամանս  
թերութիւնն բաւականանայ ծած-  
կելու . իսկ աւելին՝ ի շնորհս Աս-  
տուծոյ , և ի վայելս սիրելի աղղիս .  
որուն ծայրագոյն օգուտն մտածե-  
լով աւելի երախտիք մը կը սեպեմ  
իրեն՝ օտար մը , բայց այսպիսի սըր-  
բազան օտար մը՝ ծանօթացընելն ,  
քան իրմէն և իրմէ մոռցուած դիւ-  
ցաղնազործ Տիղրան մը և Արմ-  
բատ մը : Եւ եթէ մէկն աշխարհիս  
պաղ պաղ՝ կամ հայրենեաց տաք  
տաք հովերովն ծեծուած՝ ծիծաղի  
բսածիս վրայ , ներէ՝ ինծի՝ որ եւ  
ալ անխոռով ժպտիմ իր վրայ :

Դառնանք հիմայ Արբոյն և մեղի  
հանդիպածին վրայ : Ս . Ալողիոսի  
նմանութիւնն զրելէս տասը տարի

ետեւ՝ համառօտ ժամանակ մը Հը-  
ռովմ զտուած ատենս՝ այց ելայ այն  
փանքին՝ ուր որ Առորքը իր կենաց  
ետքի տարիներն անցուցեր և աւան-  
դեր էր. իր վարուցը հետ՝ փափա-  
զելի էր ինձի ընծայել սիրողաց նաև  
իր նշխարքներէն. բայց զրեթէ  
սիոեր հատեր էին ասոնք, մնացածն  
ալ ամփոփուած է Ա. Իզնատիոս  
եկեղեցւոյն մէջ, և ալ չեն տար ու-  
րիշի. միայն մարմնոյն փայտէ տա-  
պանը կամ դերեղմանը կայ երկա-  
թէ վանդակով պատած և պահած  
եկեղեցւոյ մէջ. իսկ իր մատուռն՝  
Հռովմայական ըստած վարժարա-  
նին մէջ, ուր որ ապրեր էր սուրբն,  
և փափազելի ուխտատեղի է իր  
կրօնակցաց և բարեպաշտից, իմ  
զտուած ատենս՝ կիսաւեր էր, Հռով-  
մայ 1848ե խռովութեան ժամանա-  
կէն. պատարազի սեղանն ալ վեր-  
ցուած, որով ուխտաւորաց փա-  
փազն կիսակարօտ կը մնար:

Յաջորդ տարին աւելի բաղդաւոր  
եղայ, զտուելով բուն սրբոյն հայ-  
րենիքն, և իր տղայական հասակին

և սրբութեան հանդիսարանն , որ է Գասղիլիոնէ տեղէ Սղիվիերէ ըստած քաղաքիկը , Մանգուա քաղաքէն չորս ժամ հեռու : Բոլոր սահմանները զեռ սրբոյն անուամբն և յիշատակաւն կը հնչէին . բայց բնութիւն և սրբութիւն կարծես թէ իրարու հետ կը կռուէին . վասն զի ժամանակն որ երբեմն ուշ երբեմն շուտ՝ կ'ախորժի մարդկանց յիշատակները ջնջելու , հոս ալ իր աւերածու ձեռքովք խաղցեր էր . աշխարհային յիշատակարաններ՝ զետին ընկած էին , սրբութեան յիշատակն կանգուն էր անոնց մէջ և վրան : Գոնզակեան իշխանականց հարուստ պալատը տեսայ բոլորովին աւերակ ամայի երեսի վրայ ընկած , հազիւ քանի մը աշտարակ և պատ կիսականգուն մնացեր էին , վկայ մարդկային ունայնութեան . որոնց մէջ չի կրցայ զտնել այն սենեակն՝ ուր որ Ա . Ալոգիոս ծնած էր՝ ասկէ և ոչ 300 տարի առաջ . և իմացայ , որ մարդուս յիշատակարանը (թէ որ ոնի երկրիս վրայ )

իր մահարձանն է՝ և ոչ իր խանձարուրքն։ Պալատին զրսի եկեղեցին ալ՝ որ կը կոչուէր Ս. Սեբաստիանոս և Ս. Եսփրոսինէ, և միայն կանգուն մնացեր էր, այն ալ իմ այցելութենէս իրեք տարի առաջ (1848ին) կայծակէ զարնուած՝ մերկ ամայի մնացեր էր. և ինչպէս լսեցի՝ եկեղեցւոյն մէջէն 400 հոգի դուրս ելլակէն ժամիկ մը ետև՝ ինչած էր ամպոց կրակը, որուն անկոխ ճամբան դեռ ճաթըռտած պատերուն վրայ կ'երևար: — Այս ամբակէն ալ ելելով՝ ուրիշ աւերակ տեղ մը մտայ, որ է այն Ֆրանչիսկեան կրօնաւորաց վանքն, ուր Ս. Ալողիոս քանի մը օր կեցեր էր՝ իր հօրմէն հեռանալով. այս վանքս ալ, իր եօթնախորան մեծ եկեղեցին ալ՝ զրեթէ բոլոր աւերակ և երեսէ թողած էր. բայց ան աւերակ բնակարանին և պատերուն մէջ, որոնց մէջէն աղբիւր մը մօտիկ լեռներէն ինջած՝ տընտընալով կ'անցնէր, մէկ սենեակ մը միայն անաւեր մնացեր էր. սենեակ մը պըզ-

տիկ, պարզ, մէջը խորանիկ մը և  
քանի մը պատկեր . զրսուանց զռա-  
նը վերև մարմարիոն քարի վրայ  
այսպէս զրած է լատիներէն . « Այս  
» սենեակն է ուր սուրբն Ալոգիոս  
» Գոնդակա՝ զինքն հօրմէն վորն  
» տուած սեպելով, մարմինը խարա-  
» զանով ձաղկելով և աղօթքի ընկած  
» քանի մը օր անարատսրբութեամբ  
» բնակեցաւ . յամի տեսոն 1584 » :  
Այս պարզ սենեկին պարզազոյն  
ևս և սուրբ յիշատակը՝ շուտով մոռ-  
ցուց քովի և առջի աւերակաց տըխ-  
րութիւնը , և աւելի փափազ կը բե-  
րէր՝ զինքը միշտ անաւեր տեսնելու,  
քան զանոնք կանգնելու : — Այս  
վանքին քանդեալ եկեղեցւոյն մէջ  
նախ թաղուեր է սրբոյն երջանիկ  
մայրը Մ . Թանա , զոր հիմայ թա-  
ղուած զտայ քաղքին մայր եկե-  
ղեցւոյն մէջ , ուր որ իր սուրբ որ-  
դուոյն մէկ պղտի նշխարն ալ կը պա-  
հուի :

Բայց Ալոգիոսի ամենէն ցանկա-  
լի նշխարն պահուած էր բուն իրեն  
նուիրուած Ասն-Լուիճի եկեղեցւոյն

մէջ, զոր իր հարազատ եղբայրն  
 Ռոտոլփոս և իր աղզականներն շի-  
 նած և յետինք դարդարած են . բե-  
 մը և աւագ խորանը որ իրեն նուի-  
 րուած է՝ շատ զեղեցիկ և թանկ  
 քարերով շինուած է . ձեղունն ալ  
 նկարակերպ՝ սրբոյն վարուց պատ-  
 կերներով . որուն չորս անկիւնը  
 չորս պատկեր կայ, մէկն սրբոյն  
 ծնունդը նկարած, երկրորդն իր ա-  
 ռաջին հաղորդութիւնն, երրորդն՝  
 հօրմէն և յաշխարհէ հրաժարիլն,  
 չորրորդն՝ ի կրօնք մտնելն և Յի-  
 սուսեանց մեծաւորէն ընդունուիլն:  
 Խորանին ետին ազնիւ տապանակի  
մէջ պահուած է սրբոյն աստուա-  
 ծախոհ և մաքրամիտ զլուխը, զոր  
 և բանալով շնորհեցին ի յարգու-  
 թիւն և ի համբոյր փափազողիս .  
 պզտի գանկ մըն էր, բարակ ոսկոր-  
 ներով, որուն մէջ 25 տարի բնա-  
 կեցաւ այն քիչ հողիներէն մէկն՝  
 որ երկրիս վրայ երկնայնոյ մը պէս  
 անարատութեամբ ասլրեցան, չըդ-  
 գալով ախտաւոր և թանձր կըր-  
 քեր: . . .

Նոյն եկեղեցւոյն մէջ զանազան  
 խորանաց մէջ պահուած տեսայ ա-  
 պակիէ փեղկի ներքն՝ իրեք կուսա-  
 նաց մարմիններ, որ էին իրեք քորք  
 դստերք Ռոտոլփոսի եղբօր Ա. Ա-  
 լողիոսի, Զինցիա, Օլխմբիա և Կրի-  
 տոնիա. որոնք իրենց հօրեղբօրք  
 սրբակենցաղ վարուցը հետեւելով  
 քան թէ իրենց հօրը մեծութեանն,  
 աշխարհքիս փառքէն և իշխանա-  
 զանց առազաստներէն հրաժարած  
 ճգնասոն կեանք անցուցեր և սըր-  
 բութեամբ մեռեր էին, և մարմին-  
 նին ինչուան հիմա ամբողջ ան-  
 փուտ չորցած մնացած է, և յար-  
 գելի ըսուած երջանիկ հանգուցելոց  
 դասէն են: Ասոնք մէկ ընկերու-  
 թիւն մը հաստատած են վարժա-  
 րան կուսանաց Յիսուսի ըսուած,  
 Collegio delle Vergini di Gesù, որ ին-  
 չուան հիմայ կայ՝ այն եկեղեցւոյն  
 մօտ, և մէջը ազնուական կուսանք  
 կան պարզ ուխտով և առանց ար-  
 դելանի, որոնք աղջկանց դաստիա-  
 րակութեան կը պարասին, և մաս-  
 նաւոր կերպով մը պաշտօնատար

Ե՞ն Ա . Ալոգիոսի , որուն զանազան յիշատակներն ալ կը պահեն . ինչպէս են՝ մէկ ակռայն , անկողնին փայտերը՝ մեծամեծ ապակիէ տուփերու մէջ առած և եպիսկոպոսական կնքով կնքած , որուն մանր կը տորներն ալ փայտէ խաչերու մէջ անցուցած՝ կը բաշխեն փափազողաց . մէկ նամակ մը սրբոյն ձեռագիրն՝ իր եղբօրը զրած ի Միլան . խաչ մը՝ որուն դիմաց ինքն ալ իր հայրն ալ շատ հեղ աղօթեր են . իր խկական պատկերը՝ կրօնաւորութեանն ատեն նկարած , նաև իր տղայութեան դէմքն , նոյնպէս և իր ծնողաց և եղբօրն և անոր դստերաց պատկերներն , ամէնն ալ անոնց ատեն նկարուած :

Այս յիշուած անձանց մէջ՝ միայն Ռոտոլիոսին յիշատակը տիրարար էր . վասն զի յետ հաշտուելու Մանդուայի դքսին հետ՝ եղբօրը հընարքով , ինչպէս որ պատմուած է պատմութեան մէջ (82) չէ կըրցեր իր հարստութիւնը և փառքն վայելել . դարձեալ թշնամիներն ետեէն

ընկեր են . դժբաղդ իշխանն փախ-  
չելով ամենէն ամուր տեղ իր մօրը  
զիրկը զտեր է , և տղու մը պէս հոն  
ապաւիներ , բայց հոն ալ սպանուեր  
է : Զարմանալի և ահաւո՞ր դի-  
պաւած . ազնուագութ մայր մը , եր-  
կու որդւոցը մէկուն ուկորները կը  
զրկէ և կը համբուրէ իբրև սրբոյ  
նշխարք , մէկալը՝ աւազակի պէս իր  
զիրկը սպանուած կը տեսնէ , և ա-  
րիւնլրւայ կ'ըլլայ ծոցը , ուր որ ա-  
նոր շունչ և սնունդ տուեր էր : Այս  
երկու եղբարցմէ ո՞րն է երջանիկ .  
բաղդը ո՞ւր կը տանի . . . . .

Այս հարցմանս պատասխանը  
ընթերցողացթողլով , քանիմը քեր-  
դուածներ ալ զնեմք հոս , որ զա-  
նազան ատեն ի պատիւ նոյն սրբոյն  
գրուած էր , մասամբ ի զրօսանս  
անոնց՝ որոնց համար որ վարքն ալ  
զրուեցաւ :



ՅԱՂԹԱՆԱԿ

## ՍՐԲՈՅՆ ԱԼՈՅԻՄԵԱՅ

ՀՐԵՇՏԱԿԻ

Ի սկիզբն Երգոց առեք նըւագ յաղթա-  
կան :

Տէր . ով կացցէ ի խորանիդ սըրբու-  
թեան :

ԶՈՒՄՐԹՈՒՄՔ

Որոյ տնաղտ է սըրբութեց պատուհան ,  
Հայելի ջինջ սըրտին .

Որոյ ամբիծ վառի մարմին կուսական  
Ի ճաճանչա Անմահին :

ՀՐԵՇՏԱԿԻ

Ոյր ի բարձունս բիբք Երկնապիշք  
Լուծանէին յազու աւիշկ .

Աղցաւորաց գեղ խաքուսիկ  
Հզնա չեղիտ փառատենչիկ .  
Յաւերժական յուխտ երդմնակուռ՝  
Ելս եղ թեւել յովտէն տըխուր :

## ԶՈՒՄՐԹՈՒՄՔ

Սուրբ է վեհին տաղաւար,  
Եթերաձեմն աղաւնեաց հեշտ դադար .  
Աստղաձաձանչ ծիրանի  
Ի լերին Տեառն եւ ի բըլեր կընդըլիկ :

## ԱԼՈՅԻՍՈՍ

Փըրկիչ իմ Տէր , սիրող սըրտից մաքրու-  
թեան ,  
Հիւծիմ սիրովդ անձկակարօտ .  
Տապիմ տըռփիւ մըտից յարկիդ հան-  
դըստեան ,  
Զոյր ըզգաւիթ դիտեմս աղօտ :

Քանզի Ճնճղուկ եղիտ իւր բոյն վարա-  
նաց ,  
Եւ տատրակին տըռւաւ տընակ .  
Եղունք վայրիք ի զով ակունս աղբերաց  
Շիջուցանեն զիւրեանց պապակ :

Անձնիմ խոնջեալ՝ ըզկազգուրիչն հովանի  
Ըղձայ զերկնից հովանոցաց .  
Ծարաւահիւծ հարցանէ զուխ Սիովիսի  
Ի տապ երկրի խորշակագնաց :

## ՀՐԵՇՏԱԿԻ

Գայցէ ի յարկս իւր սիրելին  
Յաւիտենից կազմեալ նըմին .  
Գայցէ զուարթունըն մահացուաց  
Վւոյիսոս՝ զոյդ հրեշտակաց :

## ԱԼՈՅԻՍՈՍ

Տաժանտիր հոգւոյս ընկեր  
Յօրհասական զոփայ յերեր .  
Այլ սիրաս արթուն առաւոտէ  
Ուր անձկալի փրկիչն իմ է :

## ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Երկնաշու շաւղաց ընթացք սիրաձեմ  
Թեթեւք են թեթեւք թափանց եւ վը-  
սեմ .

Ալուեակ , մերկեա զթեւըս քո հողեալ ,  
Եւ ազատ ձեմիմք յօդըս սրբափայլ :

Երկրաւոր ուղւոյն  
 Ընկեր անքաժան ,  
 Քեզ յաւերժ ողջոյն ,  
 Ճըդնասուն իրան .  
 Աչք իմ ցողախիտ  
 Զըղջութեան ի լաց ,  
 Խըցէք արդ զաղիդ  
 Ռւղիս աղբերակաց .  
 Փըրկչին օրհներգու  
 Բերան սըրբասէր ,  
 Դադարեաց եւ դու  
 Շուրթն իմ աղօթկել .  
 Խոնջեալ դու կամար  
 Ի ձիգ տարածմանց ,  
 Անկի՞ր ի խոնարհ  
 Կըթուտ արմըկանց .  
 Երերկուտ մատունք՝  
 Խաչին նըշանաւ  
 Զինեալք աննըկունք ,  
 Վաստակոցըդ բաւ .  
 Գետնախըշտի ծունկք  
 Տեռեալք ի ճըդանց ,  
 Խարիսխք զաղփաղփունք՝  
 Զերծջնք ի բեռանց :

Աղջախո՛հ մարմին ,  
 Մտանեալ չարագան  
 Խիստ խարազանին ,  
 Լըւացեալդ յարեան ,  
 Ի կըսկիծ ձմերաց  
 Անդամք սառնորակ ,  
 Հանդիստ դամբանաց  
 Տըւեալ ձեզ երադ :

ԴԵՄՔ ՄԱՐՄՆՈՑՆ

Ընկեր վեհափառ  
 Հողոյս ապիկար ,  
 Ուղղեցոյց եւ ղեակ  
 Հոդիդ փայլունակ ,  
 Քեզ ցարդ դիւրանսաց՝  
 Վըշտըմբեր կենաց  
 Իբր ըստրուկ ամոք  
 Փորձ առի ցաւօք .  
 Թողեալ մըտադիւր  
 Էղգահոյից դիւր ,  
 Զյարկս սսկեձեղուն ,  
 Ծառայս ընդասուն ,  
 Լզսերճ ծիրանի  
 Հարեալ ըղգեանի ,  
 Լզուք մարտադիր  
 Զհայրենեան երկիր ,

Նըժդեհ տարադէմ  
 Ի խըճիթ նըսեմ  
 Յաշխարհի փայլմանց  
 Սարտուցեալ ի բաց .  
 Ի մութ թախծագին  
 Նըստայ ի խըճթին :  
 Արքայից դարպաս  
 Խընջոյից ըսպաս  
 Պատրաստ էր ինձ միշտ ,  
 Չըկայր ուստեք վիշտ .  
 Յիս դասք փարազանց  
 Բերէին նախանձ .  
 Տեսեալ զիս կուսանք  
 Երանէին ցանկ :  
 Այլ զի քաղցր էր քեզ  
 Վեճակ դըծուծ հեզ ,  
 Զանդամս իմ քընքուշ  
 Հարի քըստմնափուշ ,  
 Եւ ըզսիրտ մատաղ  
 Խիստ խըճիդ ի խաղ :  
 Չորաբեկ պատառ  
 Ըզքաղց իմ եհար .  
 Չափով արբի ջուր  
 Յարտասուաց փըրփուր .  
 Յանկողնոց փափուկ  
 Վազեալ խուսափուկ

Ագահեցի զքուն  
 խըշտեաց կարծրագոյն .  
 Ինձ մազ եւ փսիաթ  
 էր բազմոց եւ զարդ :  
 Յաշացըս դիտակ  
 կարդեցի պահնակ .  
 Ըզգեղ աշխարհի  
 իսպառ ոչ տեսի :  
 Եւ այս վեշտասան  
 Արեւու շըրջան՝  
 Լըլկեալ յերաշխէալ  
 Չարչարեցայ ստէալ .  
 Եւ ոչ անհամբոյլ  
 Եղէ քեղ հրապոյլ  
 Հոգւոյդ հակառակ  
 Գոլ չարեաց դըտակ :  
 Եւ հեղոյս հըլու՝  
 Ճամ մի դիւրի դու  
 Չըլացար ցայս օր  
 Ցայս ժամ որդաւոր :  
 Եւ արդ անողոք  
 Թողուս զիս անոք .  
 Չիս չարչարազգեաց  
 Ի պարէն ճըճեաց :  
 Թէ քեղ էի բեռն՝  
 Երկիր զիս հակեր .

Արդ յերկին դիմես  
 Յանվիշտ ի վայելս:  
 Օ՞ն, երկայնաւուրց  
 Վըշտաց ինձ տրիտուրո ,  
 Երկնաչու հոգի ,  
 Ա՛ռ բարձ զիս աստի .  
 Մի՛ թողուր ի յերր  
 Զանձկալիդ ընկեր .  
 Ճըդանցդ եմ հաղորդ ,  
 Ուերկնի ռահահորդ .  
 Է՞ր ոչ եւ փառաց՝  
 Որ ինեւս աճեաց .  
 Ընդէր վիշտք ի կեանս ,  
 Ու անարդանք մահուանս .  
 Զիանդրդ յանձկալոյս  
 Մընամ բացագոյնս :  
 Սուր բաժանարար ,  
 Յայս զօդ սիրաբար  
 Մարմնոյս ընդ հոգւոյ՝  
 Մի՛ հարցես աղդոյ :

## ՀՈԳԻՆ

Ճըդնասուն մարմին  
 Ընկեր իմ հնազանդ ,  
 Հրաւերն երկնային  
 Խնդրէ զքո աւանդ .

**Հոգիս յԱստուծոյ**  
 Եկն ի յԱնմահէ ,  
 Յակն աղբերն իւրոյ  
 Դառնալ փափաքէ .  
**Մի քեզ ծանրացի**  
 Հողոյն պահարան .  
 Դու ելեր անտի ,  
 Դարձցիս արդ առ այն :  
**Իմ ի քեզ զըտեալ**  
 Իբրու փորձ ոսկեակ ,  
 Ի կայս լուսափայլ  
 Ըողսողեմ սըրբեակ :  
**Բայց մեք միւսանդամ**  
 Լեցուք մեք լնկեր ,  
 Ի կեանս անթառամ  
 Փառաց անեղեր .  
**Փարիլ ըզմիմեամբ**  
 Յետ պանդըխտութեան  
 Ի գիւտ մեր ողջամբ ,  
 Եւ կեալ յաւիտեան :

## ՄԱՐՄԻՆ

**Հրաժեշտ ցաւագին**  
**Հոգւոյդ երկնային .**  
**Հարից անբամբաս**  
**Եւ զյետինս ըստաս .**

Պարտք անդարձական  
 Որդւոց ադամեան .  
 Ես կացից ի քուն  
 Հուալ յոչընչութիւն .  
 Մինչեւ հրաշագործ  
 Նորոգիչն հանուրց  
 Յարուսցէ զիս նոր  
 Ի կերպ երկնաշնորհ :  
 Դու հոգեակ՝ դարձիլ  
 Յոր յարն անձկայիր՝  
 Յաւերժ ի հանդիստ ,  
 Հրեշտակաց ի նիստ .  
 Դարձ առ հանդիստ քոյ  
 Ի գիրկս Աստուծոյ .  
 Ե՛րթ դարձ առ քո սեր  
 Հոգի՛ սըրբասեր :

### ԱԼՈՅԻՍՈՍ

Զայնըն կենաց հընչի սըրտիս յանդաս-  
 տակ .  
 Եհաս կոչող, հաս անջատմանն հրաւի-  
 րակ .  
 Թաքչի երկիր ցաւոց յաչաց հողեղին .  
 Սանդուխք լուսոյ յերկրէ յերկին ձը-  
 գեալ են ...

163

Չե բուռըն մահ , զի սէր՝ մահու բըռ .  
նագոյն

Առեալ ըզսիլտս՝ հանե ի կայս դերա .  
գոյն : . . .

Ոչ եւս մարմին . . . վառի հոգիս ի հուր  
սէր . . .

Սէր ընդհանուր ծաւալ . . . Օրհնեանձն  
իմ ըղՏէր . . .

1840



## ԱՆԵՐՍ ՄԱՆԿԱՆՑ

ԱՌ Ա · ՄԱՆՈՒԿՆ ԱԼՈՅԻՍՈՍ



Ո՞վ մանուկ սուրբ Եւ պայծառ ,

Հասակաւ մեղ հաւասար ,

Վարուք՝ զուարթնոց զուդապանձ ,

Հողաղանդուած քերովբէ .

Վասըն կենաց քոց անյանց

Պատուեալ յերկնից Եւ յերկրէ .

Բարեխօսեան վասըն մեր

Ալոյիսէ սըրբասէր :

Որ ընթացար միշտ ուղիղ

Ըղկենցաղոյս թիւր շաւիղ ,

Եւ սուրբ տղահեալ զպատմուճան

Աւաղանին հոգեւոր՝

Պէսպէս զարդուք լաւութեան

Փայլեցուցեր նորանոր .

Բարեխօսեան վասըն մեր

Ալոյիսէ սըրբասէր :

Որ ընդ մոխիր քըրձապատ

Եկեալ մարմնովդ անարատ՝

Յանբըծութեան խրդին քում  
Ընդ հարուածովք վըշտըմբեր  
Խըրեւ դահիճ ասպառում՝  
Յարտօսր յարիւն զայն թացեր.  
Բարեխօսեա, և այլն :

Որպէս մըշակ փութաջան  
Դու ի սըրտիցս անդաստան՝  
ԱՌկ ըզսերմանս ուղղութեանց,  
Զորոց յերկինս արդ ունիս  
Զըշտեմարանս եւ ըզգանձ,  
Բարդաւաճել ըզհոգիս :  
Բարեխօսեա, և այլն :  
Նախ քան զամէն բարի՝ տուր  
Ըզսիրտ ու աչկունս քո մաքուր .  
Ըզկամս մարմնոյ ապրուտամբ  
Եւ ըզհրապոյրըս չարին  
Մեռուցանել տուր ողջամբ  
Յանուն ֆրկչիս եւ կուսին :  
Բարեխօսեա, և այլն .

Եւ անըզգաստք կամ թէ հեղդք  
Դիմեմք ի չար ինչ եւ մեղք ,  
Յայնժամ աղդեա սըրտից մեր  
Զարքայութիւն եւ դեհեան ,  
ԸզՏեառն, ըզՄօրն, ըզքո սէր ,  
Ըզհատուցմունս անվախճան :  
Բարեխօսեա, և այլն :

Թէ մեղաք՝ Եմք դեռ մանկունք  
 Վասն հայցուածոց Են շըրթունք .  
 Քեւ ըղութաիցըս պասուք  
 Արեցուոցէ սուրբ Հոգին .  
 Եւ ջերմն աչացս արտասուք  
 Քեւ շարժեսցէ զգութ Փրկչին :  
 Բարեխօսեա վասըն մեր  
 Ալոյիսէ սըրբասէր :  
 Տուր՝ քեզ նըման գոլ հըլու ,  
 Ու անանց բարեաց խուզարկու .  
 Յուղութեանց քոց գոնեա մին  
 Անջինջ ի մեզ հարցէ կնիք .  
 Լիցուք՝ թէ ոչ գլխովին՝  
 Գոնեա միովն Ալոսիկք :  
 Բարեխօսեա վասըն մեր  
 Ալոյիսէ սըրբասէր :



## Ի ՅԻՇԱՏԱԿԻ

### ՍՐԲՈՅՆ ԱԼՈՅԻՍԵԱՅ



Սիրեմ ես զօրն երանեակ  
Որ յիշէ զիմն Ալուեակ,  
Հըռչակելով յերկրի տօն  
Զառաքինւոյն գերըզգօն :  
Ոչ այնքան բարձր արեգակն  
Յիւրըն Ճախրէ սլարունակ  
Այսօր՝ քան զայլ ամէն օր \* ,  
Որքան իմ սուրբ շնորհաւոր,  
Զեռն ի սիրոյն միջալար ,  
Բարձր ի սրբոց խեկ կամար :  
Վեհ յերկրի վեհ եւ յերկինս ,  
Մոդէ զներքինս եւ վերինս .  
Աստուածութիւն եռադէմ  
Ի հոգւոջ անդ սրբաձեմ  
Պայծառափայլ զիւր տիպար  
Դրօշմեալ դիակ սիրաբար :

\* Օ՛՛ աշխատաբին է 21 յունիսի :

Այլ ազք եւ միտք իմ յասուշ  
 Կալ դէտ դիմացն այն քընքուշ,  
 Շլացեալ հայիմ գետնակոր .  
 Եւ գըտանեմ հրաշըս նոր .  
 Մանուկ տիօք անաւագ՝  
 Ծընեալ ի բատտ բարձրունակ ,  
 Ըզպերձութիւն եւ զաշխարհ  
 Զամէն գըրէ արհամարհ .  
 Խոնարհագոյն բընաւից  
 Համարի՝ զանձն իւր սմբիծ :  
 Ոչ անհըմուտ աշխարհի ,  
 Այլ հըմտագոյն եթերի .  
 Եւ վաճառէ զամենայն՝  
 Ի սէր միոյ լոկ ուլան ,  
 Յիսուսաւանդ մարդարանին ,  
 Որով երկինք հայթհայթին .  
 Առնու սիրով լուծ ընդ ուս  
 Զոր արկն հեղոյ՝ հեղն Յիսուս .  
 Երթայ նըստի մենագին  
 Մըխ<sup>օ</sup>ի խորհուրդս երկնային .  
 Եւ բախէ զսիրտն անընդհատ ,  
 Եւ հառաջէ սըրտահատ ,  
 Եւ մընչէ հեղ եւ լըուիկ ,  
 Եւ ցողէ դառն եւ քաղցրիկ :  
 Քանզի սկանդուխտ է յերկնից՝  
 Համարի զայն անձին բիծ .

Եւ արտասուօք հանասլաղ  
 Որ 'ի սըրտեն սիրավազ՝  
 Կամի լուանալ զիւր աման .  
 Եւ զի նա ջինջ է համայն .  
 Յանդուլ տեղոյ տարտիլին՝  
 Մաշի անօսրըն մարմին .  
 Այլ եւ զայն ոչ գըրէ շատ .  
 Ո՛վ սիրոյ հնարք անձնադատ .  
 Ինքնին զինի սէր փափուկ  
 Քան ըզդահիճ չարաշուք .  
 Առեալ խայթող խարազան  
 Կոծէ զիրան սըրբազան .  
 Եւ վարդակաթ ճապաղիք  
 Չըքնաղ զամէն քան ծաղիկ .  
 Հոյլ հոյլ հոսեն ի լանջաց  
 Եւ ի յուսոց ճըգնազդեաց :  
 Քանզի արկեալ դամ մի զաչա  
 Տեսեալ ըզծէլն իւր ի խաչ,  
 “ Աստուած մեռաւ , ասէ ՚նդ իմ .  
 Եւ պատճառք՝ մեղքն ոխերիմ .  
 Ո՛հ , պարտական եմ մեղաց ,  
 Եւ ընդ մահու քո Աստուած . . .  
 Եւ քան ըզհուսկ կենաց մահ  
 Կանխէ կամօք զանձն ի մահ .  
 Ազդ ազդ կատէ զիւր մարմին  
 Որ չըմեղաւն ինչ նըմին .

Ու որչափ հեծէ նա ի ցաւս  
 Հոգին հարու ծափ ի ծափս :  
 Եւ արտասուքն ըսպիտակ  
 Ամբըծութեան նըշանակ  
 Որպէս շուշանք շողաշար  
 Ի խաղս առուաց հեղավար՝  
 Խառնին յարիւն վարդագոյն,  
 Զոր ծընանին զըղջութիւն .  
 Այլ չիք չարեաց ի նմա փուշ .  
 Ամենեւին է ն' անուշ .  
 Եւ երկոքեան սուրբ վըտակք  
 Իբրեւ գետոց օժանդակք,  
 Մին ըսպիտակ միւս կարմիր  
 Զուգեալ վիժեն ի յերկիր .  
 Ու որքան կայլակք ի վայր գան  
 Այնքան ծաղկունք ամբառնան  
 Հիւսիւ սլրսակ յերկնից ծոց  
 Ի կաթողին զըւարթնոց ,  
 Որք թացեալ թեւս յայն առուեն  
 Եւ առ Յիսուս ցուցանեն :  
 Գըթան երկինք բովանդակ .  
 Կոչէ Յիսուս զիւրն որդեակ .  
 Եւ ոչ այնքան սիրավիր  
 Խնամող հրեշտակն իջեալ ժիր  
 Զհոգի մանկանն այն երեր  
 Ու ի հողեղէն ամանն յեռ ,

Որքան զամանն այն յօժար  
 Արդ բեկանէ սիրահար ,  
 Եւ արձակէ զհոդին այն՝  
 Ընդ որ ինքնին հրաշանայն .  
 Խոստովանեալ աննախանձ  
 Ըզսանն՝ ինքեան զուգապանձ ,  
 Եւ քան զիւր թեւս իսկահուր  
 Ըզնա լինել սիրասուր .  
 Որ իբրեւ փայլ փայլական՝  
 Հատեալ յերկրէ բացական ,  
 Ի մի քըթիթ յերկնի ծայր  
 Ու ի բարձրագոյն եհաս վայր .  
 Զիարդ հողոյ տարր անարդ  
 Տանէր զհոդին գերայարդ .  
 Զիարդ մանուկ մ' ապիկար  
 Գոյր սրովեկից հաւասար ,  
 Եւ մըտանէր կայր անկէզ  
 Յաստուածային հուր պարտէզ : . . .  
 Ո՞վ բարձրամիտ մահացու ,  
 Հասե՞ր երբեք այս բարձու .  
 Դու որ յուզես լայն զեթերս ,  
 Եւ զանդընդոց խոր ընդերս ,  
 Քանի՞ արդեօք աստեղց լոյս  
 Յարեգական հասցեն յոյս .  
 Ո՞րքան , ասա , պիախ հուր  
 Զայսգոյն վառել սիրտ մաքուր .

Անբըծութիւն որքանի՞  
 Կըշիռ միոյս այս լինի: —  
 Իսկ ես երկնից չեմ հասու  
 'Նըժդէ հ հովախս մահացու .  
 Զարմունկներ եղեալ ի գետին  
 Պըշնում միայն ընդ երկին .  
 Եւ որոճեմ զյիշատակ  
 Զոր աստ թողեր Ալոսեակ ,  
 Եւ ի նոսին սըխրանամ,  
 Ճարակիմ ու ոչ յագենամ:  
 Սիրեմ եւ ես սերտ ըղքեղ  
 Հետիս՝ սիրոյդ յասպարէղ .  
 Ո՞հ , չունիմ սիրտ քեղ արժան ,  
 Այլ սերս այս չէ անարժան .  
 Չեղէ այս քեղ նըման .  
 Սակայն այսոց ետու ձայն ,  
 Եւ բերի զքո սեղանով  
 Սիրալս մատաղըս սիրով .  
 Եւ յառկայծեալն իմ սկարոյդ  
 Լուցի լապտերս քաջառոյդ:  
 Ես իսկ անցի 'նդ դաշտ եւ գետ  
 Ի քո դաւառ ըղձահետ ,  
 Զասառւածասուի քո գըլուխ  
 Համբուրեցի սըխրաբուխ ,  
 Եւ զերկնունակ քո նըշխար՝  
 Ետու մանկանցի իմ աւար : . .

Խակ այսօր կամ տարտդէմ  
 Յերախաննէն զոր սիրեմ,  
 Ծով եւ ցամաք լեաւն եւ գետ  
 Ընդ իս եւ իմսն՝ անջըրալետ .  
 Եւ միայնակ քո զանունս  
 Հընչեմ յօտարս ինձ ափունս : . . .  
 Սակայն դու մերձ կաս առ իս  
 Մերձ եւ իմոցը բերիս :  
 Ե՞ն ե՞ն ի տան իմ մանկունք  
 Ինձ եւ յաւետ քեզ սիրունք ,  
 Զի մերձաւորք հասակաւ  
 Մերձ եւս սըրտից տեսակաւ .  
 Որք արդ պատուեն ըղքո տօն ,  
 Քո պէս ցանկան դոլ ըզգօն .  
 Աըփուեն սիրով քեզ ծաղկունս  
 Ըզսըրտից կիրս անուշունս .  
 Նըւիրեն ուխտըս պէսոպէս ,  
 Զի հաճութեամբդ հաստատես :  
 Հանդիր ի տուն՝ ուր սանք իմ ,  
 Ընկալ զաղերս մըտերիմ .  
 Միոյ միոյ նոցա տուր  
 Զայն քո շընորհըս մաքուր ,  
 Զոր բերէիրդ յամոըն յայն  
 Յոր օրաքանչիւր արդ նոքայն :  
 Խակ ինձ՝ որ անդր ըստ քո տիս ,  
 Եւ սեաւս ունիմ ի սըրտիս ,

Ու այսօր հատեալ ոստ վայրի  
 Ի պարտիզէս՝ որ խամրի .  
 Արկանեմ յայն ճանապարհ՝  
 Զոր քո սիրէ գարշապար ,  
 Ինձ ի՞նչ հանցես ի պարդեւ  
 Որ ճահ կըշոի արդարեւ : —  
 Ինձ՝ մասն հանցես զարտասու .  
 Պատուէ զարտօսը՝ եւ Յիսուս :  
 Արդեօք եւ քոյդ պատմուճան  
 Ոչ էր այնքան հրաշազան ,  
 Թէ արտասուաց մարդարիա  
 Զայն չանկանէր խիտ առ խիտ :

1852

Հ. Դ. Ա.

